

ԼՈՒՍԱՐԶԱԿ

ԿԱԶՄԵՑ ՍՏ. ՄԱՆՈՒԿՅԱՆ



491.99

U-28

Գ. ՏՄՐԻ

001 491.99-8
1568 15-28

198 MAY 2010

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ОБОЗНАЧЕНИИ
Академии Наук
С. С. Р.


Հ Ո Ւ Ս Ա Ր Ձ Ա Կ

ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՊՐԱԿ Բ.

Կ Ա Ձ Մ Ե Ց
Ս Տ. Մ Ա Ն Ո Ւ Կ Յ Ա Ն

(Վ.ՐԴ ԲԱՐԵՓՈՒԱՆՆԵ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ)



40-18500

25 JUN 2013



Հր. № 1031: Դրանակվար № 2290 (բ): Տիրաժ 15000:
Պետհրատի առաջին տպարանի Վաղարշապատում:
Պատվեր № 132:



60231.67

89. Բամբակազտիչ գործարանում

Ջին, ջին, ջին, ջին,

ես բանի՞ ջին...

ես տան միջին

մի մեքենա,

մի աժդահա՝

դունչը ծռած,

բերանը բաց:

Կլանում ե իր բերանով

են բամբակը հնդով, կեղտով,

կլանում ե, վերե տանում,

Հունդ ու կեղտից մաքրում, զտում:

Ու մաքրում ե բամբակն արագ,

վոր թել մանեն հաստ ու բարակ,

թելեր մանեն չթի համար,

հնդից շինեն քուսպ ու ոճառ:

ՀԱՐՑԵՐ

— Խոչընդես են բամբակը մշակում ձեր գյուղում:

— Խոչ են գործում բամբակից ձեզ մոտ:

— Վերջին հեկտար բամբակ եր ցանված այս տարի ձեր գյուղում:

— Ո՞ւմ հանձնեցին գյուղացիները հավաքած բամբակը:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

— Եթե ուրիշ գնացեք բամբակազտիչ և տեքստիլ գործարանները, չեթե ձեզնից մոտ կա:

90. Տեքստիլ գործարանը

Պիոններ Նինելին շատ եր հետաքրքրում, թե ինչպիսի տեղ է տեքստիլ գործարանը։ Ամեն առավոտ, չերբ հեռվից փչում եր շշակը, իր մեծ քույր Սիրուշը վեր եր կենում ու գնում եր գործարան։

Սիրուշը մի քանի անգամ Նինելին խոստացել եր տանել և ցույց տալ գործարանը, բայց միշտ ել հետաձգվում եր։

— Ազատ ժամանակ չի լինում, — ասում եր նա, — իսկ գործի ժամերին չի կարելի։

Բայց ուրիշ կերպ պատահեց։ Նինելենց պիոներական կոլեկտիվը մի որ գնաց եքսկուրսիա դեպի այդ գործարանը։

Գործարանի վարպետներից մեկն ուղեկցում եր պիոներներին և բացատրում։

— Նախ մտենք այս չերկար շենքը, — ասավ նա. — տեսնում եք՝ ինչքան շատ լուսամուտներ ունի իրար մոտ-մոտ և մեծ-մեծ։ Դա նրա համար ե, վոր լույսը առատ լինի։

Պիոներները մտան ներս։

— Այ, այս մեքենաները վոր կան, սրանք դադգյահներ են կոչվում։ Տեսնում եք իլիկները։ Այստեղ կտորեղենի համար թել են մանում։ Ուզեն՝ թելը բարակ կմանեն, ուզեն՝ հաստ։

— Բայց վորտեղ են գործում. — հարցրեց մի անհանգիստ պիոներ։

— Յես ձեզ հիմա հենց այդ բաժանմունքն եմ տանելու. — ասավ վարպետն ու առաջ անցավ։

Հասան գործելու բաժանմունքը։

— Այստեղ արդեն պատրաստի թելից գործվածքներ են անում, — ասավ վարպետը. — Տեսնում եք մեքենաների այն մասը, վոր սանրի ձև ունի։ Այդ սանրի մասերի արանքով մեկական բարակ թել ե անցկացրած, վորպեսզի չխճճվին միմյանց։ Իսկ այն մաքուրը, վոր կարի մեքենայի մաքուրի նման ե, բայց մեծ, անցնում ե թելերի միջով մի անգամ, հետո լետե դառնում, ելի չե գնում, ու այսպիսով կտորը գործվում ե։

— Բա չերբ վոր մաքուրը լետ ե դառնում, թելը չի քանդվում. — հարցրեց մեկը։

— Վոչ, — պատասխանեց վարպետը. — Յերբ վոր մաքուրը մի թել ե անցկացնում այդ չերկար թելերի միջով, նրանք իսկույն շարժվում են. վերևի շարքը վար ե իջնում, իսկ վարի շարքը չերնում ե վեր։ Յեվ այսպես շարունակ։

— Հա, բացականչեց մի գյուղացի պիոներ. — այնպես, ինչպես մենք պարսատիկ ենք գործում։

— Այո, ճիշտ այդպես. — ասավ վարպետը։

Պիոներներն ուշադրությամբ լսում էին և իրենց հուշատետրներում գրում տեսածների մասին։

Յերեկոյան Նինելն ինքն եր ուրախ-ուրախ պատմում Սիրուշին գործարանի մասին և ծիծաղում։

ՀԱՐՑՆԵՐ

— Վճրտեղից ե ստանում տեքստիլ գործարանն իր հում նյութը։

— Ո՛ր ե ուղարկում գործարանը պատրաստի ապրանքը։

— Ո՛ւմ միջոցով ե այս փոխադրությունը կատարվում։

Դյուլըր Բադախին Երվանքում Երվանք, Բադախ գյուղին՝ պատրաստի ապրանք։

91. Թղթե տոպրակի պատմությունը

Զիթը մի ժամանակ գտնվում եր գեղեցիկ ու թանգազին ճոթեղեն ապրանքների մի մեծ խանութում, բարձր դարակի վրա։

Մի գյուղացի կին ներս մտավ ու վառ գույներով չիթ պահանջեց։

Զիթն այն ժամանակ շատ վառ գույներ ուներ. նրա վրա նկարված էյին մեծ-մեծ վարդեր։ Յերբ չիթը ցույց տվին նրան, նա իսկույն հավանեց ու գնեց։

Հետևյալ օրը չիթն արդեն գյուղումն եր. չիթը դրին սե-

դանի վրա, մկրատով կտրտեցին մեծ ու փոքր կտորների և ապա շոր կարեցին:

Սկզբում այդ շորին տերը շատ լավ էր նայում. հագնում էր միայն կիրակի և տոն օրերին, կամ հյուր գնալիս:

Բայց այդ յերկար չտևեց. նա հետո սկսեց ավելի ու ավելի շուտ-շուտ հագնել ու մի օր էլ այնպես կեղտոտեց, վոր ստիպված չեղավ լվալ տաշտակի մեջ: Լվալու ժամանակ ինչպես եր անգուլթ կերպով ճգմում չիթը, հուպ տալիս, սղմում, նորից բացում, նորից ճգմում, նկարագրել չի կարելի:

Բայց այդ դեռ բավական չէր, դրանից հետո չել դրեց տաք հարթուկի տակ ու սղմեց: Այնուհետև ամեն շաբաթ կրկնում էր նույնը:

Վոչինչ չէր մնացել չիթի վրա. գուցնը խուճացել էր, ծաղիկներն այլևս չէին յերևում, տեղ-տեղ էլ թելերը կտրտվել էին: Վերջը տերը այս չիթն այլևս չէր հագնում. նա դարձավ մի հասարակ փալաս, վորով փոշի էլին մաքրում, ամաններ սրբում: Քիչ անց դրա համար էլ անպետքացավ, և չիթը դեն չալրտեցին:

Նա ընկավ մի ցեխոտ տեղ. մարդիկ նրան վոտքով տրորում, անցնում էին:

Բայց ահա մի օր մի յերեխա տոպրակն ուսին գալիս է, կանգնում չիթի մոտ ու նայում: Հետո նա ձեռքը մեկնում է, բռնում չիթի ծայրից ու դուրս քաշելով ցեխից՝ հանում է ու զցում իր տոպրակի մեջ:

Ինչ ասես, վոր չկար այդ տոպրակում. յերկաթյա ժանգոտ մեխ, թիթեղյա աման, կոտրած պալտ, անպետք կաշվի կտորներ և այլն: Յերեխան այդ իրերը բերեց մի փոքրիկ խանութ: Այդտեղ տոպրակը թափ տվին և չիթը բաժանեցին մյուս իրերից նա ընկավ փալաս-փուլոսով լցված քսակի մեջ:

Միքանի օրից հետո չիթի կտորտանքն ուղարկեցին բարձր ծխնելուղներ ունեցող մի մեծ շինություն: Այդ թղթի դործարանն էր:

Այդտեղ մի մեծ սենյակի մեջ դատարկեցին քսակը և

սկսեցին ջուկել չիթի փալասները մյուսներից, ապա չիթի փալասներն սկսեցին տնաղել, կոճակները և ավելորդ մասերը կտրել, հեռացնել: Հետո ածեցին մի մեծ արկղի մեջ:

Կտորները թափ էլին տալիս և հեռացնում նրանցից բոլոր անմաքրությունները: Դրանից հետո բոլորը յեփեցին կաթսաների մեջ: Կտորները մաքրեցին ու սպիտակեցրին բոլորովին:

Այդտեղից վերցրին և ածեցին տաք ջրով լցված մի ամանի մեջ ու սկսեցին այնպես արագ պտտել, վոր չիթն այլևս նման չէր կտորների, այլ դարձել էր փոքրիկ թելիկներ. հետո այդ թելիկներն էլ քայքայվեցին, և ամանի մեջ առաջվա կտորների տեղ առաջացավ մի կիսահեղուկ զանգված:

Դրանից հետո չիթի կտորներն սպիտակ թղթի մի թերթ դարձած՝ նստած էլին իրար վրա դարսված թղթերի գլխին:

Բայց ինչպես կիսահեղուկ զանգվածից թուղթ դարձավ:

Բանից դուրս է գալիս, վոր կիսահեղուկ զանգվածն ածում են մի մեքենայի մեջ, իսկ այդ մեքենայի մյուս կողմից դուրս է գալիս թղթի շերտը: Ստացված թուղթը փաթաթվում է գլանների վրա. հետո կտրտում են հավասար մասերի և թոփերով դարսում:

Գործարանից թուղթն ընկավ մի մեծ խանութ: Այստեղ կալին շատ տեսակ-տեսակ իրեր՝ գրչածալր, մատիտ, գրչաման, տետրներ, գրքեր, թանաքամաններ՝ ամեն տեսակի և գնի: Այստեղ էլ թուղթ դարձած չիթը յերկար չմնաց: Մի փոքրիկ աղջիկ յեկավ, գնեց նրան միքանի ուրիշ թերթերի հետ և տարավ: Տանը շինեց մի տետր և սկսեց գրել:

Գրում էր նա մեծ յեռանդով: մի շաբաթ չանցած՝ ամբողջ տետրը նա արդեն լցրել էր: Այդտեղից էլ թուղթն ընկավ կրկին խանութ: Փոքրիկ աղջիկն էլ նրան ծախել էր խանութպանին արդեն իբրև փաթաթելու թուղթ:

92. Ինչ պատմեց կաշին

Կոշկակար Սեթոն կարում եր՝ կուացած սեղանի վրա, իսկ նրա փոքրիկ տղան՝ Լևոնը զարմանքով նայում եր նրա ձեռքերի շարժումներին ու մեկը մյուսի լեռնից հարցեր եր տալիս։

— Սա ինչից են շինել. — հարցրեց Լևոնը ցույց տալով կաշին. — անուշ հուտ ե գալիս սրանից։

— Ե՛հ, — պատասխանեց հայրը, — մինչև այստեղ ընկնելը սա ախճան ե պտտել աշխարհում։

Առաջ սա մեր Սոնա կովին ցրտից ու անձեկից եր պաշտպանում։ Հետո մեր կովը մորթեցինք, միսը կերանք, իսկ կաշին գործարան տարան. մի լավ աղ արին, վոր չփտի, հետո թրջեցին ու մաքրեցին։

Ապա յերկու հսկա բանվորներ ուժեղ ձեռքերով սկսեցին սրան ձմռել, վոր կակղի. կողքից նայողին թվում եր, թե կաշին, ես ե, կտոր-կտոր կլինի։ Բայց վոչինչ չպատահեց։ Հետո սրան տարան, գցեցին կրաջրով լի մի հորի մեջ։ Այդ հորում սա մի շաբաթ մնաց։ Ամենասարսափելի բանը հետո պատահեց. ջրհորից հանեցին, գցեցին մի մեծ կոճղի վրա ու սկսեցին քերթել բուծ ունդով. վրայից քերթեցին բոլոր մազերը. կաշին բոլորովին կակղեց։ Հետո դաբաղեցին։

— Դաբաղեցին, — գոչեց տղան, — այդ ի՞նչ սարսափելի խոսք ե, այդ ի՞նչ ե նշանակում։

— Ա՛յ ինչ. սրան պառկեցրին մի մեծ տակառի մեջ. վրան գրժռ ածեցին ու թողին։ Այդ դրության մեջ յերկար մնաց, հետո դարձավ ճկուն, ամուր և փափուկ։

— Իսկ հետո ի՞նչ լեղավ, — հարցրեց Լևոնը։

— Հետո բացթյա չորացրին, վոր ավելի պնդի։ Հետո բերին եստեղ՝ արհեստանոց։

Եստեղ սրան դանակով կտրելու չենք ու մեխերով ծակծկելու. հետո կհագցնենք քո վոտներին, ու դու կգնաս փողոց զբոսնելու։

— Ղե՛, ուրեմն իմ վոտնամաները կովի կաշվից են. իսկ չես կարծում ելի՞ նրանք ծառի վրա չեն բուսնում, — զարմանալով սասց Լևոնը։

ՀԱՐՅԵՐ

— Ձեր գլուղում կաշին ի՞նչպես են մշակում տրեխների համար։

— Գլուղում չոգտագործված կաշիներն ուր են ուղարկվում։

— Դադաքից հում կաշվի փոխարեն ի՞նչ են բերում գլուղ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

— Եքսկուրսիա կատարեցեք կաշվի գործարան և կոշկակարանոց։

93. Աղահանքում

Իմ հայրը ծառայում եր յերկաթգծի վրա, Նախիջևանի մոտ։ Յերբ մենք Զուլֆա ելինք գնում, հայրս ինձ տարավ աղահանք։

Գալու ժամանակ մենք տեսանք միքանի անակ, վորտեղ պատրաստի աղ եր դարսած։

Հայրս վարիչից թույլտվություն ստացավ աղահանքը տեսնելու։

Հանքահոր իջնելու համար մեզ տեղավորեցին մի արկղի մեջ։ Յես դեռ չեյի նայել շուրջս, չերբ արկղը ցնցվեց, և չես զգացի վոր ցած ենք իջնում։ Մթնեց. միայն մեր ուղեկցի ձեռքի լամպն եր լուսավորում հորի պատերը... Յես վախենում եյի. Ծուտով լուսավորվեց։ Մենք կանգ առանք և դուրս չեկանք արկղից։

Մենք իջանք ստորերկրյա մի մեծ սենյակ։ Բազմաթիվ լուսավոր լամպեր կախված եյին առաստաղից և լուսավորում եյին հանքը։

— Նայիր, — սասց հայրս, — այս բոլորն աղ ե — և՛ հատակը, և՛ պատերը, և՛ առաստաղը։

Յես հատակից ապակու Նման մի բան վերցրի ու լիզեցի։
Շատ աղի լեր։ Մենք տեսանք՝ ինչպես բանվորները մեծ գործիքներով աղի կտորներ ելին ջարդում և փոքրիկ վագոնների մեջ տեղավորում, հետո ռելսերի վրայով տանում հորի մոտ և վեր բարձրացնում։ Այս բոլորը դիտելուց հետո նորից նստեցինք արկղը և բարձրացանք վերև։ Յերկար ժամանակ մթնոթյան մեջ մնալով՝ յես չեցի կարողանում արևի լուսին նայել։ աչքերս շուտ-շուտ փակում ելի։

Հետո գնացինք լիճը տեսնելու, վոր գտնվում էր աղահանքից վոչ հեռու։ Լճի ափերը և ջրին մոտ գտնվող քարերը սլատած ելին ինչ-վոր սպիտակ շերտով։ Յես լեզվիս տվի և հասկացա, վոր այդ բոլորն աղ է։

Լճի ջուրը փորձեցի խմել, վորից հետո յերկար թքում ելի, այնքան աղի լեր ջուրը։

— Շորերդ հանիր, — ասաց հայրս։

— Ախր յես լողալ չգիտեմ։

— Վոչինչ, այստեղ ջուրը թանձր է, յես խորասուզվի՝ Հանվեցի և զգուշությամբ ջուրը մտա։

Հայրս ձեռքս բաց թողեց։ Ծիշտ վոր չխորասուզվեցի, լսցանի նման լողում ելի ջրի յերեսին։

ՀԱՐՑԵՐ

— Ձեր գլուղը աղը վճրտեղից է ստանում։

— Ինչի՞ համար են գործածում աղը ձեր գլուղում։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

— Կես բաժակ ջրի մեջ այնքան աղ ամեցեք, վոր այլևս չլուծվի։
— Այդ լուծվածքի մեջ գցեցեք ձու. տեսեք կիջնի՞ ձուն բաժակի հատակը, թե վոչ։

— Մի բաժակ մաքուր-ջուր վերցրեք և գցեցեք բաժակի մեջ նույն ձուն. տեսե՞ք՝ վճրտեղ կկանգնի ձուն։

— Ինչի՞ցն է այդ տարբերությունը։

94. Շախտում

Տես՝ այնտեղ են նրանք,
աշխատում են արդեն,
մեղուների նման
բանվորները առույգ,
փորփրում են նրանք
ու կանչում են իրար,
ու կանչում են՝ իրար
հարազատ են նրանք։
Ու պալթում է ահա
քարաժայռը մեկ ել,
ու թռչում են ասես
բեկորները վերև

ու իջնում են թափով
բլուրնայները թեթև,
ու բահերը չափով
բարձրանում են վերև,
ու հնչում են ուրախ
աշխատանքի յերգեր,
ու լցնում են հողը,
ու կախվում են ներքև,
բարձրանում են նորից,
սպասում են Կարծես,
ու պալթում է ահա
քարաժայռը մեկ ել։

95. Ինչ պետք է իմանալ գործարան եքսկուրսիա զնալիս

I Ի՛նչպես է կազմակերպված արտադրությունը

1. Գործարանի արտաքին տեսքն ի՞նչպես է։
2. Գործարանն ի՞նչ է արտադրում և վճրտեղ է սպասում։
3. Վճրտեղից է հումք ստանում և ի՞նչպիսի հումք։
4. Գործարանն ի՞նչ ճյուղերի յե բաժանվում և ի՞նչ աշխատանք է կատարում ամեն մի ճյուղը։
5. Ամեն ճյուղում բանի՞ մարդ է աշխատում։
6. Ի՞նչ մեքենաներ կան ամեն մի ճյուղում և ի՞նչպես են աշխատում այդ մեքենաները։
7. Ի՞նչ վառելանյութով են բանում մեքենաները։

II Աշխատանքի պայմաններն ի՛նչպես են

1. Գործարանում քանի՞ տղամարդ, կին ու գեռահասներ են աշխատում։

2. Գործարանը քանի՞ ձեռք (հերթ) աշխատավորներով է բանում:

3. Գործարանում աշխատանքները ժամի քանիսից են սկսվում: Հանգստի ընդմիջումներ չե՞րբ են լինում:

4. Գործարանում կան աջակիսի ճյուղեր, ուր աշխատանքը փաստակար է համարվում:

5. Ի՞նչպես է գործարանը թեթևացնում այդ ճյուղերի աշխատանքը (բանվորական ժամերի թիվը կրճատում է, լրացուցիչ սնունդ է տալիս և այլն):

6. Գործարանն աջակիսի ճյուղեր ունի՞ արդյոք, ուր աշխատանքը վտանգավոր է համարվում:

7. Աշխատանքի պաշտպանություն համար գործարանն ի՞նչ միջոցներ է ձեռք առնում:

8. Իեռահասներն որական քանի՞ ժամ են աշխատում:

III Գործարանն ի՞նչպես է կառավարում

1. Գործարանն առաջ ո՞ւմ էր պատկանում և ի՞նչպես էր կազմակերպված այն կառավարելու գործը:

2. Ի՞նչպես է կազմակերպված ղեկավարման գործը հիմա:

3. Ի՞նչ մասնակցություն ունեն բանվորները գործարանը կառավարելու գործում: Ի՞նչ է անում Համ ԿԿ (բ) բջիջը ձեռնարկություն մեջ:

4. Ի՞նչ պարտականություններ են ընկած գործարանի տեսչի (գլխավորի) վրա:

5. Ի՞նչ աշխատանք է կատարում գործարանի գործարանային կոմիտեն:

6. Ի՞նչ աշխատանք է կատարում գործարանի գրասենյակը:

7. Արտադրական խորհրդակցություններ տեղի ունենում են արդյոք գործարանում: Ո՞ւմից են բաղկանում այդ խորհրդակցությունները:

8. Ի՞նչ հարցեր են քննության առնում այդ հանձնաժողովները: Ի՞նչպես են ազդում արտադրությունը բարելավելու գործի վրա:

IV Ի՞նչպես են ապրում բանվորները

1. Վճրքան են ստանում բանվորներն իրենց աշխատանքի համար:

2. Գործարանը բանվորների համար հանրակացարան, ճաշարան ունի՞ արդյոք:

3. Ի՞նչ աշխատանքներ են կատարվում ակումբում: Ի՞նչ խմբակներ կան: Վճրքան շուտ-շուտ են դասախոսություններ ունեցնողներ կազմակերպվում:

4. Թերթեր կարդում են արդյոք, և ավելի շատ վճր թերթ. պատի թերթ կա՞ արդյոք:

5. Քանի՞ կուսակցական և կոմյունիստական կան. պիոներական ջոկատներ կան արդյոք:

6. Անգրագետներ կան արդյոք. քանի՞ հոգի չեն: Ամենից շատ ովքե՞ր են անգրագետ—տղամարդիկ, թե՞ կանայք և ջանի՞ տարեկանները: Անգրագետների համար դպրոց կա՞ արդյոք:

7. Կոոպերատիվ կա՞ և ի՞նչպես է աշխատում:

8. Գործարանը հիվանդանոց, մանկական մսուր, մանկապարտեզ ունի՞ արդյոք:

9. Բանվորների ապրուստը բարելավելու համար ի՞նչ է անել գործարանը Հոկտեմբերյան հեղափոխությունից այս կողմը:

96. Նորագույն Սիմոնը

Նորագույն Սիմոնը գարնանն աշխատում էր առաջին խորհրդային տնտեսության մեջ:

Մի հրաշալի է այդ տնտեսությունը—կանոնավոր մշակված, լայն ծառուղիներով, պողատու ծառերով, ծաղիկներով, ու նրա տակից խուլ ձայնով լեռներով անցնում է Զանգուն:

Տնտեսության գլխավոր բերքը խաղողն է:

Մի որ, առավոտից լեղանակը պարզ էր, բայց իրիկնապահին դես ու դենից ամպերը հավաքվեցին, խառցան, սկսեց վորտան ու կայծակը:

Բայց անտեսութիւնը քնած չեր. կարկուտ պիտի գար, վորի դեմ պետք է պայքարելին:

Յերեք հոգի գործի անցան: Դուրս բերին յերկար, փայտե պոչերով հրթիռները, գցեցին գետնին, լուցկին վառեցին, պատ-
րուզը կպցրին ու...

— Տրախկ, տրախկ,— կարծես վորպես հակադրութիւն գոռոցին, պալթեցին ամպերի մեջ:

— Տրախկ, տրախկ, տրախկ...

Նորագուզցի Սիմոնը, վոր քիչ հեռու թմբերի մեջ թափ-
ված վագերի ետած մատներն եր հավաքում, տրաքոցը լսե-
լով, մեջքը դրեց, գլուխը բարձրացրեց, վերև նայեց, ապա
աչքը դարձրեց ներքև, յա արավ ու կամաց-կամաց, կարծես
մի բանից վախեցած, մոտեցավ հրթիռներ բաց թողնող տղե-
րանց:

— Տրախկ, տրախկ...— շարունակում էին նրանք:

— Ես ի՞նչ հրաշք ե,— հարցրեց նորագուզցի Սիմոնը, ձեռ-
քը դնելով տղերանց մեկի ուսին:

— Ա՛, դժու չես, Սիմոն ամի: Ձե՛ս տեսնում. ուզում ենք
ամպերը քշենք:

— Ձե՛, քեզ դուրբան, մի ասա՛ ես ի՞նչ եք անում:

— Միքիչ սպասի, Սիմոն ամի, մի խանդարի, թող գործս
վերջացնեմ, հետո կպատմեմ:

— Տրախկ, տրախկ, տրախկ,— շարունակում էին պաչ-
թել հրթիռները ամպերի մեջ:

Նորագուզցի Սիմոնն ապշած նայում եր յերկնքին:

Քիչ հետո վորոտն ու կալծակը վերջացան և մեղմ արձրև
յեկավ:

— Դե՛, Սիմոն ամի, վտանգն անցավ, պրծանք, հիմի արի
պատմեմ:

— Պատմի, պատմի:

— Յերբ վոր սև ամպերը հավաքվեցին, իմացանք, վոր
կակուտ է գալու: Ես հրթիռները տրաքացրինք, ամպերը ցրե-
ցինք և կարկուտն անձրև դարձավ: Ուրեմն խաղողն ու մրգեքը
կարկտահար լինելուց ազատեցինք, հասկացա՛ր:

— Յա՛,— արավ նորագուզցի Սիմոնն ու ել վոչինչ ավելաց-
նել չկարողացավ:

ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչ փաստներ ե տվել կարկուտը ձեր գյուղին:

— Ի՞նչ միջոցներով են կռվում գյուղացիները կարկտի դեմ:

— Ձեր գյուղի ցանքսերի վրձն մասն ե ապահովագրված:

97. Գարուն

Արի, գարուն,
արի սիրենք
կարմիր արև,
պալծառ որ:

Արի, գարուն,
արի սիրենք
յերգող ծիծառ,
դաշտ ու ձոր:

Արի, գարուն,
արի ուժ տուր
բուսած ցորնին
ու գարուն:

արի ու բեր
կյանք ու արև,
վորքեզ սիրենք,
այ գարուն:

98. Գարուն

Ձմեռն անցավ,
յեկավ գարուն,
ձյունը հալվեց,
լցվեց առուն,
արև ծագեց
արևելքից,
ծիլեր բաշեց
գետնի տակից:
Տաք հարավից
յեկան հավեր,
բուն հյուսեցին

ընկեր-ընկեր-
չմնացին
ոտար յերկիր:
Ծառը պտկեց,
տվեց բողբոջ,
աղբյուրն հանեց
անուշ խոխոջ:
Փուլեց կանաչ
սարի լանջին,
բազմեց մորին
թփի միջին:

Դաշտը թավիշ
զգեստ հագավ,
նստեց քարին,
երգեց կաքավ:
Արոտ գնաց
ծնած մաքին,
տվեց անուշ
կաթը ձագին:

Կարապն իջավ,
ընկավ գետը,
ոճը գնաց,
ճուտը հետը:
Մուկ ու մողես,
միջատ, գեռուն
արեն լեւան,
լեւան դարուն:

99. Արագիլ

Արագիլ, բարով լեկար,
այ արագիլ, բարով լեկար.
դու մեզ գարնան նշան բերիր,
մեր սրտերը ուրախ արիր:
Արագիլ, չերբ գնացիր,
դու մեզանից չերբ գնացիր,
հա փչեցին բուք ու բորան,
ծաղիկները ամեն տարան:

Արագիլ, բարով լեկար,
այ արագիլ, բարով լեկար.
բունդ շինիր դու մեր ծառին,
մեզ մոտ մնա ամբողջ տարին:

100. Պիոներական գարուն

Ծաղկուն գարուն, ծիծղուն գարուն
մեր աշխարհում, մեր սրտում.
արեն լեւավ մոտի սարից,
վառեց ժպիտ ու խնդում:

Մենք նոր աղբյուր նոր չերգերի,
մենք նոր ծաղկած կոմունար,


ծաղկիր մեզ հետ մեր նոր չերկիր—
վողջ աշխարհը մեզ համար:
Ծաղկուն գարուն, ծիծղուն գարուն
մեր աշխարհում, մեր սրտում.
արեն լեւավ մոտի սարից,
վառեց ժպիտ ու խնդում:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕНИЯ
Академии Наук
СССР

101. Ծառատունկի որը

I

Ձոր ու մերկ գյուղեր Սարոտը:
Ծառերի փոխարեն չբակերում ու փողոցներում ցցված ելին
աթարի կույտեր:
Գյուղը մերկ եր ու չոր:
Միայն հայտնի չե թե ինչպես՝ գյուղում կալին չերկու
դարավոր ծառեր՝ մի թթենի և մի ընկուզենի:



Թթենին, թեև կանգուն՝ բայց վաղուց չորացել էր, իսկ
ընկուզենին կիսաչոր էր և գարնանը միայն կենդանության
նշույլներ էր ցույց տալիս:

60231-67

— Հողը շուռ ե, արմատ չի վերցնում,— ասում էլին գյուղացիները, չե՞րբ հարց եր լինում գյուղում ծառեր չլինելու մասին:

Ամառվա շոգին կամ փայտի կարիք ունեցած դեպքում, գյուղացիք աչքներն ուղղում էին դեպի հեռուն, հորիզոնի ծայրին գտնվող սարերին, վորոնց կառչել եր անտառը, և հոգոց հանելով ասում.

— Ա՛յն չե՞րանի են անտառը մերը լինե՞ր...

Յե՛վ ալպես դարեր ու տարիներ շարունակ:

Ո՛վ եր գյուղի մասին մտածողը...

II

Բայց ահա չեկավ Խորհրդային իշխանությունը, գյուղի և գյուղացու բարեկամը:

Յե՛վ մի գեղեցիկ գարնան առավոտ Սարոտ չեկան բահերով ու քլունգներով գինված մարդիկ և սկսեցին քանդել Սարոտին շրջապատող բլրակներն ու դաշտերը:

Թեև գյուղացիք մեծ ոգնություն էին ցույց տալիս, բայց նրանցից և վոչ մեկը չե՞ր հավատում, թե իրենց աղանձված դաշտով կարող ե ջուր հոսել:

— Գլուխ գալու բան չի, ախպեր,— ասում էին նրանք:— Վոր հնար լինե՞ր, ենա մեր պապերն ու հայրերն ել եդ մասին կմտածե՞ին:

Բայց բանը գլուխ չեկավ:

Հետևյալ տարին ջուրը քչքչալով անցնում եր Սարոտի դաշտերով և վոռոգում նախկին աղանձված հանդերը:

Գյուղը շունչ առավ, դաշտը կենդանացավ, սարոտցիք աշխուժացան:

III

Անցել եր չերկու տարի:

Ապրիլ ամսի մի պայծառ առավոտ եր:

Սարոտի փոքրիկ խրճիթ-ընթերցարանը լեփ-լեցուն եր գյուղացիներով:

Սկսեց խոսել դավառի կենտրոնից չեկած մի ջահել տղա:

— Ընկերներ,— ասաց նա,— ուրիշ շատ գյուղերի նման, ձեր գյուղն ել ցարական իշխանություն խորթ դավակն ե չեղել: Դուք մինչև անգամ ջուր ել չունե՞իք, բայց հիմի քչքչան առուններն ուրախ քրքիջով վազվզում են ձեր դաշտերով: Հիմի հերթը հասել ե ծառերին: Ծառերի տված ոգուտի մասին չե՛ր կար չեմ խոսելու. դուք բոլորդ այդ բանն ինձնից լավ գիտեք. ծառերը թարմացնում են ողը, տալիս վառելիք, տախտակ, պտուղներ: Չեմ կասկածում, վոր բոլորդ ել չեռանդուն մասնակցություն ցույց կտաք կատարվելիք աշխատանքներին:

Դահլիճը միահամուռ ծափահարությունը պատասխանեց ձառախոսին, գոչելով.

— Հաստատ մնա Սավետը, հաստատ մնա:

Դուրսը, փողոցում հնչեց դռնանա: Գյուղացիներն ուրախությունից պարում էին և իրար համբուրում: Կոմյերիտականների ու պիոներների շարքերն ու դպրոցի աշակերտներն իրենց ուսուցչի հետ, իրենց ալ դրոշակներով, առաջ անցան: Նրանց հետևեցին գյուղացիները— մեծ ու փոքր, կին ու աղջիկ:

IV

Հասան գյուղից մի կիլոմետրաչափ տարածության վրա գտնվող փոքրիկ հարթության, վորի վրա ապագա փոքրիկ անտառի հիմքը պետք ե դրվե՞ր:

Ձուռնայի ուրախ հնչունների և պիոներների ու աշակերտների զվարթ չերգերի տակ, աշխատանքն սկսվեց: Ձրնգացին բահերն ու քլունգները, կռացան գյուղացիների մեջքերը, նրանց արևառ ու պղնձագույն դեմքերը ծածկվեցին տաք քրտնքի մանրիկ հատիկներով, բայց... Բայց հոգնածություն չեյին զգում... Անտառ էլին տնկում իրենց ձեռքերով, իրենց անտառը... Վորքան էլին նայել նրանք հեռու, հորիզոնի ծայրին գտնվող սև սարին կառչած անտառին և չե՞րագել իրենց անտառի մասին:

Յե՛վ այսօր նրանց պապերի ու հայրերի և իրենց սիրուն

յերազն իրականութուն եր դառնում շնորհիվ խորհրդային իշխանության գեպի գյուղն ունեցած հոգատար վերաբերմունքի: Ճաշից հետո դեպի գյուղը գնացող առվի չեղերքին տունկեր տնկելով, յեկան հասան գյուղին: Մինչ այդ՝ գյուղում մնացած ծերունիներն ու պառավները, մոռանալով իրենց թուլութունը, փորել, պատրաստել էլին տունկերի տեղերը:

Գյուղի փողոցներում աշխատանքը յեռում եր: Յերեկոյան արոտից վերադարձող կովերն ու վոչխարները խլշկոտած ու ապուշ կտրած նայում էին փողոցներում ցից-ցից չեղած բաներին...

Աբլորականն սկսվել եր, բայց գյուղի փողոցներից դեռ լսվում էին բլունգների ու բահերի զրնգոցը, զուռնայի ուրախ հնչյունները:

102. Սարգարաբատի ջրանցքը

I

Գարնանային պաշտառ որերից մեկն եր, յերբ մենք դուրս յեկանք գեղամեջ և տեսանք մի շարք նոր մարդիկ, վորոնք զանազան գործիքներով չափ ու ձև էլին անում գյուղի շրջակայքում: Դրանք ճարտարապետներ և տեխնիկներ էլին, վորոնք գծում ու վորոշում էլին ջրանցքի ուղղութիւնը, նշաններ ու փայտեր էլին ամրացնում գետնի վրա:

Ջրանցքն սկսվում եր Արաքսի ափից և կտրելով իր առաջն ընկած տարածութիւնը՝ հասնում եր մեր գյուղին, Սարգարաբատին և այստեղից թեքվում դեպի Սարգարաբատի ամալի անապատը վոռոգելու:

Ամբողջ գյուղը դուրս եր թափվել, և ամենքի խոսակցութեան առարկան ջրանցքն եր:

Յերիտասարդ Գաբոն ասում եր. «Հիշում եք, վոր յես շարունակ ասում էլի, թե մեր անբախտութիւնը նրանումն է, վոր մենք անտեր ու անտիրական ենք չեղել առաջ: Մեր մա-

սին վոչ թագավորը, վոչ ել ուրիշ կառավարութիւններ չեն մտածել, միշտ պահել են մեզ կարիքի ու տգիտութեան մեջ, վորպեսզի ավելի հեշտ կարողանան մեզ շահագործել:

Այ, հիմա տեսեք՝ ջուրը վոնց գլգլալեն կգա ու ես ամալի անապատը կգարձնի մի գեղեցիկ այգի: Ել ով կմտածի, թե՛ ջրի հերթն ինձ չհասավ, արտաշտացավ, բերք չտվեց, կամ թե՛ հողս քիչ է, չի հերիքում: Այ, կտեսնեք, թե յեկող տարի ինչ լավ կապրենք, ինչպես մեր շրջանի ժողովուրդը կհարստանա»:

Այդ միջոցին մոտեցավ գյուղխորհրդի նախագահը՝ հայտարարելով. «Տղերք, մեր գյուղի սահմանում ընկած ջրանցքի առուն փորելու համար հարկավոր է 200 բանվոր, որեկան 1 ու 50 կոպեկ աշխատավարձով: ով ուղում է, թող գնա ցուցակագրվի և սկսի աշխատել»:

Բոլորն առանց յերկար մտածելու համաձայնվեցին:

«Վոնց թե, փող ել են տալիս, - հարցրեց 80 տարեկան մի ծերունի զարմացած: - Դե տղերք, ջահել եք, ձեզ տեսնեմ, մեր ժամանակներում եդ ամենը անել էլին տալիս ձրի, մտրակի գոռով: Մենք վատ ժամանակներում ենք ապրել. ձեր բախտը բանել է. դե, գործի կպեք, ել մի սպասեք»...

Ծերունու այս ճառը և նախագահի հայտարարութիւնը միքանի ըոպելում վողջ գյուղը վոտքի հանեց: Գյուղացիք խումբ-խումբ ուրախ բացականչութիւններով և կայտառ տրամադրութեամբ գնացին գործի:

II

Այստեղ աշխատող բանվորներս 200 հոգի էլինք, վորից 120-ը մեր գյուղացիներ էլին, մնացածը հարևան գյուղացիներից: Սարգարաբատից մինչև Արաքսի ափը ժպտուն գծի պես ձգվում եր ջրանցքը:

Մեր աշխատանքները ղեկավարող տեխնիկը հայտնեց մեզ, վոր ջրանցքի վրա աշխատում են 1500 բանվոր, և մի յերեք ամսից ջրանցքը պատրաստ կլինի, ջուրը կսկսի գալ: Մեր ուրախութեանը սահման չկար:

Այստեղ մեզ համար սկսվեց մի նոր կյանք:

Ջրանցքի յերկարությամբ, նրա կողքերում տախտակից շինված ելին բանվորների համար ժամանակավոր տներ: Աշխատանքներն սկսվում ելին վաղ առավոտյան և վերջանում արեւմտոցին, սակայն աշխատանքի տևողութունը 8 ժամից չերանցնում:

Դադարներին և յերեկոյան հանգստին սկսվում ելին մեր ուրախ զրույցները միմյանց հետ, պարերը, գասախոսութունները և զվարճալիքները:

Շաբաթ յերեկոյան մենք գնում ելինք գյուղ, կիրակի որն անցկացնում մեր տանը՝ գյուղում և յերկուշաբթի վաղ առավոտյան հասնում գործի:

«Հը՛, մյուս անգամ դալբություն չանես, ժիր-ժիր կբանես,—ասում ելին մեկը մյուսին.—չէ՞ վոր սա մեր գործն է, մեզ համար է»:

«Ինչքան լավ կլինի մեր դրությունը, յերբ ջրանցքը շինվի, ջուրն սկսի գալ: Ես ազատ հողերում մի առատ ցանքս անենք և առատ հնձենք է», ասում ելին գյուղացիք միմյանց:

Աշխատանքն որեցոր թե եր առնում, ծավալվում, և մենք ել համոզվեցինք տեխնիկի ասածներին, վոր իսկապես շուտով, միքանի ամսից ջրանցքը պատրաստ կլինի:

Մեզ հաճախ այցելության ելին գալիս նոր մարդիկ, ճարտարապետներ, պետական գործիչներ: Սրանք նայում ելին կատարած աշխատանքին, նոր հրահանգներ տալիս ու գնում:

Մեզ ամենից շատ դուր եր գալիս այն, վոր յեկողները մեզ հետ ելին ճաշում, խոսում ելին մեզ հետ, հետաքրքրվում ելին մեր կյանքով, մեր ապրուստով:

«Յես հըլա եսենց ոյին չեյի տեսել,—միշտ կրկնում եր մեր գեղացի Բաղդոն.—տո՛, սրանք ուրիշ տեսակ մարդիկ են»:
«Բա վոնց, իհարկե եղպես ել պիտի լինեն,—պատասխանում ելինք մենք,—չէ՞ վոր սրանք ել մեզնից են, մեզպես գյուղացիներ ու բանվորներ են»:

Մեզանից քիչ հեռու, դեպի հյուսիս, շինված ելին Լուկաշեն ավանի յերկհարկանի շենքերը: Ենտեղ բանվորներն աշխատում ելին, տներ ելին շինում, եստեղ մենք ելինք փորում, ջրանցքն անցկացնում, ու ես ամենն ենպես վոգեորում եր մեզ, վոր աշխատանքը մեզ համար խաղ ու հարսանիք եր թվում:

Ձգում ելինք, վոր նոր աշխարհ ենք մտնում, նոր, իսկապես ազատ կյանքով պիտի ապրենք:

103. Շիրակի ջրանցքը

Բավական տեղ բաց փորվածքով գնալով՝ հասնում ենք վերջապես տոնելին, վոր ջրանցքի աշխատանքների ամենահետաքրքրական մասն է կազմում և այնքան այցելուներ է գրավում:

Տոնելից նախ սառը խոնավություն է փչում մեր յերեսին, հետո, յերբ մտնում ենք ներս, ցուրտ ենք զգում:

Այդ տոնելը, վոր 2 ու կես կիլոմետր յերկարություն ունի, աշխատանքները շուտ վերջացելուն պատակով փորվել է միաժամանակ ութ տեղից: Վորտեղ աշխատանքները շուտ ավարտել են, այնտեղ արդեն առաստաղի կողքերը քարել են, իսկ հատակը ցեմենտել: Այնպես վոր միքանի տասնյակ սաժեն տեղ գնում ենք կոկ տոնելով:

Ապա սկսվում է նոր փորվածքը: Այստեղ արդեն հատակը լիքն է դեռ բոլորովին չմաքրած քարերով և առաստաղից թափվող ջրերով:

Մութն է, կատարյալ խավար: Գնում ենք խարխափելով, ինչպես կույրեր, և վորովհետև հատակին ջրեր ու քարեր կան, գնում ենք տոնելի կողերը բռնելով:

Ձեռներ են ցեխոտվում, վոտներ են ընկնում ջրերի մեջ, յերբեմն կոշիկը լցվում է ջրով, բայց վոչինչ—հետաքրքրությունը մղում է առաջ:

Անցնում են տասը և ավելի ըրպեններ—խավարի մեջ լու-

սի վոչ մի շող: Վառում ենք այդ նպատակի համար վերցրած մոմը: Բայց նա լուսավորում է միայն իրեն և հանգչում է շուտ-շուտ: Բերնից լեւած թեթև մի հեք, ձեռի թեթև տատանում իսկույն հանգցնում է նրան: Ու գնում ենք յերբեմն իրար ձեռքից կամ զգեստից բռնած:

Մեկ-մեկ հանդիպում ենք քանդվածքների, ավելի շուտ փլվածքների, վոր դժվարացնում են ճանապարհը, և մենք շարունակում ենք ճանապարհը նույն խավարի, ջրի և ցեխի միջով:

— Հառա՛յ, աղերք, հառա՛յ անվեհեր — խրախուսում է մեկը:

Ահա վերջապես լույս է շողում խավարի խորքից: Շտապում ենք: Ելեկտրական լամպեր են:

Մենք արդեն աշխատանքի վայրում ենք: Բանվորները փոքրիկ վագոններով կրում են քանդված քարը և հողը: Լուրջ, կենտրոնացած և զգուշ դեմքեր: Մեղ տեսնելով՝ չեն զարմանում: Սովոր. են նման հյուրերի:

— Բարե, աղերք:

— Բարե, — պատասխանում են կարճ և շարունակում իրենց գործը նույն զգուշ շարժումներով, վոր չլինի թե հանկարծ փոքրիկ վագոնը դուրս ընկնի ռելսից: Յերկու հոգով բռնած վագոնի կողերից՝ հրում են՝ հասցնելու մինչև շախտան, ուր լիֆթը 23 սաժեն խորությունից հանում է այդ քանդվածքը գետնի լերեսը:

Հասնում ենք շախտալին՝ և ուզում ենք բարձրանալ վեր: Լիֆտն զբաղված է. նա քանդվածքներ է վեր հանում: Առաջարկում են սպասել կամ բարձրանալ լեւարաններով... 24 սաժեն վեր: Մի փոքր տատանումից հետո գերադասում ենք վերջինը:

Սկսում ենք բարձրանալ: Այստեղ ավելի բազուկներն են աշխատում, քան վոտները: Բարձրանում ենք, և վերելքը կարճես վերջ չունի... Մութն է, վերևից՝ առջևից բարձրացողը իր վոտներից, աստիճաններից շարունակ հող է թափում ցած, ներքևից գնացողի գլխին. միմյանց չենք տեսնում, այլ պատճառով շուտ-շուտ կանչում ենք իրար:

— Վահան, գալի՞ս ես.

— Այո...

Ու բարձրանում ենք, բարձրանում և, վերջապես, ահա գետնի լերեսին ենք, արևի տակ:

Մեր կուրծքն սկսում է լայնացած շնչել, ու արևը թվում է այնքան սիրելի, վոր ուրախությունից ուզում ենք ճչալ — «վողջուն քեզ, արև»:

Մինչդեռ ընդամենը ժամ ու կես ենք մնացել գետնի տակ:

Ի՞նչպես են անում այն մարդիկ հապա, վոր գիշեր ու ցերեկ, որական ութ ժամ անընդհատ, աշխատում են լարված մկաններով և կռացած մեջքով...

Դուրս գալուց անմիջապես շտապում ենք Արփաշալի ձորը՝ տոնելի մուտքը տեսնելու:

Սալի կեռումեռ ճանապարհով իջնում ենք ձորը: Այստեղ կա փոքրիկ տնակների մի շարք, վոր ցեմենտի, փայտեղենի և այլ նյութերի պահեստներ են:

Ահա և մուտքը: Հսկայական, մոտ 30 սաժեն բարձրություն սենեցող ժաշոխ տակից բացվում է այդ մուտքը՝ արդեն բարված ու ցեմենտած:

Այստեղից է ահա, վոր Ախուրյանը կամ Արփաշալը իր ձորից պիտի գնա՝ նախ չերկու և կես կիլոմետր տոնելով, ապա բաց ջրանցքով՝ Շիրակի ծալավ դաշտը վոռոգելու և նրա դեղին դեմքին զվարթութուն տալու:

ՀԱՐՅԵՐ

— Ինչո՞ւ չե խորհրդալին կառավարութունն ուղղորդութուն դարձնում ջրանցքների վրա:

— Ի՞նչ ոգուտ են տալիս ջրանցքները:

— Բացի Շիրակի ջրանցքից Ի՞նչ ջրանցքներ կան Հայաստանում:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

— Հավաքեցեք մանրամասն տեղեկություններ Շիրակի և Շահումյանի ջրանցքների մասին (լեւարությունը, ինչ տարածութուն է վոռոգում և այլն):

ա.

Լևոնը, մի կարմրերես, ժիր պատանի, մեծ բահով արագ ու թափով փորում եր իրենց կալի յետևի ազատ տարածությունը, վոր միշտ անոգուտ ընկած եր, չոր, անպտուղ։ Գրտինքը վողողել եր նրա դեմքն ու մազերը խճճել ճակատին։

— Եդ ինչ ես անում, Լևիկ, ինչո՞ւ յես փորում, — հարցրին նրան Հեղուշն ու Աննիկը, վոր անցնում ելին այդ տեղով՝ դաշտը գնալու, բանջար ու ծաղիկ քաղելու։

Լևոնը գլուխը բարձրացրեց ու շատ ուրախացավ, տեսնելով իր ընկերուհիների ժպտուն յերեսները։

— Ինչ եմ անում, աչքներդ լավ բաց արեք. ա՛յ, փորում եմ, վոր բոստան անեմ. տեսե՞ք. թե ինչքան լոբի, բողկ ու դդում եմ ցանելու ե... բա խի՛ս՛րը... պահ, պահ, պահ, աղչկերք, ենքան խիար ուտեցնեմ ձեզ վո՛ր...

— Ի՛... խելոք Լևիկ, վոնց վոր տեսնում եմ, ընկեր Աբգարի տված բնագիտական դասերը դուր են անցկացել քեզ համար, — խոսեց Հեղուշը, վոր ընկերներից ավելի զարգացած եր։

— Բա դու չէ՞ս տեսնում, վոր եստեղ, ես չոր տեղը առանց ջրել բան չի բուսնի. իսկ աղբրի ջուրն եստեղ չի հասնում։ Ենպես վոր ափսոս մեր սիրուն Լևիկի ջրտնքին։

— Եդ ճիշտ ե, Հեղուշ, բայց մի՞թե յես չեմ կարող աղբրից ջուր կրել, ջրել... ինչ, դու կարծում ես՝ կծուլանամ, թե ուժս պակաս ե։

— Ասենք եղպես ել կարելի յե. — ցածրաձայն կմկմաց Հեղուշը. — բայց, Լևիկ, դա շատ դժվար կլինի քեզ համար։ Ա՛, ինչ լավ կլիներ, Աննիկ, յեթե Պուճուր ձորի ջրից առու լիներ հանած ու մեր գեղի վերևով անցկացրած։

— Ինչքան բոստաններ կշինե՞լինք, Վոչ թե միայն Լևիկը, ես ժամանակ յես ու դու յել, Աննիկ, ցանք կանե՞լինք ու ծաղկանոցներ կսարքե՞լինք։

— Իսկապես ե՛, — խոսակցության խառնվեց սուսիկ Ան-

նիկը. — մեր մարդից ցած ահագին տեղ կա, դեռ շուրջն ել պատած ե, հիանալի բոստանի տեղ ե։

— Իսկ մենք չէ՞նք կարող առու հանել ու ջուր բերել... Ա՛յ, ես կալերի վերևով անցկացնել... — նորից խոսեց մտածկոտ Հեղուշը, ձեռքով ցույց տալով առվի ճանապարհը։

Հանկարծ Լևոնը գցեց բահը և ցատկեց աղջիկներին մոտ։

— Գիտե՞ս ինչ անենք. հենց եսոր ևեթ մեր ընկերներին հավաքենք, խոսենք, համոզենք, մի յերկու հոգի ընտրենք, վոր գնան խորհրդի նախագահի մոտ, ու մենք ել ամեն որ դասերից հետո «շաբաթուրյակ» անենք ու փորենք։

— Լավ, դուք ձեր ծաղիկ քաղելը թողե՛ք, յես ել իմ բահը, գնանք։

Ու վողկորված գնացին։

բ.

Հաջորդ որը գլուղխորհրդի գրասենյակի առջև հավաքված մարդկանց խմբին մոտեցան Հեղուշն ու Լևոնը։ Նրանք համարձակ դիմեցին խորհրդի նախագահին, վոր չոր կազմվածքով, ցանցառ միրուքով ու խելացի հաջացքով մի մարդ եր։

— Ընկեր նախագահ — խոսեց Լևոնը մի քիչ քաշվելով, — մեր պիոներական կազմակերպությունը վորոշել ե Պուճուր ձորի ջրից առու հանել, գլուղի վերևով անցկացնել, վոր գլուղի չորս կողմը ծառեր գցենք ու բոստաններ շինենք։

— Վճնց, վճնց, — ընդհատեց նախագահը հոնքերը կիտելով ու չիբխին գոռ տալով։

Այս անգամ Հեղուշը բացատրեց մանրամասն ու կանոնավոր։ Քանի նա խոսում եր, նախագահի դեմքի արտահայտությունը փոխվում եր ու սիրալիր դառնում։

— Շա՛տ, շատ լավ միտք եք արել, յերեխեք։ Դուք վոր հիմնկույց եսպես բաներ անեք, ես ե մեր աշխարհը կծաղկացնեք, — վերջը նա խոսեց հուզված. — Գնացե՛ք, շինեցե՛ք՝ միայն աշխատեցե՛ք ենպես անել, վոր արտերը չտրորեք. շինեցե՛ք, ձեզ մատաղ։

Ճաշից հետո գլուղի 12—15 տարեկան բոլոր պիոներները՝
տղա թե աղջիկ, բահերով ու քլունգներով զինված, շարժ-
վեցին նախագծված առվի ուղղությամբ և յերգով, խաղով,
կատակներով գործի կպան։ Ամբողջ գլուղը թամաշի յեկավ։
Բոլորն ել հիացած խրախուսում եյին պիոներներին։

Ամբողջի շունչն ու վողինն Հեղուշն ու Լեռնն եյին, վո-
րոնք և՛ փորում, և՛ խոսում, և՛ պարում, և՛ ամենքին սիրտ
եյին տալիս, ամենքի համար գործիք գտնում, ամենքի հետ
կատակներ եյին անում։ Իսկ ընկեր Աբգարը ղեկավարում եր
ամբողջ աշխատանքը։

Բոլորը ցնծության մեջ եյին։ Թե ինչ ուրախություն եր
տուն դառնալիս, եղ արդեն ասել չի լինի։

դ․

Անցավ յերկու շաբաթ․ առուն պատրաստ եր։ Ձուրը շատ
հեշտությամբ գալիս-անցնում եր գլուղի վերևով ու գնում
թափվում եր մեծ ձորը։

Այժմ ել սկսվեց մի յեռուն, մի տենդոտ աշխատանք ծա-
ռեր տնկելու, պարտեզ շինելու։

Յեվ յեթե դու, ընթերցող, հուլիսին անցնելու լինելիք այդ
գլուղի վերևով, ուրախությանդ ու հիացմունքիդ չափ չեր կա-
րող լինել։

— Կեցցե՛ մեր կազմակերպությունը, կեցցե՛ մեր միացյալ
աշխատանքը, — ասում եյին պիոներները միմյանց և ուրախա-
նում։

105. Սեանա լիճը

Սեանա լիճը գեղեցկության մի իսկական հրաշալիք ե։
Նրա գիրքը չափազանց բարձր ե։ Ձորս կողմից նրան սեղմում
են ժայռերը, և նա տարածված ե ավերով դեպի վեր բարձրա-
ցած՝ ավսելի նման։ Ափերն այնքան ել բարձր չեն, բայց տա-

րորինակ են ու տեղ-տեղ չքանում են մշուշապատ հեռունե-
րում։

Մենք գնում եյինք մոտորային մակուկով, վոր ճոճվում
եր ծովային թեթե ալեկոծումից։ Լեռների սառնորակ ջուրն իր
ծփանքներն եր թափում մեր յերեսին։

Լճի մոտերքը մարդկային կացարաններ քիչ եյին, մանա-
վանդ վոր դեռ չեր սկսվել իսկական ձկան վորսը․ իսկ Սեանա
լիճը հայտնի յե անբնական մեծության իշխան (կարմրախայտ)
ձկներով, վորից մենք հաճուքով ճաշակեցինք։

Այժմ, բացի այս ձկներից, խորհրդային կառավարությունը
վորոշել ե բազմացնել Սեանա լճում ուրիշ տեսակներ ել։ Հե-
ռավոր հյուսիսից այստեղ են ուղարկել հարյուր հազարավոր
մանրիկ սալմոն — ձկնիկներ, վորոնց ձգել են լիճը։ Ասում են՝
ներանք լավ են զարգանում և մոտ ապագայում կդառնան Հա-
յաստանի Հանրապետության աղբյուրներից մեկը։

ՀԱՐՅՆՐ

- Ի՞նչ ոգուտներ ե տալիս Սեանա լիճը։
- Ի՞նչ ձկներով ե հարուստ լիճը։
- Ի՞նչ հնություններ կան Սեանա կղզու վրա։
- Ինչ՞ե տեղացիք Սեանա լճին ծով են ասում։
- Ել ի՞նչ անուններ ունի լիճը։
- Ուրիշ ի՞նչ եք կարդացել կամ լսել Սեանա լճի մասին։

106. Առուն

Քչքչալով առուն կգա
մշուշ, մշուշ սարերեն,
գլղալով առուն կերթա —
մթին ու խոր ձորերեն։

Կգա խաղով, կգա տաղով,
համբույր կտա ծառերին,

Վոլոր-մոլոր թռչկոտելով
ծափին կտա քարերին:

Մեկ ել տեսնես՝ բարձր ձենով
զիլ ձաշն կտա սարերին.
մեկ ել՝ ինչպես ծիծղուն մանկիկ
կկշկշա արևին:

Նորից խաղով, նորից տաղով
առուն կգա սարերեն,
հազար նազով, վոլոր մոլոր
կերթա խորունկ ձորերեն:

107. Մանուկն ու ջուրը

Ամպոտ սարեն ուրախ ձենով
ջուր ե գալիս, անցնում շենով:
Մի թուխ մանուկ դուրս ե վազել,
ձեռն ու չերես պաղ լվացել,
լվացել ե ձեռն ու չերես
ու դարձել ե, խոսել եսպես.
— Դու վո՞ր սարեն կուգաս, ջրիկ,
իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
— Յես են սարեն կուգամ մի՞ին,
վոր հին ու նոր ձյունն ե գլխին:
— Դու վո՞ր առուն կերթաս, ջրիկ,
իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
— Յես են առուն կերթամ գվարթ,
ուր ափերն են շուշան ու վարդ:
— Դու վո՞ր աչգին կերթաս, ջրիկ,
իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
Յես են աչգին կերթամ դալար,
վոր տերն ե ժիր մեջն աչգեպան:

108. Համերգ

Վտակը ժայռից ներքև ե թռչում,
թափ առած ընկնում քարերի գլխին.
զարկում ավազին, շաշում ե, ճշում,
ճշում անհանգիստ, փրփուրը բերնին:
Ինչպես ծերունին ձաշնով պառաված
ձաշնակցում ե ժիր թռնիկի չերգին,
աչնպես ել ծերուկ անտառը կամաց
արձագանգ ե տալիս ջրի աղմուկին:
Սակայն բնության գվարթ համերգի
ունկնդիրն անխոս, հավիտենական՝
ժայռը մտախոհ իր մռայլ մտքի
յետևից ընկած՝ լսում ե նրան:

109. Ջրի առաջ թումբ կապելը

Գործը չեռում եր: Մարդիկ աշխատում ելին մըջունների
պես: Սալերը դատարկվեցին և վոստերից հաստ պարաններով
մեծամեծ կապոցներ շինեցին, լուրաքանչյուրի ծալքերում
տափակ-տափակ քար ու հող ածելով, վոր ծանր լինի, ջրին
դիմանա:


Քար ու հողի այս ահագին զանգվածը պետք եր գետը
գցել. միքանի տասնյակ ձեռքեր կպան միանգամից, նախ՝
առաջին կույտին և բոլոր ուժով, հարաչ-հրոցով նրան դեպի
ջուրը գլորել սկսեցին. իսկ գետը հանդարտ ու վեհ քշում եր
իր ալիքները:

Բլրաձև կույտն ահագին շառաչով ջուրն ընկավ. ալիքները
լաշն հորձանք տվին և փախան այս ու այն կողմ՝ փրփրալով,
ապա բոլոր ուժով զարկվեցին իրենց առաջ ցցված այս նոր
արգելքին:

Թումբը դողաց, բայց նույն վայրկյանին նրա վրա թռան

մի խումբ մարդիկ. վոմանք պարաններից կախվեցին, ուրիշները ճուղերից, մինչդեռ ափի բազմութիւնը շտապ-շտապ բարեր ու ցեխ եր շարտում վրան, վոր ծանրանա, ալիքներէ թափին դիմանա:

— Քար, հարեաններ, քար ածեք, — ճշում եր Գալոն քրտնքի մեջ կորած, — քար, ցեխ:



Ուռած ալիքներն սպառնալի ելին և հզոր, բայց թուժբը հաստատուն եր ու ծանր, կարծես ել վտանգ չկար. նույնիսկ ջուրը բարձրացավ ու շարժվեց դեպի առունները. երի մի փոքր աշխատանք, և ամեն ինչ վերջացած ե:

Բայց հանկարծ թուժբը լերերալ սկսեց, գողաց ինչպես լերկրաշարժի ցնցումից, ապա ալիքների միահամուռ թափի առաջ հագիւլ հաստատուած ամբարտակը տեղահան լեղավ և սկսեց ցրիվ գալ:

— Պարանը կտրվեց, անքի թուեք, — ճշացին միքանի ձայներ:

Թմբի վրայի բազմութիւնը շտապ լետ փախավ՝ ջուրը չթափվելու համար: Գալոն կանգնել եր:

— Թռիր, Գալոն, թռիր, տնաքանդ, — ճշաց բազմութիւնը: Գալոն քնից արթնացածի պես նայեց իր վտանների տակ խուսափող թմբերին և վերջին վայրկյանին ափը նետվեց:

Ծառերի ահագին կույտը բաժան-բաժան լեղավ. յուրաքանչյուր ալիք իր մասն առավ և հրճվելով ու մոմռալով, ամբողջ որերի աշխատանքն ու այնքան հույսեր խառնեցին իրենց փրփուրների հետ և քշեցին դեպի անծանոթ հեռուն:

— Վիշապ, — մոռնաց Գալոն ատամների արանքից:

Նա կրկին գործի կպավ, կրկին ցատկեց լերկրորդ կույտի վրա, վոր նույն վայրկյանին ջուրը ձգեցին:

— Քար ու ցեխ, — լսվում եր անընդհատ:

Այնուհետև թուժբը շինվեց. գետը դարձյալ զթառատ մայր եր. նա առատ ջուր տվեց, և գլուղը մի անգամ ել փրկված եր:

ՀԱՐՑԵՐ

- Ձեր գլուղի արտերը վռոզվում են, թե վոչ:
- Ձեր գլուղը վճրտեղից ե ջուր ստանում վռոզելու համար:
- Ի՞նչ կոյեկտիվ աշխատանք և կատարված ձեր գլուղում:
- Դրի առեք այն:

110. ՍԵՂԱՎԸ

Գարնան հալոցի ժամանակն եր: Որերն ամպ ելին, բայց տաք, գետինը՝ խոնավ ու ցեխ, սարերը՝ թխպոտ: Միշտ անձրև եր գալիս՝ կամ մեղմ կամ վարար:

Եղպիսի մի որ եր, վոր կովերը տարել ելինք հեռու դաշտը արածացնելու: Քարերի վրա նստած հեքիաթ ու հանելուկ ելինք ասում, վոր մեկ ել հանկարծ Լալվարի գլխի ամպը ենպես տրաքեց, վոր բոլորս միասին վեր թռանք, ցոփ կանգնեցինք:

— Տղերք, սարումը սարսափելի անձրև ե գալիս, հիմի ձյունը բոլորը կհալվի, ու սելավը ցած կպա. շուտ արեք, կովերը հավաքեցեք, գետն անցկացնենք, թե չե սելավը վոր լե-


կալի, պրծանք, ել անցնել չի լինի, — ասաց Սեդրակը, վոր մեզանից մեծն եր ու փորձվածը:

Բայց ինչ, ամբողջ դաշտում փռված ելին կովերը. մինչև հավաքեցինք, մինչև քշեցինք-հասանք առվին — սելավն ել չեկավ-հասավ: Դեռ հեռվից չերևում եր սելավը — վոնց վոր մի վիշապ, քար ու հող քանդելով, ահագին դղրդյունով գալիս եր նա:

— Տավարը չետ տվեք. սելավը կըշի, — ճշաց Սեդրակը:

Մինչև հասանք տավարի առաջը, վոր չետ տանք, միքանի չերինջ ու մողի արդեն մտել ելին ջուրը: Մենք տեսանք, թե ինչպես խեղճ, փոքրիկ կենդանիները մեկ ջրի տակն ելին ընկնում, մեկ չերեսը, ինչպես խփվում ելին ժայռերին, ու վերջը սելավը տարավ-կորցրեց նրանց:

Ամբողջ ուրը — մինչև լավ մթնելը ֆառերը գետի աջն կողմը, մինչև ջուրն իջավ:



111. Յերևանի հիդրո-ելեկտրո-կայանում

Կիրակի առավոտ եր: Մենք չերգելով անցնում ելինք քաղաքի փողոցները և ահա դուրս չեկանք նոր խճուղու վրա: Սա ձգվում-հասնում եր Զանգուն, չերկարելով նրա ափերով՝ վերջանում նոր կառուցված հիդրո-ելեկտրո-կայանի շինության առաջ:

Այստեղ գետի ափին շինված եր քարե մի մեծ շինություն, ուր դրված ելին մեքենաները:

Այս շինություն գլխում ձորի կրճերին շինված ելին չերկու-

հսկա ջրամբարներ, վորոնք ջուրն ստանում ելին Զանգուի վերին մասերից՝ հատուկ շինված առվի միջոցով:

Թե ջրամբարները և թե առուն ամրացված ելին ցեմենտով և անցքերը բռնած չերկաթյա հսկայական դռներով ու փականքներով:

«Այ, տեսնում եք, — բացատրում եր մեզ մեր առաջնորդը, — այս պտուտակը վորոքելով դեպի աջ՝ ջրանցքի անցքը փակող դուռը բացվում ե, և ջուրն սկսում ե այդ հսկա խողովակների միջով հոսել դեպի մեքենաները:

Սոսկալի արագությամբ թափվելով գործարանի ստորերկրյա անիվների վրա, պտույտ ե տալիս նրանց կայծակի արագությամբ: Ելեկտրո-դինամոները շփվելով իրար՝ պեծպեծին են տալիս ու արտադրում ելեկտրականութուն, վորը մի ակնթարթում տարածվում ե ամբողջ քաղաքը, վառում ե ճրագները, շարժում մեքենաներ ու դործարաններ աշխատեցնում»:

«Ինչքան մարդիկ աշխատած կլինեն այստեղ», — մտածում ելինք մենք: Ամեն մի քարը, ծեփը կամ շաղախը պողպատի ամրություն ունի: Մեքենաների ամեն մի մասը, մի պտուտակն անդամ ամրացնել և հագցնելն ինչ գեղարվեստն և հմտություն պահանջած պիտի լինի:

Խողովակների կողքին, քիչ հեռավորությամբ ջրամբարից, մինչև Զանգուն իջնում եր մի չերկրորդ ջրանցք, վոր փորված եր բավականաչափ լայն և ամրացված եր ցեմենտով. սա չեր նրա համար եր, վոր ջրի ավելորդ քանակը հոսի այդ ջրանցքով դեպի Զանգուն:

Հենվելով ջրամբարի պատնեշի վրա՝ մենք ուշադիր դիտում ելինք ներքև և սարսափում ցածը ձգվող անդունդից: Ինչ կլիներ, չեթե հանկարծ մեզանից մեկն ու մեկը սալթաքեր ու ընկներ. անշուշտ մի ակնթարթում գալարվելով կհասներ Զանգուն, ջարդուփշուր կլիներ ալիքների ու քարերի զրկում:

Կայանի մուտքն ու պատերը ներկայացնում ելին թելերի ցանցերի խիտ հյուսվածք: Նրանք անցնելով և պտույտներ անելով պատերի վրայից, դուրս ելին գալիս, փաթաթվում

տնկված սյուներին և այնուհետև ձգվելով մեկ սյունից մինչև մյուսը յերրորդն ու չորրորդը, հասնում եյին քաղաք:

Մենք արդեն ճանապարհվում եյինք տուն: Կայանի մուտքի առաջներում մի փոքր տարածության վրա տնկված եյին միջանի տունկեր և ցանված միջանի մարգեր: Վարժան գեղեցիկ եր այս աշխատանքը այստեղ, այս առհեղի ձորի մեջ, մերենանների գրկում: Ինչ լավ տպավորութուն թողեց մեզ վրա:

Ձանգվի աղմկոտ յերգերի արձագանքը հետզհետե թուլանում եր: Արևն սկսում եր թեքվել դեպի արևմուտք, յերբ մենք արդեն դուրս եյինք յեկել ձորից, թողնելով մեր յետևում աշխատանքի այդ իսկական հրաշալիքը, վոր ստեղծել եր բանվորների ու գյուղացիների հզոր կամքն ու համառ աշխատանքը:

ՀԱՐՅԵՐ

- Ել ի՞նչ հիդրո-կայաններ և կառուցվել Հայաստանում:
- Ի՞նչ հիդրո-կայաններ և կառուցվում:
- Ձեր շրջանում հիդրո-կայան կա:
- Ձեր գյուղը ելեկտրական լույս ունի:
- Ի՞նչ նպատակների համար և ոգտադործվում ելեկտրականությունը:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Եքսկուրսիա կազմեցեք դեպի ձեր մոտի հիդրո-ելեկտրո-կայանը:

112. Լույսերը

1.

Գյուղական պիոներ եր Սեթոն,
հայրը հողագործ եր հասարակ,
ունեյին պապական մի տուն
ու գետնափոր մի մարագ:
Յեզներ ել ունեյին առաջ,

յերբ դեռ կռիվը
չեր անցել իրենց գյուղի տակով:
Իսկ հիմա,

յերբ գյուղն ե լցվում նախրի բառաչը,
Սեթոյենց տուն ե գալիս
միայն մի կով:

Իսկ հայրը յեզան պես դադում ե,
վոր նորից գնի լծկան.

— Առանց լծկան,— հայրը պատմում ե,—
գյուղացին նման ե
ցամաք ընկած ձկան:

Ու հայրը, յերբ ամեն տարի
քաղում եր արտը ծովի պես,
կեսը պահում եր ցանելու,
կեսը ուտելու համար,
ու փողով ծախում եր մնացած կեսը:
Յեվ եղպես, մի որ ել վեր կացավ
ու արտերի միջով քաղած՝
Սեթոյի ձեռքից բռնելով
դնաց քաղաք:

Չարմացավ Սեթոն, ապշեց.
նոր եր նա քաղաք մտնում.
Իրիկունը
վառվում եր հազար արեգակ,
յերբ իջնում եր գյուղի արեգակը,
և որը մթնում:

Ու ելի շատ բան տեսավ
քաղաք ընկած պիոներ Սեթոն,
իսկ հետո,
ելի նույն ճամպեքով,
իր հոր հետ վերադարձավ տուն:
Շատ բան եր տեսել քաղաքում,
նորություն հազար տեսակ,

բայց ախր ինչո՞ւ
ամենից լավ հիշում եր են մեկը,
թե ինչպես վառվում են քաղաքում
հազար ու մի արեգակ,
Յեւ յերբ իրիկվա մութին
հասավ գեղը իրենց հին,
Սեթուին խավար թվաց գեղը,
ու խավարը թվաց ամենի:

2.

— Ապի, են ինչո՞ւ քաղաքում
եղբան շատ լույս կա վառած,
խակ եստեղ,
գեղ տեղում,
մութն ե գեռ ու շատ խավար:
Ի՞նչ ասի հայրը Սեթուին.
— Հին վախտից ըտենց եր, բաւամ,
քաղաքինն եր մենակ
եղ լուսավորությունը.
հմի ասում են,
վոր գեղն ել պտի լուսավորվի:
Եղպես ե ուզում
մեր կառավարությունը:
Այ, հրեն ջրանցքի ճամպեն,
հրեն.
Բերել են հազար ցեմենտի տակառ...
Ու ցույց եր տալիս ճիպոտով,
խակ ճիպոտի ծայրին,
Սեթուի աչքերի դիմաց,
վառվում եր կարծես լամպը ելեկտրական:

3.

Ու յերբ վոր ջրանցքի ճամպին

բանվորներն սկսեցին բանել,
զնաց նրանց մոտ Սեթոն,
խնդրեց,
վոր թույլ տան իրենց ոգնել:
Հողն ու քարը թափում եր դուրս
իր ընկեր պիտներն ի հեռ
ու մեկ-մեկ
նայում եր չես:
Ենտեղ քաղաքն ե,
մեծ քաղաքը,
քաղաքի լուսավորությունը.
գլուղն ել պիտի լուսավորվի,
վորովհետեւ եղպես ե կամեցել
Սավետական կառավարությունը:
Իսկ յերբ վոր մթնում եր գեղը,
իրիկունը իջնում եր նորից,
կտուր եր բարձրանում Սեթոն,
վոր հեռու քաղաքի լույսերը
տեսնի:
Ու հեռվից տեսնում եր շողացող
պսպղուն լույսերի շարան,
ու նրան ավելի խավար եր թվում.
գլուղի խավարը:
Բայց գիտեր արդեն Սեթոն,
վոր հերթը գեղինն ե,
գեղն ել շուտով կունենա
եղ լուսավորությունը,
վորովհետեւ եղպես ե կամեցել
բանվորի
ու գլուղացու
կառավարությունը:

113. Ելեկտրիֆիկացիա

Մի անգամ Ղազարը վերադարձավ Կարմրաշենից և ախպիսի բաներ պատմեց գյուղացիներին, վոր նրանք ապշած մնացին:

— Աշխարհում ինչեր ե յեղել... Մենք ինչո՞վ կարող ենք պարծենալ. ապրում ենք մութ վորջում և կովում իրար հետ: Մի գնացեք Կարմրաշեն, տեսեք ինչեր կան ե...

— Ախր ի՞նչ կա, ասա յե:

— Կարմրաշենում գիշերն ել արեգակ կա:

— Ինչպես թե. գիշեր ու արեգակ...

— Այո. մեզ մոտ գիշերը մութն ե, իսկ նրանց մոտ գիշեր ու ցերեկ մեկ ե:

— Նավթ լինի, մեզ մոտ ել լույս կլինի:

— Ի՞նչ նավթ. նավթով ամեն մարդ կարող ե լուսավորել: Յես ասում եմ առանց նավթի:

— Մի հասկացրու տեսնենք՝ ի՞նչ ես ասում, ե, — բարկացավ ծերունի Բարսեղը:

— Յեթե չեք հավատում, ինքներդ գնացեք տեսեք: Գյուղում բացի սյուներից ու լարից ուրիշ վոչինչ չկա: Գետի մոտ մի մեքենա չե բանում, իսկ տներում կոճակը ծռում ես թե չե, արեգակը դուրս ե գալիս և տունը լուսավորում: Մենակ տները չի, գոմը, բակը, գյուղն ել ե լուսավոր:

Վորոշեցին մարդ ուղարկեն Կարմրաշեն:

Ընտրեցին նախագահ Յերեմին, վորը 25 տարեկան եր և ծերունի Բարսեղին:

Մինչև Կարմրաշեն 40 կիլոմետր եր: Պատգամավորները վեր կացան ու ճամպա ընկան:

Գարնան տաք որ եր: Մեր պատգամավորները ժամը 12-ին հասան Կարմրաշեն:

Բարև տվին, բարև առան ու հայտնեցին իրենց գալու պատճառը:

— Խնդրում ենք թույլ տաք, վոր նայենք ձեր նոր լուսավորութունը:

Գնացին:

Փողոցում, ճիշտ Ղազարի ասածի պես, սյուներ եր տընկված և վրովը լար քաշված:

Հասան կայանին: Մտան ներս:

Յերեմի ու Բարսեղը քիչ մնաց վոր կուրանային:

Յերկար խոսեցին գլխավոր վարպետի հետ, խոսեցին ղույսի և մեքենայի մասին:

— Թե մենք ել եսպիսի լույս ունենայինք, — ասաց նախագահը:

— Դժվար բան չի. կենտրոնը վոնց վոր մեզ տվել ե, համարյա ձրի, ձեզ ել կտա: Գործին հետևող ե հարկավոր, — բացատրեց վարպետը:

Գիշերը Յերեմի ու Բարսեղը դուրս յեկան շրջելու:

Հրապարակի մեծ շուշեն ճիշտ վոր արեգակի նման վառվում եր:

Մտան մի տուն: Մի տուռը շուշա չե կախված, վորը վառվում ե:

— Իսկ ի՞նչպես եք մարում:

Տանտերը մոտեցավ կոճակին՝ պտտեց... և տունը մթնեց:

— Դե հիմի վառի տեսնեմ:

Տանտերը կոճակը նորից պտտեց լուսացավ:

— Հիմի թող յես հանգցնեմ, — ասավ Յերեմը:

Բարձրացավ թախտի վրա, ձեռքը դրավ շուշի վրա և փռհ, փռհ: Չի հանգչում:

Իսկ տանտերը դուռն մոտ կանգնած ծիծաղից թուլացել ե ու փորը բռնել:

— Այ քեզ կարմրաշենցիք, իսկական գիտուններ են դարձել, զարմացավ Բարսեղը:

Գյուղից 4-5 կիլոմետր հեռացել ելին, բայց դեռ չերեվում ելին Կարմրաշենի լուսավոր շուշեքը:

— Յերեմ ջան, Յերեմ, — ասաց Բարսեղ պապին, դու մեր

նախագահն ես, մեր մեծն ես, մեր գլուղում ել եղպես բան սարքի:

— Ի՞նչ մեծ. հիմի բոլորն ել մեծ են. յես ել, դու յել, բոլորն ել: Կհասնենք գլուղ, ժողով կանենք, կպատմենք:

Մենք ել կունենանք: Վոր չունենանք, ամոթ ե:

ՀԱՐՑԵՐ

— Ձեր գլուղում ելեկտրոկայան կա՞:

— Վճռակողից են բերում ելեկտրոկայանի մեքենաները գլուղ:

— Ելեկտրականութունն ի՞նչ ոգուաներ ե տալիս ճարդուն:

— Ի՞նչ կարիքների համար կարելի չե ոգտագործել ելեկտրականութունը:

114. Աներևույթ թշնամի

— Պապի, սիրելի պապի, յեկ տես՝ ինչ ե յեղել բո ընծայած սիրուն խնորենին, — արտասլելով ասում եր Գուրգենը:

— Շուտ, գնանք, պապի, — հառաչելով գոչում եր Վարդգեսը: — Անցյալ տարի նա վճռափ լավ ծաղկեց, գեղեցիկ խընձորներ տվեց, իսկ այս տարի նրա մանրիկ տերևները թառամել են, քնքուշ ծաղիկներն առանց բացվելու փչացել են:

Պապը թոռնիկների հետ մտավ պարտեզ:

— Պապի, տես, մեր ծառի վրա վոչ մի թրթուր չկա, — ասաց Գուրգենը:

— Կեղևն ել անվնաս ե, վոչ մի տեղ չորացած չե, — վրաբերեց Վարդգեսը:

— Պապի, յես կարծում եմ, այն անպիտան մրջյուններն են արել, — մեջ մտավ Գուրգենը. — անցած որը նրանք մեր ծառի վրա բարձրանում, իջնում ելին, յես ուղեցի նրանց կոտորել, բայց պարտիզպանը չթողեց:

— Հանգիստ կացեք, — ասաց պապը, — մրջյունները չեն փչացրել ձեր ծառը:

— Հապա ռվ ե արել, — ասացին մանուկները: — Մենք խնձորենին շատ լավ խնամել ենք, քո ասածի համաձայն կեղևն ու տերևները մաքրել ենք, տերևները թրթուրներից ազատել ենք, հողը փափկացրել ու ժամանակին ջրել ենք:

— Դուք մեղավոր չեք, սիրելիներս, — ասաց պապը, — թըշնամին չի յերևում. նա հողի մեջ՝ արմատների մոտն ե. այս րոպեյիս դուք կտեսնեք նրան:

— Պապին փորեց խնձորենու չորս կողմը. քիչ հետո մանուկները տեսան խնձորենու արմատների մոտ միքանի հատ մեծ-մեծ թրթուրներ սպիտակ գունով, շագանակագույն գլուխներով:

— Ահա այս թրթուրներն են ձեր խնձորենին չորացրել, — ասաց պապը:

— Ի՞նչ զգվելի չեն, — ասացին մանուկները:

— Բայց ռվ ե դրանց այդտեղ դրել, — հարցրեց Վարդգեսը:

— Ձեր սիրելի մալխայան բզեզները, — ասաց պապը, — այն բզեզները, վոր մալխին շատ մանուկներ ծառերի վրայից հավաքում, խաղում են: Ա՛յ, հենց այդ բզեզների եգերը փափուկ հողի մեջ ածում են քորոցի գլխի չափ ձվեր. ձվերից դուրս են գալիս մանր թրթուրներ. սկզբում սրանք ազահաբար ուտում են բույսերի մնացորդները և մեծանում: Ձմռան ցրտերին խոր են գնում և միասին խմբվելով թմրած մնում են: Փարնանը տաքանալով, նորից արթնանում են, այս անգամ ավելի ագահ ուտում են մատաղ բույսերի արմատները և նրանց չորացնում են: Յերկրորդ տարին նրանք ուտում են փոքրիկ ծառերի արմատներ, իրենք մեծանում են, իսկ ծառերը չորացնում:

— Պապի, տես, այս թրթուրը պատչանի մեջ ե:

— Այո, սիրելիս, յերրորդ տարում նրանք պատենավորվում են, իսկ չորրորդում պատչանից դուրս են գալիս այն շագանակագույն բզեզները, վորոնց դուք լավ ծանոթ եք:

— Ուրեմն այդ թրթուրները յերեք տարի հողի մեջ ապրելով միշտ արմատներ են ուտում:

— Այն, — ասաց պապը:

— Պապի, այդ մայիսյան բղեղներն ե՞լ ծառերը փչացնում, չորացնում են:

— Վո՛չ, նրանք միայն կրծում են տերևները և մատաղ պտուղները: Վորովհետև այս բղեղները ֆլասակար են, դրա համար վորտեղ շատ են լինում, այնտեղ այգեպանները ծառերի վրայից թափ են տալիս ու հավաքելով՝ խոզերին կերակուր են անում. բարեբախտաբար թռչուններն ել նրանց կոտորում, վոչնչացնում են, չեթե վո՛չ՝ նրանք ծառերին շատ ֆլասաներ կտալին:

ՀԱՐՑԵՐ

— Ուրիշ ի՞նչ ֆլասակար միջատներ գիտեք:

— Ի՞նչ միջոցներով են կոմում մարդիկ ֆլասակար միջատների ղեմ:

115. Խնձորենու պատվաստումը

Մի անգամ փոքրիկ Վարդանի հայրը գնաց անտառ և այնտեղից վայրի խնձորենու մի ծառ բերեց:

— Ի՞նչ պետք է անես, — հարցրեց Վարդանը հորը:

— Պետք է տնկեմ մեր տան առջև, վոր մենք ել ունենանք մեր խնձորները, — պատասխանեց հայրը:

— Չե՞ վոր վայրի խնձորները համեղ չեն լինում, — առարկեց Վարդանը, — յես փորձել եմ. անտառի խնձորները չեն ուտվում, դառն են:

— Այդ վոչինչ: Մենք այնպես կանենք, վոր խնձորենին համեղ տեսակի «անտոնյան» խնձորներ տա:

Հայրը փորեց հողն ու տնկեց վայրի խնձորենին:

Այդ որվանից անցավ մեկ տարի: Խնձորենին լավ աճել եր: Վարդանն այդ մասին մոռացել եր արդեն:

Մի անգամ հայրն ասաց.

— Վարդան, չե՞ս ուղի տեսնել, թե վայրի խնձորենին ինչպես պետք է «անտոնյան» խնձոր դարձնեմ:

— Կուզեմ, կուզեմ, — բացականչեց Վարդանը:

— Դե չեկ ինձ հետ:

Հայրը խնձորենին դանակով կտրեց գետնից չերեսուն սանտիմետր բարձր, ճղեց կոճղը և ճեղքի մեջ մի ճյուղ դրեց, վոր նույն առավոտը բերել եր իր հարևան այգուց: Ապա կոճղը շաղախով պատեց, փաթաթեց շորով ու թելով կապեց:

— Պատրաստ ե, — ասաց հայրը, կդացած տեղից վեր կենալով, — այժմ սպասենք խնձորենիին:

Վարդանը զարմացած նայում եր հոր արածին:

— Վերտեղից խնձոր կստացվի. չե՞ վոր դու ծառը կտրեցիր, — հարցրեց տղան:

— Յես կտրեցի վայրի խնձորենին, — պատասխանեց հայրը. — ու կտրած տեղը պատվաստեցի «անտոնյան» խնձորենու մի ճյուղ: Այս փոքրիկ ճյուղից մեծ ծառ կաճի, վորը և «անտոնյան» խնձորներ կտա:

— Շո՛ւտ դուրս կգան այդ «անտոնյան» խնձորները:

— Դու այժմ վեց տարեկան ես, — պատասխանեց հայրը. — յերկու տարուց հետո դպրոց կերթաս. չեթե լավ սովորես՝ չորս տարուց հետո կավարտես ուսումդ. և ահա հենց այդ ժամանակն ել մեր խնձորենին խնձոր կտա:

— Ափսոս, վոր այդքան յերկար պետք է սպասել, — տրտնջաց Վարդանը:

Հայրը ծիծաղեց ու բացատրեց:

— Սիրելիս, ավելի շուտ չի լինի. միայն պարտիզի բանջարեղեններն ու դաշտերի հացահատիկներն են մեկ տարում հասնում, իսկ պտղատու ծառերի համար միջանի անգամ ավելի շատ ժամանակ է պետք, այլ կերպ չի լինի:

Անցավ յերկու տարի: Հայրը խնամքով հետևում եր խնձորենուն — կտրատում եր ավելորդ ճյուղերը, փորփրում ծառի ար-

մատի շուրջը և ձմեռը խոտով ծածկում: Վարդանը դպրոց գնաց ու լավ սովորում էր:

Խնձորն աճում ու աճում էր:

Հայրը ճիշտ էր հաշվել. չորս տարուց հետո՝ գալնանը՝ Վարդանն ավարտեց դպրոցը, իսկ խնձորենին առաջին անգամ ծաղկեց:

Վարդանը նույն աշնանը խնձորենուց մի քանի խոշոր ու համեղ «անտոնյան» խնձոր քաղեց:

116. Աշխատանքներն այգում

1. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒՄ ԵՆ

Ձմեռվա քնից զարթնած՝ արևը տաքություն էր սփռել ամեն տեղ, և դաշտ ու այգի, ծառ ու ծաղիկ սկսել էին կենդանանալ:

Գյուղամիջում հավաքվել էին գյուղացիներն ու զրույց էին անում:

— Տեսնենք ես տարի դարնանը վոնց կլինի:

— Լավ գարուն է խոստանում, բայց մեր այգիներից խելքս բան չի կարում:

— Ինչո՞ւ:

— Խաղողի թփերին ցուրտն է վրասել, ծառերն էլ թրթուրը պիտի ուտի-փչացնի:

— Եհ, մեր Գասպարը մի բարի բանի համար բերանը բաց չի անի հո, — ժպտաց չերիտասարգներից մեկը:

— Դե կտեսնենք. չես մի բան գիտեմ, վոր ասում եմ:

— Եհ, ինչ արած, մի բան վոր մեր ձեռին վոչինչ չկա. ուղի թրթուրն էլ կուտի ծառերը, չոռն էլ կփչացնի այգիները:

— Ախր են որը գյուղատնտեսն ասում եր՝ լավ ճար կա գրանց առաջն առնելու համար:

— Այ մարդ, ինչ եք դուք ել ալանջ դնում եղ գյուղա-

տնտես կոչվածներին. եսպես ելել ե, եսպես ել կգնա, թարկ տվեք:

— Ախպեր, են մարդը շատ խելքը կտրած բան էր ասում, բայց դե նրա ասածներն էլ դեռ մի կողմ դնենք: Յավը նրանումն է, վոր մինչև հիմա մենք մեր ձեռքից չեկածը չենք արել:

— Ի՞նչը, ի՞նչը:

— Իսկի միտք արե՞լ եք, վոր ծառերի վրայի են թրթուրի քիսաները պետք է հավաքել ու աչրել:

— Ճիշտ է ասում մարդն, ախպեր, — ասացին մի քանիսը:

— Իմ կարծիքով՝ լավ կլինի՝ մեկ որ գնանք գյուղատնտեսի մոտ ու ճար խնդրենք նրանից, — ասաց Գասպարը, — վոր գյուղացիների մեջ ամենից աչքաբացն էր, — իսկ թրթուրի «քիսաները» չես հենց եզուց բոլորը պիտի հավաքեմ, աչրեմ. ով ուզում է, թող իմ արածի պես անի:

2. «ՔԻՍԱՆԵՐԻ ԱՅՐԵԼԸ»

Մի բավականին մեծ այգի չեր Գասպարի այգին՝ մասքենու ցանկապատով շրջապատված: Մեծ մասը բռնում էր խաղողի այգին իսկ մնացած մասում պտղատու ծառերն էին, վորոնց մեջ կային, ծիրան, խնձոր, տանձ և այլն:

Գասպարն ու իր 15 տարեկան տղան՝ Միսակը, սկսեցին իրենց աշխատանքը այգում:

Առաջին որը նրանք հավաքեցին «քիսաները» ծառերի վրայից:

Նրանք բարձրանում էին ծառի վրա, մկրատով կտրտում «քիսավոր» մանր ճյուղերը ու վայր գցում:

Այն ճյուղերը, վորոնց ձեռքները չեր հասնում, մի չերկար փայտի վրա կապած կեռ չերկաթով կռացնում էին, մոտեցնում, ապա կտրում: Բայց կային ճյուղեր, վորոնք հնարավոր չեր կռացնել: Դրա համար էլ Գասպարը մի ճար գտավ. — չերկար փայտի ծայրին մի խանչալ կապեց ու ներքևում կանգնած՝ այդ խանչալով խփում, կտրում էր «քիսավոր» ճյուղերը:

Մինչև իրիկուն հազիվ պրծան: Կտրտած ճյուղերը հավաքեցին ծառերից քիչ հեռու մի բաց տեղ:

Մինչ Գասպարը կրակ եր անում, Միսակը պատռեց «քիսաներից» մեկը և նրա խորքում տեսավ բազմաթիվ մանրիկ թրթուրներ, վորոնք նոր ելին դուրս լեկել ձվիկներից:

— Այ, այ, հայրիկ, — կանչեց նա, — տես ինչքան թրթուր կա սրա մեջ:

— Հիմա մենք նրանց դատաստանը կանենք, — ասաց Գասպարը ու բորբոքեց կուլտի տակ դրած կրակը:

Միքիչ հետո «քիսաների» կուլտից մոխիրն եր մնում միայն:

3. ԱՅԳԻՆ ԿՏՐԵԼԸ (ԵՏԵԼԸ)

Մյուս ուրը Գասպարը կտրեց լազողի թփերի վոստերը (մատերը): Նա ուշի ուշով զննում եր այդ վոստերը. — վորը կանաչ եր և, ըստ լերևույթին, ցուրտը չեր տարել, կտրում եր ներքևից մկրատով, թողնելով 3 «աչք» (բողբոջ), վորոնցից շուտով պիտի կանաչեյին նոր վոստեր: Իսկ վորը չոր եր և ցուրտը տարած, կտրում եր ու զեն գցում:

Միսակն ել մի կողմից կտրած վոստերն եր հավաքում ու խուրձ-խուրձ զնում:

4. ՅՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Անցավ միջանի ժամանակ, ծիրանը ծաղկեց, քիչ հետո՝ ալուչան և միջանի մանր-մունր ծառեր:

— Ծիրանը լավ բերք ե խոստանում, — ասում եր Գասպարը:

Միջանի ուր լեղանակը լավ եր: Բայց հանկարծ ցրտեց, լերկինքը ամպեց, և անձրևն սկսեց գալ: Ողն ալնքան սառել եր, վոր անձրևի հետ խառնվեց ձյունը, վորի ծանր փաթիլները նստում ելին ծաղկած ծառերի վրա ու սառուցի պես պատում նրանց:

Գյուղացիների ղեմքերը մթնեցին:

— Յեթե գիշերը պարզկա արեց, իմացիր, վոր եդ ծաղկած ծառերից մի հատ պտուղ չի մնա. — ասում ելին նրանք:

Յեվ գիշերը պարզկա արեց: Զուրը փոսերում և գետի լեզերքներին սառեց:

Յերկու-յերեք ուր շարունակվեց այդ լեղանակը:

Ծաղիկը սկսեցավ ու թափվեց ծառերից:

Յեղանակներն արդեն լավ ելին, լերը Գասպարն ու Յոլակը միասին զնում ելին այգի:

— Յես իսկի չեմ նայել, — ասաց Գասպարի հարևան Յոլակը, — ծիրանն ի՞նչպես ե:

— Են ծաղկածը հալա ցուրտը տարավ, հիմի տեսնենք ցրտից հետո ծաղկածներն ինչպես կլինեն:

— Եհ, ով գիտե մի ուտելու ծիրան մնա, թե չե, — ասաց Յոլակը:

Հասան Գասպարենց այգին: Յրտերից հետո նորից ծառերը աշխուժացել ելին, և արդեն լերևում ելին կանաչ տերևները: Ծաղիկը թափվել եր արդեն:

Գասպարը պոկեց ծիրանի ծառից մի փոքրիկ ճյուղ, վորի վրա դեռ մնացել ելին ցրտահարության հետքեր:

— Այ, տես, — ասաց նա՝ պոկելով մի ցուրտը տարած ծաղիկ, — սրա մեջ վոչինչ չկա, բայց, այ, սա ցրտից հետո լե ծաղկել, և մեջը լերևում ե կանաչ պտղի կոճակը:

— Վնաս չունի, գոնե խնձորը, տանձը և մնացածները լավ լինեն, — ասաց Յոլակը, նայելով մյուս ծառերին, վորոնք նոր ելին ծաղկել:

5. ԽԱՂՈՂԻ «ՉՈՌԸ»

Նայեցեք խաղողի թփերը:

— Շուտով պիտի փորել, — նկատեց Յոլակը:

Կարճ կտրած վոստերի բողբոջներից կանաչել ելին բնքուշ աղվամազով ծածկված թարմ տերևները: Գասպարն ուշի-ուշով զննեց այդ տերևիկները:

— Ելի չու կա վրան, — գոգոհ ձայնով ասաց նա, — մի նայիր:

Յուրակը կռացավ ու դիտեց տերևները: Նրանց վրա կային կարմրավուն փոս ընկած բծեր, վորոնք միայն վարպետ աչքը կարող եր նկատել:

— Վաղը արի յերկուսով դնանք գյուղատնտեսի մոտ, — ասաց Յուրակը, — գուցե մեզ եփան ծծումբ բաց կթողնի և բժշկական ձեռքի քաղցր կտա: Հետո ծառերն ել պիտի բժշկել. ծիրանը ձեռքից գնաց, մնացածը գոնե ազատենք:

Գյուղատնտեսը նրանց սիրալիր ընդունեց և գովեց, վոր գիմել են իր խորհրդին:

— Մինչև խաղողի հասնելն այդին պիտի սրսկեք սկզբում ծծումբով, հետո մի յերկու անգամ բորբոսյան հեղուկով, վոր կապույտ քարից ու կրից ենք պատրաստում: Իսկ ծառերը պետք ե սրսկել պարիզյան կանաչով: Թրթուրի քիսաներն ել լավ եք արել. վոր հավաքել-այրել եք. հիմա մնում ե կիրքսել ծառերի քոբերը, վոր կեղևի մեջ դրած թրթուրի սերմերը փչանան: Յնթե կուղեք, յես ինքս մի անգամ կգամ ու կսովորեցնեմ ձեզ:

— Բա մի տաս անգամ ել շնորհակալ չենք լինի, վոր եղ-պիտի մի նեղություն քաշե՞ս, — ուրախացավ Գասպարը:

6. ԱՅԳՈՒԻ ԲԺՇԿԵԼԸ

Այդին սրսկելու համար մի հատ փուքս եր ձեռք բերել Գասպարը և մի յերկու փութ ծծումբ: Յուրակն ոգնում եր: Սկզբում ջրցիրով Յուրակը ջուր եր շաղ տալիս հեռվից ամբողջ թփի վրա, իսկ Գասպարը նրա յետևից փութով փչում եր ծծումբը, վորը փոշու պես նստում եր վաղերի վրա ու պատում տերևները:

Ծառերի բներն ամբողջովին մինչև վերևի ճյուղերը պատեց կրից ու ուրիշ նյութերից պատրաստած շաղախով, վորը բոսում եր յերկար փայտի ծայրին կապած լաթի կտորներով:

Մի որ ել Գասպարի առաջնորդությամբ յեկավ գյուղատնտեսը: Մի ձիու վրա բարձած բերում ելին գործիքները և հեղուկը, վորով պիտի սրսկելին այդին:

Գյուղացիներից շատերը յեկել ելին նայելու:

Գյուղատնտեսն ամրացրեց Յուրակի մեջքին ամանը, վորի մեջ լցրած եր «պարիզյան կանաչ» հեղուկը: Ամանին ներքևից ամրացրած եր մի ռետինե խողովակ, վորի ծայրին կար մետաղե տափակ ծորակ: Նա ինչ-վոր բան պտտեցրեց ամանի վերևի կողմը. ինչ-վոր բան սարքեց, ապա բաց արեց ծորակը: Հեղուկը դուրս թռավ նրա միջից, իսկ Յուրակն ուղղեց նրան ծառերի կտարներին: Հեղուկը սեղմ, ուժեղ հոսանքով դուրս եր գալիս ծորակից և ապա ցրիվ գալիս մանր կաթիլներով ծառերի տերևների, վոստերի վրա:

Նույն ձևով սրսկեցին և խաղողի այդին, միայն պարիզյան կանաչի փոխարեն ամանի մեջ լցրել ելին բորբոսյան հեղուկ:

Գյուղացիներից միջանիսը հետևեցին Գասպարի որինակին: Իսկ շատերը գլուխները թափ ելին տալիս:

— Թող մի պտղի ժամանակը գա, յես նոր ձեզ հետ կխոսեմ, — ասում եր Գասպարը ու շարունակում եր հետևել գյուղատնտեսին:

7. ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Այդ տարին առանձնապես անհաջող տարի յեր գյուղացիների համար:

Պտուղները թրթուրը կերավ, իսկ խաղողը «չուր» տվեց: Բացառություն կազմում ելին Գասպարի և նրա որինակին հետևող գյուղացոց այգիները:

Խաղողի բերքը թեև քիչ եր, բայց վողկույզներն առողջ ելին և հյութալի: Իսկ պտուղը բոլորովին չեւ փչացել:

Բոլորը գալիս նայում ելին այդ այգիներին ու ափսոսում, վոր իրենք ել ժամանակին չհետևեցին նրանց որինակին:

ՀԱՐՑԵՐ

- Ձեզ մոտ այգիներ կան:
- Այգիների ի՞նչ հիվանդութիւններ կան ձեր շրջանում:
- Ի՞նչ միջոցներով եք կուլում ձեզ մոտ այգիների վնասատուներին և հիվանդութիւններին դեմ:

ԱՌԱՋԱՆԻՐՈՒԹՅՈՒՆ

— Դիմեցեք գյուղատնտեսին և խնդրեցեք ցույց տալ ձեզ հիվանդութիւնների դեմ կուլելու միջոցները:

117. Բատրակ Սեթոն

I

— Լսիր, Սեթո շան, զավակս,— այս բառերով սկսեց կուլակ Գսպեն իր զրույցը բատրակ Սեթոյի հետ. — ախր քո հերը մեր դռանն է մեծացել, մեր հացն է կերել. հենց դձու ելիր, վոր եղպես պիտի լինելիր: Ի՞նչ ես խելքդ ջահելներին հետ դնում: Խելքի չեկ, արի ինձ նոքարութիւն արա. պարապ ման գալուց ի՞նչ ոգուտ:

— Լավ ես ասում, բայց դե մենք էլ մարդ ենք, ենպես արա, վոր ապրելու ճար լինի:

— Այդ իմ պարտքը լինի. թուղթ, պայմանագիր մեկ կողմ թող, չես հո քեզ խաբելու չեմ:

Սեթոն անփորձ չերիտասարդ եր. համոզվեց ու հոտադ մտավ Գսպելի մոտ, առանց վորեւէ պայմանագրի:

Առաջին օրը Սեթոն թիակն ու կողովը ձեռն առավ ու Գսպելի անխնամ միացած գոմը կարգի բերեց, անասունների կուտակված աղբը մաքրեց, տակները չորացրեց: Հետո ավելի առավ ու ահագին բակը ավելեց: Գսպեն մի կողմից, կինը մյուս կողմից ցուցմունքներ ելին տալիս:

Հենց առաջին օրը Սեթոն սաստիկ հոգնեց: Գիշերը նա շատ խորը քնեց:

— Քնից շուտ պետք է վեր կենաս, վոր շուտ գաս,— մյուս օրը սառը գեմքով նկատեց Գսպելի կինը. — շուտ վաղ առւր գոմը, անասունների տակը մաքրի:

— Սեթո, բաղչի պատը փուլ է չեկել, քարն ու կոշտը մի կողմի վրա պետք է հավաքել:

— Սեթո, սվաղի համար ցելս պետք է պատրաստել:

— Խոտը կտրանը փշանում է, մարագը պետք է տեղափոխել...

— Ի՞նչ ես ապուշի պես կանգնել, դե գործի անցիր:

Սեթոն չգիտեր՝ վորն սկսի, վորը թողնի:

II

Սեթոյի վիճակը գնալով վատանում եր. Գսպեն ու կինը մի բոպե հանգիստ չեղին տալիս. գլխին կանգնած՝ հրամաններ եր, վոր արձակում ելին

— Հարամ լինի եսպես օրը,— տրտնջում եր Սեթոն...

Սեթոյի ընկերները շուտով իմացան, թե Սեթոն ինչ որումն է. նրանք ել բատրակ ելին, բայց Սեթոյի պես չեղին տանջվում: Յերբ մի օր Սեթոն գանգատվեց, վոր Գսպեն ամսավանը չի տալիս, միշտ ձգձգում է, ընկերները սովորեցրին նրան, վոր գյուղխորհուրդ գնա, Գսպելից գանգատվի:

Սեթոն այդպես ել արավ:

Գործը ավին դատարան. վորոշեցին՝ Գսպելին տուգանել բատրակին խաբելու համար. յերկու շաբաթ նրան կալանքի տակ պահել. գրավոր պայմանագիր ստորագրել տալ Գսպելին, վորով նա պարտավորվում է ամեն ամիս Սեթոյի վարձը կանոնավոր վճարել:

ՀԱՐՑԵՐ

— Ձեր գյուղում վորքան բատրակ կա:

— Ի՞նչպես է նրանց դրութիւնը:

— Կան արդյոք այնպիսի բատրակներ, վոր առանց պայմանագրի աշխատեն վորեւէ կուլակի մոտ:

118. Սիմոնի արտը

— Սահակ, այ տղա, վաղի Պետրոսենց ու Ղուկասենց տունը, նրանց չեղները բեր, մինչև չես ել Ռուստամենց չեղը կբերես, լուծը-բանը կսարքես: Դե, ել կանգնելու ժամանակը չի:

Շուտով հայր ու վորդի լծել ելին չերկու զույգ չեղը սայլին, վոր չերեկվանից աղբը լցրած պատրաստ էր, ու քշում ելին գյուղի նեղ, քարոտ փողոցով դեպի արտը:

Սահակը հորիկ էր նստել ու քշում էր չեղներին:

Սայլը, ծանր դեկդեկալով գնում էր փողոցով ու չերեքնս դեմ առնում քարերին:

— Դե դուրբան, — կանչում էր Սիմոնը:

— Դե Մարալ, — բղավում էր Սահակը:

Գյուղից դուրս ճանապարհն աչքան քարոտ չեր:

— Եղ արտը քանի փութ պիտի ցանես, հայրիկ, — հարցրեց Սահակը:

Հայր ու վորդի սիրում ելին խորհուրդ անել իրար հետ գործի, անտեսության մասին:

Սահակն ել իրեն մեծի նման էր պահում:

— 12 փութ եղ է, վոր ձեռով ցրիվ տաս. համա գյուղատնտեսն ասում է՝ շարքացանով ցանենք. 6—7 փութ հաղիվ վերցնի արտը:

— Են ե, կցանենք ելի:

— Ցանելը կցանենք, խոսք չկա, համա մի բան կա չե:

— Ի՞նչ է վոր:

— Ասում են՝ լավ չի դուրս գա, հացից կկտրվես:

— Ինչո՞ւ:

— Դե բա մեքենան ի՞նչ է, վոր ցանածն ինչ լինի: Մինչև քո ձեռով չցանես՝ չիմանա ինչքան ես վերցնում բուռդ, մինչև հողը սերմով չլիացնես, բան չի դուրս գա:

— Ե, բա եղ մեքենան հենց հանաքի համար են հնարել:

— Եղ ել կա, բա: Գյուղատնտեսն ել ասում է՝ ուրիշ տեղեր շատ ենք ցանել, ամեն տեղ ել լավ է լինում:

— Լավ է ասում: Մեզ ել դպրոցում սկսել են սովորեցնել: Վարը, ցանքը, հունձը, կալը — ամեն ինչ մեքենայով պիտի անել:

— Դե տեսար: Համա գյուղացիք ուրիշ բան են ասում:

— Դե դու յել խալխին ի՞նչ ես լսում, մենք խելք չունենք, վոր ուրիշ խելքով անենք: — Դե, հո, Լաչին, հո, չե, — խարազանեց չեղին Սահակը:

— Ե, վորդի ջան ապրուստ է, հանաք բան չի: Մի բան վոր տեղը չեղավ, մի բան վոր սխալ ընկանք — ամբողջ տարվա հացից կզրկվենք: Մեր հուշան ել եղ արան է: Ամառը գութանով լավ վարել եմ, ել տեղ չեմ թողել: Հիմի չել ուժ եմ տալիս, պարարտացնում եմ: Հենց իմացիր, վոր իմ քրտնքով եմ ջրում հողը, ենպես եմ չարչարվում... Դե, դու չել վոր հետս ես, լավ գիտես, ել ի՞նչ ասեմ: Դե, Մարալ, հա, դե դուրբան:

Սայլը ճռնչալով ու դեկալով թռչում էր քարերի վրայից:

Մոխիրը թափում ելին արտի մեջ ու ցրիվ տալիս հողի չերեսը:

Յերեք որ շարունակ կրում ելին:

Արտը ծածկվել էր մոխրի շերտով:

4-րդ և 5-րդ որը հայր ու վորդի արորով հերկեցին հողը, հետո լավ փոցխեցին ու շարքացանով ցանեցին:

Գյուղատնտեսն ել եղտեղ էր ու ոգնում էր: Սիմոնի խնդրով սերմը խիտ ցանեցին:

Ընդամենը 7 փութ սերմ վերցրեց արտը:

Ցանելուց հետո, մյուս առավոտ հայր ու վորդի ջրում ելին ցանած արտը: Խորը ափոսների միջից ջուրը գլուխով վազում էր, փռվում ու ծծվում էր փափուկ հողի մեջ:

Սահակը զիլ ձենով չերգում էր՝ ինքն ել չգիտեր ինչ... վոչ դի չեր, վոչ քյորդլի, վոչ ել հորովել:

Հենց ենպես ձենը գցել էր գլուխը ու թնդացնում էր ողը:

— Բանդը շուռ տուր, բանդը, Սահակ, — կանչում էր հայրը ջրի գլխին կանգնած, — չերգելդ հո չարծավ:

Մի տաս ուրից հետո արտի սև յերեսն սկսեց կանաչել։ Փափուկ, կանաչ գորգը փռվեց արտի վրա։

Սիմոնը նայում էր արտին ու ուրախանում։

— Լավ է կանաչել, ըսկի խոսք չունեմ։ Թե վոր ամեն տարի չեղավ ուժ տամ, ըսկի մի տարի չեղարապ չեմ թողնի, կցանեմ։ Ապրի իմ Սահակը, խելոք տղա չե, շատ ել աշխատանք է դրել ինձ հետ։ հալալ է տղիս հացը։

Իսկ Սահակն այդ ըրպեջին դպրոցում դաս էր առնում, գաս էր պատասխանում, բայց միտքը դեպի արտն էր։

— Հիմի ինչ լավ կանաչին է տալիս արտը, եգուց պիտի գնամ մի նայեմ,—միտք էր անում նա։

ՀԱՐՑԵՐ

— Ձեր գյուղում շարքացան մեքենայով ցանքս անում են, թե վոչ։

— Շարքացանով ցանած արտն է բերք շատ տալիս, թե ձեռքով ցանածը։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

— Իմացեք՝ մի հեկտար հողը շարքացան մեքենայով ցանելու համար ինչքան ցորեն է հարկավոր և ինչքան՝ ձեռքով ցանելու համար։

— Դիպրամներ կազմեցեք և կախ տվեք խրճիթում։

119. Ինչպես մեր գյուղում կոլտնտեսություն հիմնվեց

1

Յես քաղաքում եմ աշխատում՝ խորհրդային մի խոշոր հիմնարկում։

Գարուն էր։ Հերթական արձակուրդս ստացա ու վճռեցի գնալ մեր գյուղը՝ հանգստանալու։

Իմ ծեր ծնողները գյուղում էին ապրում։ Նրանք ինձ

առաջվա պես չգիմավորեցին։ մի տեսակ ցրված, տխուր ելին։ Հետս խոսելիս մի տեսակ զոռով էր յերեսները ծիծաղ գալիս։

Ծերունիների այդպես տխրելու պատճառը չես չեյի կարողանում հասկանալ ու վճռեցի՝ հարցնեմ, թե ինքս ել վախենում եյի։ Վախենում եյի, վորովհետև յեղբայրս Ռուսաստանում էր ու չես նրանից նամակ չեյի ստանում։ Մի ըոպե մտքովս անցնում էր, թե նա հիվանդ, կամ շատ կարելի չե մեռած լինի, բայց ինձնից պահում են։

Յես մորս հարցրի։ Նա պարզ, առանց քաշվելու ինձ ասաց։

— Ժանտախտ ընկավ. ամբողջ գյուղի տավարը կոտորվեց։ Տաս սուռն է միայն վար արել, իսկ մյուսները մնացել են կանգնած։ Ըժկան չկա։

— Բա հետո, վերջն ի՞նչ եք անելու։ Հենց այդպես ձեռներդ ծալած պիտի նստե՞ք։ Ինչո՞ւ մի դես ու դեն չեք ընկնում, գավառ չեք դիմում։

— Գնացել են,—պատասխանեց մայրս,—գնացել են հարևան խորհրդային տնտեսությունից խնդրեն, վոր իրենց տրակտորներն ուղարկեն, մեր հողերը վարեն։

Իրիկնապահին սկսեց գյուղացիների յերեսը ծիծաղ գալ։ Ճորհրդային տնտեսությունը խոստացել էր՝ առավոտը 15 տրակտորից բաղկացած մի խումբ ուղարկի ու ամբողջ գյուղի հողերը վարի։

Այդ գիշեր գյուղացիների քունը չտարավ. բոլորն աչքերը բաց լուսացրին։

Դեռ արևը չծագած՝ բոլորը վոտքի վրա ելին։ Նրանք գյուղից դուրս, արտերի մոտ հավաքվել, տրակտորներին ելին սպասում։

Յես ել գնացի։

2

Մի չտեսնված բան էր։ Գարնան արևի առաջին ճառագայթները բլուրների արանքներից դուրս ելին գալիս ու մի ուրիշ

տեսակ լուսավորում բլուրներ զագաթները: Մի բարակ ել
քամի լեր սլալում: Գյուղացիք խումբ-խումբ հավաքվել ելին
իրար գլխի, բայց ամեն որվա պես սուս չեղին:

Հանկարծ մի բլրի հետևից արևի ճառագայթների հետ 15
ափզահա տրակտոր գուրս լեկան:

Տրակտորները գալիս ելին շարք ու շարանով, պրտպրտա-
լով ու ձենները գցած, վորը բոլորովին սազ չէր գալիս գյու-
ղացիների լուսթյան և թռչունների քաղցր ծղվողի հետ:

Գյուղացիք տարվածի պես՝ բերանները բաց նայում ելին
տրակտորների կողմը, վոր վազ ելին տալիս մեկ բլուրներ
ծերը բարձրանալով, մեկ ներքև գլորվելով: Վերջապես հասան
գյուղ:

Խորհրդային տնտեսության վարիչը, վոր հասակն առած,
զիլ ու պինդ, կոշտ ու կոպիտ, բայց բարեսիրտ ու խոսքի
տեր մի բանվոր եր, մոտեցավ գյուղացիներին ու բոլորին
ուրախ-ուրախ բարևելով՝ սկսեց սիրտ տալ նրանց.

— Մի վախենաք, հասնելուն պես ձեր արտերը կվարենք:
Մինչև աչքներդ խփեք ու բանաք, մենք վարած-պրծած կլինենք...
Բա... Տրակտորն եղպես բան է, հա...

Գյուղացիք ուրախ ժպտում ելին և ով ինչպես կարողա-
նում—պատասխանում եր նրան:

— Դեհ, — հանկարծ դարձավ վարիչը մեքանավարներին, —
սկսենք:

Մեքենավարները արակտորները բանի գեցին, նստեցին
վրաներն ու հրաման տված զորքի պես լցվեցին արտերը:

Բազմախոփ գութանները խրվում ելին հողի մեջ ու խոր-
խոր ափսներ բանալով՝ հողի շերտերն իրար հետևից հավասար
շարում ելին կողք-կողքի:

Գյուղացիք մտիկ ելին անում ու աչքներին չեղին հավա-
տում:

Հանկարծ նրանցից մեկը գոչ պես գոռաց ու ձայնը գլուխը
գցած՝ ընկավ արտերի մեջ՝ «կաց, կաց»...

Նրան հագիվ կանգնեցրին: Հարցնում են՝ «ինչ կա, ինչ
է պատահել»:

— Ել ի՞նչ պիտի լինի. թմբերն ուր են, թմբերը: Տրակ-
տորները թմբերն ել իրար խառնեցին ախր, ե՛: Բա իմ արտը
հարևանի արտից ել վճնց ջոկեմ:

Գյուղացիք մտիկ արին ու նոր միայն տեսան, վոր իսկա-
պես թմբերից շատերն արդեն չկան: Տրակտորները խումբ-
խումբ գնում գալիս ելին ու առաջներն ընկածը վարում:

Գյուղացիք մնացին շվարած:

— Եսպես ել բան ընի՞, — ասում ելին իրար — Վարիչին մի
հարցնենք տեսնենք՝ ի՞նչ կասի, — վորոշեցին մի քանիսն ու
գնացին նրա մոտ: Իրենց շփոթմունքը բացատրեցին նրան:

Վարիչը լսեց նրանց, արտերին նայեց ու ծոծրակը քորե-
լով՝ ասաց.

— Ուրիշ հնար չկա: Ահագին մի խումբ տրակտոր է բա-
նում, թմբի ժամանակ եք գտել, թմբի բոլորը պտտվել կլինի:
Այդպես վոր լինի, մի ամբողջ շաբաթ մենք այստեղ միու պես
ե անենք:

— Ինչ եք ասում, ե՛, եղ անելու բան է. — գյուղացիների
գլուխը բան չէր մտնում:

— Ի՞նչպես թե անելու բան չի:

— Բա ել հողը վճնց կիսենք:

— Ինչո՞ւ չեք կիսում, իսկի չել մի կիսեք, — հանգիստ պա-
տասխանեց վարիչը: — Գնացե՛ք՝ տներից սերմը հավաքեք, չեա
կտանեմ խորհրդային տնտեսություն, ախտեղ կգտեմ ու ձեզ
համար շարքացան մեքենայով կցանեմ, հետո վոր բերքը լեկավ,
կկիսեք:

— Բա եղպես ել բան ընի՞, — մի գլուխ ասում ելին գյու-
ղացիները:

— Գիտե՞ք, — պատասխանեց վարիչը տաքացած, — առաջուց
պիտի այդ մասին մտածելիք: Ասաց ու թողեց գնաց:

Գյուղացիք մնացին սառած-կանգնած, վոնց վոր թե գլխնե-
րին սառը ջուր լցնես:

Վճռեցին այդպես ել անել՝ ընկնել տներից սերմ հավաքել-
ել ձար չկար:

Մի ամսից հետո չես գտնուից գնացի: Իսկ հետո արդեն ծնողներին անամակ ստացա: Նրանք գրում էին, թե գտնուցիք բոլորն ել գոհ են, վոր միասին են ցանել ու հնձել:

Այս բանից աշխատանքը մի տեսակ հեշտացել էր: Բերքն էլ լավ էր: Վարիչը նրանց ասել էր, թե սերմերը զտելուց ու շաքացան մեքենայով ցանելուց ե, վոր լավ բերք ե չեկել:

Ինչ էլ ուզում ե լինի՝ այս անգամ գտնուցիները գոհ էին: Յեվ ի՞նչ, Ի՞նչ եք կարծում: Այսպիսի մի դատարկ բան գտնուի բախտը վորոշեց:

Գյուղը վորոշեց կոլտնտեսություն հիմնել ու հիմնեց: Հիմա ամբողջ գյուղում իննը տուն կուլակներից են մնում առանց կոլտնտեսության մեջ մտնելու:

ՀԱՐՅԵՐ

- Ձեր գյուղում կոլտնտեսություն կա:
- Քանի տուն ե կոլտնտեսություն հիմնել:
- Ովքեր են մտնում կոլտնտեսության մեջ:
- Կուլակն ել մտնում ե կոլտնտեսության մեջ:
- Կոլտնտեսությունն անհատականից ինչպիսի ե առավել:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Կոլտնտեսություններն ինքսուրսիս գնացեք ու ծանոթացեք աշխատանքներին:
- Այսպիսի մի թեմայով շարադրություն գրեցեք. «Կոլտնտեսությունն անհատականից ինչպիսի ե առավել»:

120. Մեր հարևանի վորդին

Գյուղում, մեր տան մոտ, ապրում եր մի ծերունի իր կնոջ հետ:

Նրանք միայն մի վորդի ունեյին, վորն ահա վեց տարի չեր, ինչ սովորում եր քաղաքում և չերբեք գյուղ չեր չեկել: Թե ինչ եր սովորում, վոչ մենք, վոչ ել ծնողները չգիտեյին:

Մի օր, մայիսին եր, հարևանի վորդին չեկավ:

Նա մի նիհար և տեսքով հիվանդոտ չերիտասարդ եր. ծնողներն ուրախացան: Հարևանները հավաքվեցին իմանալու քաղաքի նորությունների մասին:

Հարևանի վորդին, Սուրենը, ուրախությամբ պատմեց քաղաքի անց ու դարձի մասին:

Մենք հետաքրքրությամբ լսում էինք նրան և արդեն ուշ գիշեր եր, վոր ցրվեցինք:

II

Առավոտյան չես կրկին գնացի նրանց տուն: Այս անգամ հայր ու վորդի վիճում էին:

Հայրն ասում եր.

— Միջանի ուղբի փող ես բերել, վորդի, իզուր քամուն մի տա: Եդ փողով արի մի կով առնենք. կով չունենք:

Իսկ վորդին աշխատում եր համոզել հորը.

— Հայրիկ ջան, դու ախր չես հասկանում: Յես վեց տարի այդ եմ սովորել: Հողը պետք ե լավ պարարտացնել, վոր լավ բերք տա:

— Հողն առանց դրան ել բերք կտա, — առարկում եր հայրը, — հողից զոռով բերք չես կարող ստանալ: Կարիք չկա պարարտացնելու համար փող ծախսել: Հողին հանգիստ տուր, կլավանա:

Վեճը վերջացավ նրանով, վոր հայրը բարկացած վերկացավ տեղից ու ասաց.

— Յես վաղուց գիտեմ, վոր ուսումը մարդուն փչացնում է, հիմարացնում: Վասիլի վորդին առաջ պրոֆեսոր եր, հիմի գժանոցումն ե:

III

Վորդին իր ասածն արավ:

Քաղաքից բերել տվեց միքանի մեշոկ ինչ վոր պարարտանյութ և շաղ տվեց իրենց արտում:

Ապա, չնայած հոր գժգոհության, ձմեռվա համար իբրև վառելիք պատրաստած աթարն ել արտը տարավ:

Հարևանները թագուն ծիծաղում էին և ասում.

— Ղուկասը վորդուն ուսում տվավ, իրա գլխին պատիժ դարձրեց:

Յանելուց առաջ Սուրենը սերմերը լավ մաքրեց, ինչ վոր հեղուկով լվաց և ցանեց շարքացան մեքենայով, վոր խընդրել եր հարևան կոյտնտեսությունից:

Արտի մի մասում ցորեն ցանեց, մյուսում՝ բանջարեղեն:

Գյուղացիները ծիծաղում էին ու ասում.

— Նդ հողում մեր պապերի ժամանակից բանջարեղեն չի ցանվել, չի բուսնում. իսկ այդ հիմարն ուզում է զոռով բանջարեղեն ստանալ:

IV

Բերքի հավաքելու ժամանակն եկավ:

Գյուղացիները զարմացած նայում էին տուռզ հասկերին, չլուծալի կաղամբին, խոշոր պամիդորին, լոբուն ու վարունգին և գլխակոր հեռանում:

Հիմի ծիծաղելու հերթը Սուրենինն եր:

Իսկ Սուրենի հայրը, վոր առաջ հայհոյում և հիմար եր անվանում վորդուն, այժմ ուրախ ման եր գալիս արտում ու բոստանում և ասում.

— Բա ի՞նչ ելիք կարծում. իզուր եմ վորդուս ուղարկել

սովորելու: Ուսումը մեծ, շատ մեծ բան է: Առանց ուսում մարդն ինչի՞ չէ պետք:

ՀԱՐՑՆԵՐ

— Ձեր գյուղում հողը պարարտացնում են, թե վոչ:

— Սերմը զտած են ցանում:

— Ի՞նչ է արել ձեր դպրոցը բերքի բարձրացման համար:

— Ոգնեցեք ձեր ծնողներին դաշտային աշխատանքներում և պայքարեցեք հողամշակման կուլտուրական ձևերի համար:

— Գրեցեք «գյուղին մեքենա չե պետք» լողունգը և կախ տվեք խրճիթ-ընթերցարանում:

121. Սերմնացան

Հազար լերանի
քեզ, քաջ սերմնացան,
դաշտը գեղանի
չես թողնում խոպան:
Անխոնջ, ժրաջան
դու մեղվի նման
հանգիստ չգիտես:
Վաղ առավոտյան
վառ արշալուսին
որը բացվելիս
արևը գարնան
քեզ է առաջին
վողջունը տալիս.
Իրիկնադեմին
լերկրի լերեսին
լերբ մոլթ է իջնում,
նա չե քեզ նորից,
լեռան լետից

«մնաս բարև» ասում:
Քեզ է համբուրում,
քո դեմքը շոյում
իր հեղիկ շնչով
գեփուուն հովասուն,
քեզ է կախարդում,
քո ուշքը խլում
անուշ կարկաչով
անհանգիստ առուն.
դետակը ձորում,
թռչունը ոգում —
բոլորն ել սիրով
քեզ են վողջունում:
Հազար լերանի
քեզ, քաջ սերմնացան,
դաշտը գեղանի
չես թողնում խոպան...

122. Գուլթանի երգը

Հէյ... վեր կաց, գեղջուկ, դուք, ընկեր յեզներ,
գնանք շուտով արտ.
փորենք ակոսներ ճեղքենք սև կուրծքը
մայր հողի պարարտ:
Արևն ահա փայլում է վերից
գլխառատ սիրով,
անուշ գոլորշին շղարշի նման
ճոճում դաշտերով:
Հէյ... վեր կաց, յեզնուկ, հերիք մրափես.
վեր կաց, սերմնացան,
գնանք շուտով արտ, շող տուր հատիկներ
այնտեղ ցիրուցան:
Հէյ... վեր կաց, գեղջուկ, վեր կացեք, յեզներ,
միթե չեք զգում—
արտերը վաղուց սերմի կարոտից
լախս են, սգում:

123. Մայիսյան յերգը

Մայիսմեկյան որ—տոնն է գարնային,
բանվոր շարքերի ալիքն ուժգին.
տոնեցեք որը մայիսի մեկի:

Դուք, վոր համերաշխ՝ անողոք կռվում
գնդակի առաջ ձեր կուրծքն եք բռնում,
տոնեցեք որը մայիսի մեկի:

Կարծես բանվորի ձեռքի շարժումով
լուռ են անիվ, մեքենա ու բով.
տոնեցեք որը մայիսի մեկի:

Յերկրային բոլոր ուժերն ամեն տեղ
դողում են իրենց թշնամուց ահեղ.
տոնեցեք որը մայիսի մեկի:

Խիզախ մարտակոչ բանվոր գնդերի՝
կյանքին բռնության ու կապանքների.
տոնեցեք որը մայիսի մեկի:

124. Մայիսի մեկը Արևմուտքում

Ե՛յ վոտքի՛ ելեք, դուք, վոր դարերով
աշխատել եք մութ շախտում ու հանքում.
հասել է ահա մեր ազատ որը,
պարզենք ալ դրոշ որերում անգույն:

Կյանքը մեզ համար կույր ու անողոտ,
տերերի համար փառք ու գանձ յեղավ.
դուրս գանք բողոքի շարքերով համուռ,
ու թող մեզ վրա գնդակներ տեղան:

Ե՛յ, վոտքի, վոտքի, ամբողջ աշխարհի
բանվոր, գյուղացի, հեղափոխական,
հիմքից կործանենք այս աշխարհը հին
ու դիմենք առաջ, դեպի ապագան:

125. Մեր մայիս-մեկը

Փողոցը հուզվել է,	դրվում է խրոխտ
հորդահոս է, լիք է,	թմբուկը թռնդ:
փողոցով հոսում է	ե՛լ ուր է, անգոր է
մարդկային ալիքը:	տանջանքն ու կարիքը,
Ամեն տեղ ալ դրոշ,	փողոցով հոսում է
շարքերի դոփյուն,	մարդկային ալիքը:

126. Յերեխաներն ազատեցին

— Վանո, դո՛ւ յես:

— Յես եմ. — լսվեց պատասխանը:

— Դե, շուտով գնանք, թե չե կուշանանք:

Ու մուտքի դռան տակից, ապա դիմացի պատի մոտից, դուրս յեկան յերկու փոքրիկ տղա:

— Վա, ենպես եմ վախեցել, ենպես եմ վախեցել, վոր ելչասած. հենց վոր վեր կացա, մայրս յերազում խոսում եր. — ասացի՛ես ե՛ք բռնվեցի անձ վախեցա հա:

— Սո՛ւս, մարդ կլսի — պրծանք:

— Չե, վոչվոք չկա, բայց ավելի լավ ե բաժանվենք, ջուկ-ջուկ ճանապարհով գնանք, թե չե քեռիները* լիքն են, հոտոտում են ամեն տեղ:

— Լավ, կպատահենք — Նախալովկա — Արսենի գինետան մոտ, հա:

Խոսողները յերկու յերեխա ելին: Դիշեր եր. ցերեկը նրանք պատահմամբ լսել ելին, վոր բանվորները վորոշել են գիշերով հավաքվել քաղաքից դուրս գտնվող անտառը՝ տոնելու մայիսյան տոնը. և իրենք ել վորոշել ելին գիշերը զնալ նույն անտառը՝ տեսնելու, թե մեծերն ինչպես են տոնելու:

«Միքի՛չ ել գնամ, կհասնեմ», — մտածում եր Սանդրոն. այդ ժամանակ նա անցնում եր մի մեծ տան մոտով, ուր ճրագները դեռ վառվում ելին:

— Արդեն ժամը յերեքը կլինի, իսկ սրանք դեռ չեն քնել. հետաքրքրական ե, թե ինչ բանի յեն. — մտածեց նա: Թագուն մոտեցավ, պատուհանից ներս նայեց և մի բանից վախենալով, թագնվեց դռան տակ ու սկսեց ականջ դնել: Յերեք ըզպելից հետո նա արագ-արագ քալում եր: Հասավ Արսենի խանութին: Կամաց շվացրեց, ու կարծես գետնի տակից բուսավ Վանոն:

— Նդ ո՛ւր կորար եսքան ժամանակ, Յես կարծում ելի վախեցար, յետ դարձար տուն:

* Ժանդարմներ:

— Ինչպե՛ս չե, յես յետ դառնամ, — շնչալով ասաց Սանդրոն: — Շուտ վազենք Խուզադովի անտառը, ազատենք մերոնց, թե չե կորած են: — Ու նա արագ վազեց: Վանոն հազիվ եր հասնում նրան:

— Ասա ե, տո, ի՛նչ ե պատահել:

— Լսիր, — ասաց Սանդրոն, — յերբ վոր իրարուց բաժանվեցինք, յես գալիս ելի Ուգլինսկի փողոցով: Տեսնեմ՝ մի մեծ տան ճրագները դեռ վառվում են, ներս նայեցի, տեսնեմ՝ ժողով...

— «Դիշերս ժամի 4-ին պետք ե քսան ժանդարմ ուղարկել Խուզադովի անտառը. այնտեղ բանվորները հավաքվել են մայիսի տոնը կատարելու», — լսեցի յես:

Արյունս գլուխս տվեց, Միտք եմ անում. — սրանք վճռեղից իմացան:

Մեկ ել մի ձախ ինձ ծանոթ թվաց, սկսեցի ականջ դնել. և ի՛նչ, գիտե՛ս՝ ում ձախն եր — են մի սե-սե տղա յե գալիս է, մեզ մոտ — դեպոն, — նրա:

Յերեխաները արագ քալում ելին դեպի անտառը: Այդ անտառում եր, վոր բանվորներն այսօր ուզում ելին կատարել մայիսյան տոնը: Անտառում ամեն տեղ պահակներ ելին դրած, վորոնք ցած ձախով, բայց արագ հարցնում ելին նշանաբան:

— Մայիսն ազատություն ե բերում. — պատասխանում ելին բանվորները և անցնում պահակների շարքի միջից:

Մի ժամ եր, ինչ բանվորները հավաքվում, հավաքվում ելին:

Ժողովն արդեն սկսվել եր, յերբ պահակը ձախ տվեց մոտեցող յերեխաներին:

— Ձեր նշանաբանը:

— Ե՛ս ի՛նչ ե, — վախեցած բացականչեց Վանոն:

— Նշանաբանը. — հարցրեց յերկրորդ անգամ պահակը:

— Դե կորի, ի՛նչ նշանաբան, գնում եմ անտառ, ման գալու, — բարկացած պատասխանեց Վանոն ու բաջարար առաջ գնաց:

— Սրան տես. գիշերով ի՞նչ ման գալ. չլինի՞ սունկ ես քաղելու:

Բայց Վանոն չեր կոտրվում:

— Յես պետք ետեսնեմ Լևոնին. — հպարտ պատասխանեց նա:

— Ի՞նչ ես անում Լևոնին. գնա, տո, յերեխա, գնա քնի. — շարունակում եր պահակը:

— Եդ ի՞նչ աղմուկ ե, — հարցրեց մոտեցող բանվորը:

— Ա՛յ, ես յերեխաներն են ուզում գալ:

— Հա, ես Վանոն ե, Բալյանի տղան: Ի՞նչ ես շինում եստեղ:

— Ընկեր Ասատուր, ձեզ մատնել են, — խորհրդավոր կերպով շշնջաց Վանոն:

— Ի՞նչ, ի՞նչ ասացիր. — հարցրեց պահակը:

— Շուտ, պատմիր, ի՞նչ ե պատահել, — հարցրեց Ասատուրը: Վանոն պատմեց բոլորը, ի՞նչ վոր գիտեր:

Ասատուրը նրա ձեռքից բռնեց, ու մոտեցան ժողովին: Միտինգ եր:

Խոստոյն ասում եր.

— Ընկերներ, մենք այս գիշեր հավաքվել ենք այս անտառում տոնելու Մայիսի մեկը: Այս որը, ընկերներ, մեծ պատմութուն ունի: Այսոր բոլոր յերկրներին բանվորները փողոց են դուրս գալիս ու պահանջում են ութ-ժամյա բանվորական օր:

— Ընկերներ — ընդհատեց Ասատուրը, — վոստիկանութունն իմացել ե մեր ժողովի մասին, և գալիս են այստեղ՝ մեզ ձեռքակալելու:

Ու նա պատմեց Վանոնից իմացածը:

Բոլորն անհանգստացան, աղմկեցին:

— Ուրեմն տոն չանենք:

— Թող գան, մենք կհյուրասիրենք նրանց:

— Գնանք տններս:

Ու ելի շատ բացականչութուններ ելին լավում:

Սերգոն ծառը բարձրացավ և աջնտեղից գոռաց.

— Կամաց, ընկերներ:

Նրա սուր ձայնը բոլորին ստիպեց լռել:

— Ընկերներ, ի՞նչ եք ազադակում, կարող են լսել մեզ: Յեկեք կամաց քաշվենք Մուշտայիդի այգին ու մեր տոնը կատարենք: Աջնտեղ նրանք մեզ չեն գտնի:

— Ճիշտ ե, ճիշտ ե, ա՛յ, կեցցես, Սերգո, — ազադակում ելին վտանգը մոռացած բանվորները:

Վանոն ցած թռավ ծառից, ու բանվորներին հետ, ծուռ ու մուռ ճանապարհներով գնացին Մուշտայիդ: Բանվորներն այնտեղ ել պահակներ գրին ու շարունակեցին իրենց տոնը:

— Վոչվոք չկար: Ամբողջ անտառը ման յեկանք, հոգնեցինք. բան դուրս չեկավ. — շունչ չկար: Հավանական ե՝ ցրվել են. մեր մոտենալու հոտն առել են ու չորս վոտքով են փախել՝ վախկոտ նապաստակի նման: — Հայհոյում ելին ժանդարմները՝ ցողից բոլորովին թրջված անտառից վոստիկանատուն վերադառնալով:

Իսկ այդ միջոցին բանվորները կանոնավոր կերպով տոնում ելին մայիսի մեկը:

Նրանց մեջ ուրախ-գվարթ նստած ելին Վանոն ու Սանդրոն:

127. Կարմիր կակաչը

Հիշում եմ՝ տաք գարուն եր: Ծառերը ծաղկել ելին, Միքանի հոգով վորոշեցինք ոգտվել յեղանակից ու մի լավ մայիսյան տոն սարքել:

Առաջուց պայմանավորվելով՝ մենք դպրոց չգնացինք, այլ հավաքվեցինք քաղաքային այգում:

Տանից ամեն մեկս ուտելու պաշար ելինք վերցրել. միքիչ վիճելուց հետո վորոշեցինք նավով գնալ դեպի քարափը և հետո վերադառնալ քաղաք: Նավով զբոսնելը մեր ամենասիրելի զվարճութունն եր: Ամբողջ ճանապարհին մենք մենակ ու խմբովին յերգում ելինք, հանաքներ անում, սրախոսում, ծիծաղում:

Հասանք ափը, իջանք. անցանք դաշտ, այդտեղ սկսեցինք

խաղալ: Բավականին հոգնելուց հետո նստեցինք սարի լանջին՝ միմյանց բան ուտելու: Շտապում ելինք, վոր մինչև իրիկուն տուն հասնենք: Յետ դառնալիս, ճանապարհին ծաղիկներ քաղեցինք, գլխավորապես կարմիր կակաչներ:

Ուրախ-ուրախ վերադարձանք և իսկի չնկատեցինք, թե ինչպես քաղաք մտանք:

Մենք գուցեբրով գնում ելինք ու յերգում... Հանկարծ վոստիկանները մեզ կանգնեցրին, մեր գլխարկներին ու կրծքին ամրացրած կարմիր կակաչները պոկեցին և տարան վոստիկանատուն:

Այնտեղ բարձրահասակ, լայնաթիկունք, ուռած, թուխ դեմքով «պարոն պրիստավը» մեզ մանրամասն հարցաքննեց, անուններս գրեց, աղջիկներին արձակեց, իսկ մեզ «սրիկա տղաներ» անվանելով, հրամայեց բանտարկել առանձին:

Այդ «առանձինը» մենք հասկացանք այն ժամանակ, յերբ մեզ տարան նեղ ու մութ անցքով ու փակեցին մի փոքրիկ, դատարկ սենյակում, վորի պատուհանները վանդակապատ ելին:

Սենյակի մթուժյունն ու մեր դրուժյան հանկարծակի փոխվելը մեզ այնպես եր սառեցրել, վոր մենք վեր ելինք քաշվել ու իրար սեղմած կանգնել:

Հանկարծ բանալին պտտվեց: Ներս մտավ դարադավոյը, թե գիշերապահը—չգիտեմ, միայն հիշում եմ, սոսկալի խմած եր ու քիչ եր մնում ձեռքից դցի մեզ համար բերած թիթեղե լամպը:

Նա հայհոյում եր:

Համպի աղոտ լուսով յես սկսեցի դիտել մեր «առանձին բնակարանը»:

Խոնավությունից պատերը բորբոսնել ելին. առաստաղից թափվում եր դաճը, հատակը տախտակած եր, բայց այնքան կեղտոտ, վոր մենք սիրտ չեկինք անում նստելու:

Ջրոսանքը մեզ բավական հոգնեցրել եր, ու մենք վերջն ստիպված յեղանք նստելու հատակին, վորովհետև ել ուրիշ տեղ չկար:

Գլուխս պտտվում եր:

Յես չեյի հասկանում, թե մեր վոր մեղքի համար ենք ընկել այստեղ:

Մի յերկու ժամից հետո մեզ մոտ յեկան գիմնադիալի վերատեսուչը և դաստիարակը. պարզելով դրությունը՝ նրանք մեզ մի լավ խրատելուց հետո տուն արձակեցին: Հետո մենք իմացանք, վոր այդ որը բանվորների գործադուլ ե յեղել, ու մեզ բանտարկող վոստիկանները մեզ հեղափոխականների տեղ ելին ընդունել:

Հետևյալ տարին մեզնից միքանիսն իսկապես մասնակցեցին Բագվի բանվորների գործադուլին, բայց այդ անգամ արդեն հաստ պրիստավի թաթը չընկանք:

Կարմիր կակաչների շնորհիվ մենք իմացանք, վոր Մայիսի 1-ը վոչ թե հասարակ որացուլցի, այլ բանվորների մեծ տոնն ե:

Այդ ժամանակ Կովկասում և ամբողջ Ռուսաստանում այդ տոնը արգելված եր:

ՀԱՐՑԵՐ

— Ինչո՞ւ ելին ցարի ժամանակ արգելում Մայիսի տոնակատարությունը:

— Ի՞նչ տոնն ե Մայիսի 1-ի տոնը:

— Ձեր դպրոցն ի՞նչպես եր պատրաստվում դիմավորելու Մայիսի 1-ի տոնը:

— Նկարագրեցե՞ք Մայիսի 1-ի տոնը ձեզ մոտ:

128. Գեղեցիկ ո՛րը

Արևը թեքվել, մուտքին եր մոտեցել. ողը թարմ եր ու դուրեկան: Ճիշտ ե, դեռ սարերի գագաթներին ձյուն կար, բայց դարնան շունչն զգալի չեր ամեն տեղ: Դաշտերն ու սալալանջերը կանաչ ելին ու պայծառ:

Ամենքն ուրախ ելին ու զվարթ:

Պիոներները հավաքվել ելին դպրոցի բակում պարապմունքի և վճռելու, թե հաջորդ ուրը, մայիսի մեկին, ինչ ձևով



մասնակցեն տոնակատարութեանը: Կողմարն ու ողակա՝ վարներից մեկը գնացել ելին խրճիթ-ընթերցարան: Այնտեղ հավաքվել ելին գլուղխորհրդի նախագահը, կոմբժիշկը և կոմսոմոլի բժիշկը քարտուղարները, ուսուցիչը և ուրիշները՝ խորհրդակցելու վաղվա տոնի մասին:

— Գոհար, գիտե՞ս, շարք-շարք կանգնած եզուց կզնանք արտերի մեջ զբոսանքի, — ասում եր թուվուռն ու սիրուն Ջեմիկը:

— Իսկի չե՞լ չե, մենք պիոներներ ենք, մայիսի մեկին մենք մի լավաշխատանք պիտի կատարենք. — մեջ մտավ խելոք ու կրակոտ Նմիկը:

— Հա, հա, իհարկե, մենք ի՞նչ ենք... մե՞ք ի՞նչ ենք... են վոր ընկեր Գևորգն ասաց ե... մենք ի՞նչ ենք, — խառնվեց մոռացկոտ Թոմասը:

— Գիտե՞ք ինչ, սա ուզում ե ասել, վոր մենք պիոներներ ենք, իսկ ընկեր Գևորգն են ուրը բացատրեց, վոր պիոներ կնշանակի նոր ճանապարհ, նոր կյանք փնտռող, — խոսեց ծանր-ծանր Հեղուշը:

Սամվելն ել խառնվեց, Անիկն ել, ու խումբը մեծացավ: Նրանք բարձրաձայն խոսում, դատում ու վիճում ելին, թե մայիսի մեկի տոնին հարմար ե արդյոք աշխատել. թե պետք ե տոնեն ու միայն հանդեսներ կատարեն:

— Լավ, լավ, շատ մի գուռ տվեք գլխներիդ. այ, խորհրդակցութունը վերջացել ե, ընկեր Միմոնն ու Հարությունը գալիս են. կասեն, թե վաղն ինչպես ենք տոնելու. — ասաց մեկը:

— Դե հավաքվեցե՞ք, Մանուկ, փողդ փչիր, թող հավաքվեն, — ասաց կողմարը:

Յերկու բոպելից հետո բոլորը «պատրաստ» կանգնած ելին չսելու:

— Ընկերներ, — խոսեց կողմարը, — դուք արդեն գիտեք վաղվա տոնի նշանակութունը. դրա մասին թե չես եմ ձեզ ասել, և թե ուսուցիչներն են դասարաններում ձեզ պատմել: Մենք, իբրև նոր սերունդ, իբրև նոր կենցաղ կառուցողներ, պետք ե մեր այս մեծ տոնին ել նոր ձև ու կատարում տանք: Մայիսի մեկն աշխատանքի տոն ե, ու մենք աշխատանքով ել պիտի տոնենք այդ տոնը:

Վաղը հասարակական միտինգը, աղբյուրի առաջի հրավարակում, պետք ե լինի ժամը 12-ին, վոր ձմեռոցներում չեղած մարդիկն ել դան հասնեն: Իսկ մինչև միտինգն սկսելը մենք՝ պիոներներս պետք ե աշխատենք:

— Ի՞նչ, ի՞նչ պիտի անենք, — հարցրին այս ու այն կողմից:

— Այ, հենց այդ ե, վոր պետք ե վորոշենք մենք այսօր,

— ասաց կողմարը:

— Յես առաջարկում եմ գլուղի փողոցները մաքրել. բահեր ու ալեխներ կբերենք ու կմաքրենք, — ասաց Հեղուշը:

— Դա լավ բան ե, բայց գլուղխորհրդի նախագահն արդեն կարգադրել ե, վոր այդ բանը կոմյերիտականներն անեն առավոտը վաղ:

— Լավ, չես առաջարկ ունեմ, գնանք սարի ճանապարհը շինենք, — ասաց Սամվելը:

— Չե, չե, չե, դա շատ հեռու չե, կհոգնենք:

— Չե, չե, մենք սարի ճանապարհը չենք կարող շինել:

— Տո, դու ճանապարհ շինող ես:

Ամեն կողմից հարձակվեցին Սամվելի վրա:

— Յես ասեմ... գնանք իբր... իբր... իբր անենք, — կավագեց Թոմասը և վոշինչ ել չկարողացավ ասել: Բոլորը ծիծաղեցին:

— Մի բան ել չես ասեմ, — ասաց սիրուն Ջեմիկը, իբր չալ ու սիրուն աչքերը փայլեցնելով:

— Ասա:

— Մեր հարեան Մոսնանց Շողերն այրի կին ե, յերեք մանր յերեխաներ ունի: Բոլորն իրենց ցանքը վերջացրել են վաղուց, իսկ նա մի տասը փութ կարտոֆիլ ունի ցանելու: Եւ որը ՓՈԿ-ը նրանց հողը վարել ե, բայց Շողեր մոքիլը հիվանդ ե, չի կարողանում ցանել: Յես ասում եմ, վոր մայիսի մեկի տոնին մենք լավ աշխատանք կատարած կլինենք, յեթե նրա կարտոֆիլը ցանենք:

— Կեցցե խելոք Ձեմիկը, սրանից ել լավ առաջարկ չեք լինի.— բարձրաձայն ասաց ուրախացած կոկվարը:

— Կեցցե Ձեմիկը,— աղաղակեցին այս ու այն կողմից:

— Ընկերներ, ով ե դեմ Ձեմիկի առաջարկին:

— Վոչվոր: Ուրեմն վաղը առավոտյան, ժամը 9-ին, հավաքվում ենք այստեղ ու գնում ենք Շողեր մոքիլի կարտոֆիլը ցանելու. տղաները թող մի-մի բահ բերեն, իսկ աղջիկները մի-մի վեզրո կամ հաստ գոգնոց,— կարգադրեց կոկվարը:

*
* *

Մյուս որը «հսկա» երեկուն (ինչպես ասում էին նրան ընկերները) և ուժեղ Մեսրոպը գնացին Շողեր մոքիլի տունն ու շալակով կարտոֆիլը կրեցին վարած հողի մոտ: Մի ժամ ել չտեց, տասը փութ կարտոֆիլը պիոններն ընկնեցին, մարգեր արին և ուրախ-զվարթ, կարկաչ ծիծաղով վաղեցին աղբյուրը, ձեռներն ու յերեսները լվացին:

— Ինչ լավ բան արինք,— խոսեց ծանր ու մեծ Հեղուշը:

— Այ, յես վոր ասում եի՞ մենք... ինչ ենք... ինչ ենք... պետք ե... պետք ե... — ասաց Թոմասը:

— Մենք պիոններ ենք, այ Թոմաս,— վրա բերեց Ձեմիկը,— պիոններն ենք:

*
* *

Միտինգն սկսվեց. այդտեղ էին դպրոցի բոլոր աշակերտության հետ և պիոններն:

Բջիջի քարտուղարը միտինգը բաց արեց և խոսեց տոնի նշանակության մասին:

Այնուհետև գլուղխորհրդի նախագահը խոսեց ու գովեց պիոններին, վոր ամենալավ աշխատանքն էին կատարել:

Բոլորն ել ուրախացան ու հուզվեցին:

Վերջում պիոններների կողմից խոսեց կրակոտ Ձեմիկը, վորն իր ճառը վերջացրեց այսպես:

— Աշխատանքն ե մեր տոնը, և մենք այսպես ենք տոնում:

—
ՀԱՐՑԵՐ

— Դուք ինչպես տոնեցիք մայիսի 1-ը:

129. Առաջադրություն գլուղը հետազոտելու համար

Գլուղը հետազոտելիս բաժանվեցեք մի քանի խմբի: Ամեն մի խմբին մի առանձին խնդիր տվեցեք:

Դ.ԴԻՐ. ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐԲԸ

1. Գլուղը քաղաքի վրա կողմն ե գտնվում (հյուսիսում, հարավում, արևելքում, արևմուտքում):
 2. Ինչպիսի տեղում ե գտնվում. սարի վրա, թե՛ փոսում:
 3. Գլուղի մոտով գետակ անցնում ե, և ինչպիսի գետակ:
 4. Լիճ, ավազան ու ջրհորներ ունի՞ արդյոք:
 5. Գլուղի շրջապատն անտառ կա, և ինչպիսի անտառ:
 6. Մարգագետիններ կան և վրա կողմն են ընկած:
- Ստացած նյութերի հիման վրա խմբակը պետք ե գծի գլուղի և իր շրջակայքի հատակագիծը:

II ԽՆԴԻՐ. ԳՅՈՒՂԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Գլուղխորհրդից իմանալ՝ գլուղը քանի՞ տուն ունի, քանի՞ տղամարդ, կին, յերեխա, և սրանցից քանիսն են դպրոցական:

2. Գյուղին հիմա վճրքան հող ունի, և վճրքան ունեք մինչ հեղափոխությունը:

3. Գյուղը վճրքան վարելահող, մարգագետին, անտառ, անհարմար հող ունի:

4. Ի՞նչ սխտեմի տնտեսություն ե (լեռագաշտալին, բաղձագաշտալին), արտերում ի՞նչ են ցանում ու տնկում:

5. Գյուղը մեքենաներով ոգտվում ե արդյոք, և վճրտեղից ե ճարում:

6. Անհարմար հողը վոչնչացնելու և գյուղատնտեսությունը քարձրացնելու համար գյուղում ի՞նչ ե արվում:

7. Գյուղը վճրքան անասուն ունի՝ կով, չեզ, ձի. գոմեշ, վոչխար, խոզ: Ի՞նչպես են պահվում անասունները և ի՞նչ ոգուտ ունեն նրանցից գյուղացիք:

8. Գյուղացիք վորեւ տնայնագործական արհեստով պարապում են արդյոք:

9. Գյուղում կոոպերատիվ կա՞ արդյոք և ի՞նչ ոգուտ ե հասցնում գյուղացիներին:

10. Ո՞ւմից են գյուղացիք ոգնություն ու ցուցմունք ստանում, թե ի՞նչպես պետք ե լավացնեն իրենց տնտեսությունը:

III ԽՆԴԻՐ. ԳՅՈՒՂԻ ԿԵՆՅԱՂԸ

1. Համեմատել գյուղի ընդհանուր տեսքը քաղաքի ընդհանուր տեսքի հետ:

2. Նկարագրել, թե ի՞նչ են տեսել գյուղի հրապարակում:

3. Մտիկ անել ու նկարագրել գյուղացու խրճիթը (արտաքին տեսքը, սարքը (կահավորում), վճրտեղ են քնում, վճրտեղ են լվացվում և այլն):

4. Համեմատել կուլակի տունը միջակի ու չքավորի խրճիթի հետ:

5. Հարց ու փորձ անել, թե ի՞նչպես ե անցնում գյուղական ընտանիքի որը:

6. Ի՞նչպես են անցկացնում հանգստի օրերը:

7. Ի՞նչպես են ապրում պիտանքները — վճրքան ժամանակ են դպրոցում լինում, տանն ի՞նչ գործ են անում, ի՞նչ խաղ են խաղում, վորեւ հասարակական աշխատանք կատարում են արդյոք, պիտանք շոկատ կա՞ արդյոք գյուղում, ի՞նչ աշխատանք ե կատարում այդ շոկատը:

IV ԽՆԴԻՐ. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1. Քանի՞ մարդից ե բաղկացած գյուղխորհուրդը:

2. Յե՞րբ ե խորհուրդն ընտրվել և վճրքան ժամանակով:

3. Ի՞նչ ե անում գյուղխորհուրդը:

4. Ի՞նչ ե անում նախագահը:

5. Ժողովներում գյուղխորհուրդն ի՞նչ հարցեր ե դնում:

6. Ի՞նչպես ե ոժանդակում գյուղխորհուրդը դպրոցին:

7. Ի՞նչ պետք ե անի գյուղխորհուրդն աշակերտների ու փոքր յերեխաների համար:

V ԽՆԴԻՐ. ԳՅՈՒՂԻ ԿՈՒԼՏ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Դպրոց.

1. Դպրոցի արտաքին տեսքը:

2. Ի՞նչպես ե դպրոցը սարքված (կահավորված)

3. Քանի՞ յերեխա չեն սովորում այնտեղ՝ տղա և աղջիկ:

4. Գյուղի բոլոր յերեխաների (դպրոցական հասակի) վճրմասն ե դպրոց գնում:

5. Դպրոցը քանի՞ խմբակ ունի:

6. Աշակերտները բավարար չափով գրքեր ունեն արդյոք՝ վճրտեղից են գնում և ո՞վ ե գնում:

7. Վերջին տարում դպրոցական աշխատանքների ընդհանուր յեղեղ ե արդյոք և ի՞նչո՞ւ:


8. Կապ ունեն արդյոք նրանք քաղաքի դպրոցի հետ: Ի՞նչ են անում արդյոք նրանք քաղաքի դպրոցներից և ի՞նչ են ստանում վերջիններից:

Խրճիթ-ընթերցարան.

1. Յե՞րբ ե կազմակերպված, ի՞նչպիսի շենք ե գրադեցնում:

2. Որական միջին թվով քանի մարդ է այցելում խրճիթը, ի՞նչ թերթեր են ստացվում:
3. Խրճիթ-ընթերցարանին կից ի՞նչ խմբակներ են գործում:
4. Ի՞նչ դասախոսություններ ունեցվապացումներ են տեղի ունենում և չե՞րք են տեղի ունենում: Անդրազեաների դպրոց կա՞ արդյոք: Քանի՞ տղամարդ, քանի՞ կին է սովորում այնտեղ, քանի՞ տարեկան են:

Ինչպես պե՞տք է գծել գյուղացիական օժանդակության սխեման. Դպրոցներից մեկի աշակերտները Փանիկ գյուղին (Արագածի տակ) ուսումնասիրելիս՝ գծել են միջակ գյուղացու տնտեսության հատակագիծը, կամ սխեման: Ահա՛ ձեզ այդ սխեման:



Ա.Ռ.Ա.Ա.Դ.ՈՒԹՅՈՒՆ

- Այս սխեմայով ուսումնասիրեք ձեր գյուղը:
 — Կազմեցե՞ք ձեր գյուղի միջակ գյուղացու տնտեսության սխեման:

130. Եքսկուրսիայի ժամանակ կայարանում ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել

— Դիտեցե՛ք կայարանի տեսքը և նկարագրեցե՛ք այն: Տեսե՛ք, թե կայարանն ապրելու տներից ինչո՞վ է տարբերվում:

— Իմացե՛ք, թե կայարանի ներսում ինչ շինություններ կան: Այդ շինությունները ցուցակագրեցե՛ք, նշանակելով, թե ամեն մեկն ինչ բանի համար է հարմարեցված: Ձեռքով դժեգե՛ք կայարանի ներսը լեզած շինությունների դասավորությունը:

— Նշանակեցե՛ք, թե կայարանը մաքուր պահելու համար ինչ է արված այնտեղ, և զրի առե՛ք այն լողունգներն ու հայտարարությունները, վորոնք կոչ են անում մաքրություն պահպանելու:

— Հետևեցե՛ք ձեր ծանոթ ճանապարհորդներից մեկին ու մեկին, վորտեղ է գնում, կայարանում ինչ է անելու և ինչ կարգով:

— Հետևեցե՛ք զնացքը կայարանում դիմավորելուն, տեղ հասնելուն և ճանապարհ դրվելուն:

131. Պոստային աղավիններ

ա.

Պոստային աղավինների կատարած թուխքներից ամենադժվարը ջրային մեծ տարածության վրա թռչելն է:

Ջրերի վրա վոչ մի առաջնորդող նշան չկա: Առանձնապես դժվար է թռչել մառախուղի ժամանակ, չերը նրա թանձրության միջից արևն անգամ չի չերևում: Սակայն չե՛թե աղավինու հիշողությունը, տեսողությունն ու լսողությունը նրան չեն ոգնում, մնում է միայն մեկ միջոց, այն է՝ հոտառությունը. հոտառության միջոցով աղավինն փորոշում է իր բնի ուղղությունը:

Այս հոտառութիւնը չքանում ե միայն սաստիկ վախի ժամանակ: Այստեղից պարզ յերևում ե, թե վերջաւան կարևոր ե, վոր պոստային աղափնու գործող կրծքում բաբախի մի համարձակ սիրտ:

Բ.

Մեկ անգամ Թեալոքին և ուրիշ յերկու աղափնիներէ տեղավորեցին մի մեծ նավի վրա: Վորոշվեց, վոր նրանց ազատ պիտի թողնելին, յերբ ավել աչքից չքանար:

Տաս ժամվա ճանապարհորդութիւնից հետո նավի վրա մի սարսափելի դժբախտութիւն տեղի ունեցավ՝ շոգեմեքենան փչացավ: Թանձր մառախուղի մեջ նավը տատանվում եր մի թեթև տաշեղի նման: Նա միայն սուլում եր գուր տեղը և ոգնութիւն խնդրում:

Այս խորտակվող նավի վրա մեկը հանկարծ հիշեց պոստային աղափնիներին: Նրանցից ընտրեցին մեկին, աղափնու պոչի ներսի կողմից կապեցին մի անթըջելի կտորի մեջ կապված հեռագիր: Յերբ ամեն ինչ պատրաստ եր, թռչունին բաց թողին, և նա մի վայրկյանում կորավ մառախուղի մեջ:

Կես ժամից հետո թողին յերկրորդ աղափնուն: Սա թռավ, բաց միջանի վայրկյանից հետո վերադարձավ ու նստեց նավի կայմի վրա: Նա վախեցել եր, և վոչ մի բան ալլես չեր կարող նրան ստիպել, վոր նորից թռչի ալեկոծվող ծովի վրայով:

Ապա տախտակամածի վրա դուրս բերին յերրորդ աղափնուն, — «Թեալոքին»: Թեալոքի սիրտը մշուս յերկուսից ավելի համարձակ եր բաբախում:

Թեալոքի պոչի տակ կապած հեռագրի բովանդակութիւնն այս եր.

«Առափոտյան 'ժամը 12-ին, հինգշաբթի: Ափից 200 վերստ հեռավորութեան վրա մեր նավի մեքենան կտրվեց: Մառախուղի մեջ միանգամայն անձար ենք մնացել: Վորքան հնարավոր ե՝ շուտ ոգնութեան հասնէ: Նավապետ»:

Թուղթը, վորի վրա գրեցին նավային ընկերութեան հաս-

ցեն, գլանաձև փաթաթեցին, անթըջելի պատյանի մեջ դրին և կապեցին Թեալոքի պոչի մեջտեղը: Ապա նրան ազատ թողին:

Իրեն ոգի մեջ զգալով՝ Թեալոքը նավի վրա մի շրջան գծեց, ապա յերկրորդը, ավելի բարձր և այդպիսի շրջաններով սավառնեց վեր ու վեր, մինչև վոր բոլորովին կորավ ամպերի մեջ:

Առաջնորդվելով հոտառութեամբ՝ Թեալոքը միշտ մի ուղղութիւն եր բռնել, և արդեն նավից բաց թողնելուց մի րոպե հետո նա ուղիղ դեպի աղափնետուն եր թռչում:

Այդ ուրը աղափնետան տերն զբաղված եր, յերբ լսվեց արագ թափահարող թևերի ձայնը: Նա յետ դարձավ ու տեսավ, թե ինչպես մի կապույտ աղափնի նետի պես լուսամուտից ներս թռավ և իսկույն ջրի վրա վազեց: Տերը նայեց մի վայրկյան, թե ինչպես աղափնին ազանութեամբ ջուր ե խմում, և հանկարծ բացականչեց.

— Սա չէ՞ վոր իմ սիրունիկ Թեալոքն ե:

Իր սովորութեան համաձայն զրպանից հանեց ժամացույցը և տեսավ՝ ցերեկվա 2 ժամ 30 րոպեն ե: Հետո նորից Թեալոքին նայելով՝ նկատեց նրա պոչին կապած ժապավենը: Արագ փակեց դուռն ու լուսամուտները և Թեալոքին բռնեց. մի րոպեից հետո հեռագիրը նրա ձեռքին եր:

Հասցեն կարդալով՝ նա իսկույն փողոց վազեց և միջանի րոպեից նավային ընկերութիւնը հասավ: Այստեղ իմացավ, վոր Թեալոքը 200 վերստ թռել ե 2 ժամ 40 րոպեյում ովկիանոսի թանձր մառախուղի միջով: Մի ժամից հետո խորտակվող նավին անհրաժեշտ ոգնութիւն ուղարկվեց:

Սովորութեան համաձայն այս ընկերութեան քարտուղարն իր սեփական ձեռքով, անշնջելի թանաքով Թեալոքի աջ թևի փետուրի վրա գրեց նրա քաջագործութեան մանրամասն դէպքը:

Նավից ուղարկված յերկրորդ աղափնին անհետ կորավ: Յերևի նա զոհ գնաց կատաղի ովկիանոսին:

132. Թռչունները գարնանը

Նայիր այն ճնճողուկի կամ փայտփորի բներին, ինչպես քնքռուշիկ ձագուկները բանում են իրենց բերանները, ճիշ ու ծվոց բարձրացրած՝ խնդրում են իրենց մորից կերակուր։

Ինչ քաղցր ճովողուն է, վոր բարձրացրել են նրանք և ամեն մինը նրանցից ուզում են համոզել իրենց մայրիկին, ուզում են կարեկցություն շարժել դեպի իրենց։

Թող ինչքան կուզեն սիրուն ճուտիկները միմյանց առաջ կտրեն. թռչնիկ մայրն իր կարգը լավ գիտե. նա հերթը չի կորցնում, նա իր հաշվի մեջ չի սխալվում։

Նա գիտե, թե սրանից առաջ կերակուրը վորի բերանն է դրել. նա դեռ այն ել է հասկանում, թե իր ընկեր արուն վորին է կերակրել։ Նա ուրախանում է իր նախշունիկների վրա, մի յերկու ըուպե չել կանգ է առնում բնի մոտ, քրքրում է կտուցիկով տեղի փափուկ բուրդը, փափկացնում նրանց անկողինն ու աղաղ վերցրած՝ չետ է թռչում կրկին դեպի դաշտ։

Աչքդ մյուս կողմը դարձրո՛ւ, և ահա ծառերի ճղնիկների վրա չերձանիկ ծտերը հպարտ-հպարտ վոստեվոստ են թռչկոտում ու ցուլց են տալիս իրենց կողքին դողդողալով կանգնած դավակ-ներին թռչելու ձևը։


Միամիտ փոքրիկներ. չդիտենալով իրենց թևերի ուժը՝ սկզբում միջանի ըուպե ծվծվոց են բարձրացնում, լալիս են մոր քամակից, աղաչում են, վոր իրենց մենակ չթողնի։

Բայց ինչ. ամենորյա խնամոտ մայրն այսոր փոխվել է, նա քարասրտել է։ Նա թռել-գնացել է մյուս ծառի վրա կանգ-նել, բռնել է կտուցի մեջ անուշահամ կերակուրն ու խոստա-նում է նրա բերանը դնել, ով վոր սիրտ կանի իր մոտ գնալ։

Ինչ պետք է անել. չեթե մայրիկը կանչում է, ուրեմն մի բան գիտե, ուրեմն հեշտ է այս փոքր տեղն անցկենալ, հարկավոր է սիրտ անել ու բաց ընկնել ողի մեջ։ Ո՛հ, ինչ ուրախություն ինչ հեշտ բան, իրենք հիմի կանգնած են մայ-րիկի մոտ։

133. Կուռնկն ու սագը

ձճի կապուտակ ջրի յերեսին
ճարպիկ ու արագ սագիկն է լողում,
սուզվում ջրի տակ, դուրս գալիս կրկին
ու ինքը իրեն բարձրաձայն գովում.
«Ողում թռչում եմ, ցամաքում շրջում,
լճակի ջուրը պատում նետի պես:
Ինձպես ուրիշը չկա աշխարհում,—
վողջ թռչունների թագավորն եմ լես»։



— Իդուր ես գովում, հիմա՛ր, ինքդ քեզ.—
կուռնկը նրան ձայնեց վերևից.—
կարող ես արդյոք լողալ ձկան պես,
յեղնիկի նման վազել քարափից.
արծվի նման հպարտ, փառավոր
կարող ես պատել ծալքերն ամպերի.
լավ է գիտենալ մի բան հիմնավոր,
քան թե շատ բաներ, բոլորն ել թերի։

I

Ո՞վ չգիտե ճրտճրտան գորշ թռչնակին - անբախտ ճնճղուկին: Իսկապես վոր անբախտ, — ով ասես՝ հալածում է նրան: Այդ դեռ բավական չի — «գող» անունն էլ մի կողմից են կըպցրել նրան. չէ՞ վոր՝ կտուրը ցորեն ես փռում չորացնելու համար, մեկ էլ տեսար՝ ճրտ - «գող» ծիտն է, հատիկն առավ ու թռավ:

Ուրեմն էլ ինչո՞ւ չի կարելի վոչնչացնել այդ «գողերին»: Յեվ այդ բանում ամենաքաջը մանուկներն են: Նրանք ոճի պես ծառերին են փաթաթվում, վեր բարձրանում, ճնճղուկի բնին հասնում, ձվերը կամ ձագերը հանում, բունն ավերում: — Դու քանի՞ բուն ես քանդել, Մաթոս:



— Հինգ բուն, քսան ձագ էլ կոտորել եմ: Իսկ դո՞ւ, Մաթոս:

— Պա՛, քու տունը շինվի, հաշիվը կորցրել եմ:

Ահա այսպես պարծենում են «քաջ» մանուկներն իրենց «քաջագործությամբ»: Ծտերի վոխերիմ թշնամուց — կատվից էլ չես չեն մնում:

II

Բայց տեսնենք՝ ծտերն արժանի՞ չեն այդ հալածանքին: Բոլորովին:

Ծտերը կամ ճնճղուկները բոլորիս, մանավանդ հողագործների ու այգեգործների բարեկամն են. նրանք հսկայական ոգուտ են տալիս մեզ, և հիմար մարդիկ միայն չեն հասկանում նրանց տված ոգուտը:

Ո՞վ չգիտե, թե բույսերին ու պտուղներին ինչ մեծ վնաս են պատճառում զանազան միջատներ, վորդեր և թրթուրներ: Նայեցեք գարնանը նոր բացված տանձի, խնձորի կամ ծիրանի սիրուն ծաղիկին. զգվելի վորդը կամ թրթուրը կպել են նրան:

Մեկը կերավ, մյուսին կպավ և այսպես շարունակ:

Ուշի-ուշով նայեցե՛ք ու տեսե՛ք, թե այդ ավազակ ճրտակերներն ինչքան բանջարեղեն ու ծառի տերեւ են վոչնչացնում:

Զգվելի վորդը կերել, փքվել է, բայց ազահուլթյունից դադար էլ չի առնում... հանկարծ այդ րոպեյին «ճրտ» — «գող» ճնճղուկը վրա պրծավ, տոգած թրթուրը բերանն առավ ու թր՛ուռ: Յեվ այսպես՝ նորից ու նորից, շատ ու շատ ծտեր գալիս են, թոցնում, իրենց ձագերին տանում:

Հաշվել են, վոր ձագերից ամեն մեկն որական 50 միջատ, թրթուր կամ ճիճուկ է ուտում: Յուրաքանչյուր ճնճղուկ, միջին թվով, 5 ձագ է ունենում. ճնճղուկը ձագերին 30 որ այդպես կերակրում է: Ուրեմն, 5 ձագը միասին որական 250 վնասատու, իսկ ամսական՝ 7500 վնասատու կուտեն:

Սովամահ չլինելու համար ամեն մի վնասատու որական այնքան բուսեղեն է վոչնչացնում, վորքան իր քաշն է: Յեվ այդպես՝ 30 որ շարունակ: Յեթե յուրաքանչյուր թրթուր որական մի ծաղիկ վոչնչացնի, ապա ուրեմն ամսական 30 ծաղիկ կոչնչացնի: Նույն ժամանակամիջոցում 7.500 վնասատուն 225.000 ծաղիկ (ուրեմն և նույնքան պտուղ) կոչնչացնի: Բայց պետք է իմանալ, վոր կան ազա՛ն թրթուրներ, վորոնք որական 5 — 10 ծաղիկ կարող են լափել:

Ինքներդ կարող եք հաշվել, թե 225,000 տանձը, կամ խնձորը, կամ ծիրանը, կամ վորևե այլ պտուղ վորքան կկշռի և կամ վորդի վերածած՝ ինչ գումար կստացվի: Յեվ ո՞վ է տա-

լիս այդ գումարը.—Իհարկե ճնշողուկի մի բունը միայն: Հապա բոլոր ճնշողուկները միասին—իսկի հաշվել կլինի: Իհարկե դժվար ե հաշվել:

Դե յեկ ու խեղճ ծիտիկին «գող» անունը տուր, նրա բունը բանդիր, այն բունը, վոր այս կամ այն տեսակի 225,000 պտուղ արժե:

Թոշուկները մեր բարեկամներն են

Մի փանդեմ թոշուկների բները

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՈՒՆ

— Բներ շինեք թոշուկների համար. ամրացրեք ծառերին, ձեր դպրոցի և տների կառույցներին:

135. Պետիկը քաղաքում

I

Գյուղացի Գաբոն Պետիկին քաղաք բերեց. հանձնեց քրոջ տուն ու հրաժեշտ տվեց:

Հոր հրաժեշտից հետո Պետիկը մտա ծմունքի մեջ ընկավ. դեռ գյուղից նոր դուրս գալիս ինչ-վոր տխրություն բուն եր դրել նրա սրտում: Քաղաքից ստացած առաջին տպավորություններն էլ շնորհակալ ելին Պետիկին: Գյուղի տունն ու պարտեզը, կուտիկն ու Փիսոն, վաշիկն ու Սիրուշը—մեկ-մեկ գալիս անցնում ելին նրա մտքով:

Բայց նրա ազանջին կարծես դեռ հնչում ելին հոր վերջին խոսքերը.

— Պետիկ ջան, լավ կսովորես. գյուղը վոր կա՝ մի փոքր գետ ե, քաղաքը՝ խոր ծով. դուր չեն ասել՝ «ձուկը ծովումը

կմեծանա»: Գեղ համար դժվարը մեկ ետոր ե, մեկ ել՝ եզուց: Քաղաքին շուտ կսովորես: Մին ել տեսար՝ եկա քեզ տեսնելու:

Գլուխը զույգ ձեռքերի մեջ առած ու սեղանին կռթնած՝ Պետիկը մտքերի ծովն եր ընկել, իսկ նրա կողքին հանգիստ մոռացնում եր հորաքրոջ կատուն:

— Պետիկ ջան, մի տխրի,—ասաց հորաքույր Սանամը.— առավորը Սաթիկի հետ դպրոց կգնաս, արդեն ընդունված ես:

Յերեկոյան, փոքրիկ սեղանի շուրջը, ընթրում ելին բանվոր Ղազարը, Սանամը, Սաթիկն ու Պետիկը:

Առավոտյան Պետիկն ու Սաթիկը դպրոց գնացին. Պետիկը դպրոցի միջանցքի պատին փակցրած ցուցակի մեջ կարդաց իր և Սաթիկի անունները: Յերեկոսն ել նույն խմբի աշակերտներ ելին. բայց Պետիկին և Սաթիկին տարբեր դասարաններ ուղարկեցին, իրարից բաժանեցին:

Պետիկը մի կողմ կանգնած, յերեսը զույգ ձեռքերի մեջ առած՝ լալիս եր:

— Ինչո՞ւ յես լալիս, փոքրիկ:

Պետիկը նայեց. անուններ կարդացող անձանոթ մարդն եր, վոր ժպտադեմ նայում եր լացող Պետիկին:

— Սաթիկի հետ եմ ուզում. նա յեկ իմ դասին ե:

— Հա՛, Սաթիկի՞ հետ, շատ լավ. լաց մի լինի:

Սաթիկի անունն ու խմբի համարը գտնվեց:

— Դե յեկ յետեիցս,—ասաց անձանոթը.—բայց տես, ա՛յ, քո շուրջը գտնվող այս բոլոր յերեխաները քո ընկերներն են, և դու բոլորին այնպես պիտի սիրես, ինչպես Սաթիկին ես սիրում:

Պետիկն այդ ուրը Սաթիկի հետ ուրախ վերադարձավ տուն:

II

Ինչե՞ր ասես, վոր Պետիկը չեր տեսնում քաղաքում: Փողոցները լայն, յերկու կողմից մալթած. ինչքան ել մաքուր են, ուղիղ. ամեն ուր ավելում-մաքում են:

Մեկ դռնդռացնելով ավտոմոբիլ ե անցնում, մեկ՝ կառք, մեկեկ դրդալով՝ ծանր բարձած ֆուրգոն:

Ահա Պետիկի պես փոքրիկ տղաներ, հեծանիվներ նստած, ինչպես են սլանում. կարծես ծիծեռնակներ լինեն:

Ահա շարք-շարք խանութներ, վորոնց ցուցափեղկերը լիքն են գրավիչ բաներով — ել պատկերազարդ գրքեր, ել գուշն-գուշն տետրակներ ու մատիտներ, ել խաղալիքներ, արձաններ:

Պետիկը աչքերը վերև բարձրացրեց ու խանութի հսկայական ցուցանակի վրա կարդաց խոշոր տառերով գրված՝ «Հայ-գիրք»:

Աշակերտները շարունակ մտնում-լեւնում էին:

Պետիկը խանութներ ել տեսավ, վորտեղ խանութպանները շարան-շարան մրգեղենի յետևից հազիվ չերևում էին:

Գալիս եր գիշերը, փողոցներում կարծես ցերեկ լիներ, — ելեկտրական լապտերներին թիվ ու համար չկար:

Բայց մի բան ամենից շատ եր հետաքրքրում Պետիկին. կինոն եր այդ. Դեռ գլուղում յեղած ժամանակ շատ բան եր լսել կինոյի մասին. — այնտեղ ծովեր են ցույց տալիս, մեծ-մեծ նավեր, գազաններ. մինչև անգամ յերկրաշարժ ու հրաբուխ: Մարդիկ կինոյում կարծես հրաշքներ են գործում — վիշապների հետ են կռվում, առյուծ ու վագր սպանում, խալու վրա նստում, յերկնքով թռչում, ծովի հատակն են իջնում — մի խոսքով՝ բան չի մնում, վոր չանեն:

Շաբաթ որը բանվոր Ղազարն իր խոստման համաձայն իր ընտանիքը կինո տարավ:

Տուն վերադառնալուց հետո Պետիկն անկողնում յերկար ժամանակ «Տարզան»-ի մասին եր մտածում: Տարզանի ճարպ-կռթվունը, սարսափելի առյուծները, անտառները, ուրիշ աշխարհի մարդիկ գալիս անցնում էին նրա մտքով:

— Ձե, քաղաքը շատ լավ ե, — մտածում եր Պետիկը. — յերբ վաչիկն ու Սիրուշը մեծանան, նրանց ել ինձ մոտ կբերեմ, վոր նրանք ել լավ-լավ բաներ տեսնեն:

Կամաց-կամաց քունը հաղթեց Պետիկին, ու քիչ հետո, գլուխը բարձին դրած նա անուշ մըշտացնում եր. նրա դեմքին ինչ-վոր մի ժպիտ եր փայլում:

136. Կրկեսում

(Յերևանի դպրոցի աշակերտի պատմածը)

Աբովյան փողոցով անցնելիս մեր ուշագրությունը գրավեցին այնպիսի ափիշներ, վորոնց նմանը չերեք չեղինք տեսել. կենդանիներ, մարդկանց շորերով, — նվագում են, յերգում, պարում, — այ քեզ բան: «Դուրովը չեկել ե», — կարգացինք ափիշներից մեկում. «Այսոր Դուրովի յելուծն ե», — կարգացինք մյուսում... Այս արդեն լավ չեղավ. վաղուց ե՛լ ինչ զարմանալի բաներ ենք լսում «Կոլոս» կրկեսի մասին. հույս կա, վոր մենք ել տեսնենք:

Մեր հույան իզուր չանցավ. հենց վաղը, կիրակի ժամը 2-ին, մեր դպրոցի աշակերտներն ել ուրիշ դպրոցների աշակերտության հետ կրկես պետք ե գնալին:

Այդ որը շատ անհամբեր էինք դարձել բոլորս: Յես գոնե չիմացա, թե ինչպես անցկացրի ժամանակս:

Հետևյալ որը նշանակված ժամից դեռ մի ժամ ել շուտ հավաքվել էինք դպրոց: Գարնանային պայծառ արևն ու ջինջ յերկինքը ավելի էին բարձրացնում մեր ուրախ տրամադրությունները:

Շուտով մենք կրկես հասանք և մեր տեղերում բազմեցինք. ինչքան շատ աշակերտություն կար, ինչպես բոլորն ել անհամբեր սպասում էին:

Կրկեսի մեջտեղը շրջանաձև հրապարակն եր, վորի շուրջը նստած էինք մենք համարակալած նստարանների վրա. յետևի յուրաքանչյուր շարք իր առջևի շարքից մի աստիճան բարձր եր, այնպես վոր ամենայետևի նստարանների վրա նստողներն ել ազատ կարող էին տեսնել հրապարակը:

Հնչեց քաղցրաձայն յերաժշտությունը: Հետո հրապարակ դուրս եկան յերկու արագավազ նժույգ, վորոնցից մեկի վրա նստած եր մի տղամարդ, մյուսի վրա՝ մի կին: Զիերն արագ բուլորում էին հրապարակը, հաճախ ուղղությունները փոխելով:

հեծվորները ճարպիկ շարժումներով զարմանք ելին պատճառում մեզ. նրանք այն ելին անում, ինչ վոր անվարժ մարդը գուցե կանգնած ձիու վրա չէլ չհամարձակվի անել: Վաղող ձիու վրա կանգնում ելին, վզի ու փորի տակով շուռ գալիս, կռանում, ձեռքը գետին հասցնում, այնտեղից բան թուցնում և ուրիշ շատ ու շատ ճարպիկ շարժումներ անում: Մեր զարմանքն ավելի ևս մեծացավ այն ժամանակ, յերբ մեզ պես փոքրիկներն ել նման բաներ արին:

Ապա մենք տեսանք յերկու լեղբայրներին, վորոնցից յուրաքանչյուրը հինգ վառվող ջահ, կամ հինգ գնդակ, կարգով արագ նետելով ոգի մեջ, հերթով բռնում ու նորից նետում եր:

Վերջապես, բարձրաձայն ծափերի տակ հրապարակ դուրս լեկավ Դուրովը: Նա վողկորված խոսում եր ուսերեն լեզվով. դժբախտաբար մենք չեյինք հասկանում: Մոտիկ դռնակից լսվում ելին նրա գազանների բազմազան ձայները: Ահա նա նշան տվեց, և հրապարակ դուրս լեկան մի արջ և միքանի շուն ու կապիկ, բոլորն ել տղամարդու կամ կանացի հագուստներով. բրդոտ արջն սկսեց արագ-արագ պտտացնել դաշնամուրին ամրացրած գլանը, վորով դաշնամուրն սկսեց նվագել: շներից մեկը ծնծղա չեր ածում, իսկ կապիկներից մեկը՝ թրմբուկ մյուսները պարում ելին: Պարողներից մեկը հաստափոր բուրժով յեր նմանում, մի ուրիշն ել՝ նազուք մեջքով խանութի: Այս գազանների հեռանալուց հետո, տված նշանի համաձայն, հրապարակ դուրս լեկան յերեք ծովացու, բոլորովին թրջված, տարորինակ արտաքինով, անսովոր ձայնով: Դուրովը կենդանի ձկներ նետեց նրանց բերանները և, համաձայն նրա ցուցմունքի, ծովացուները բարձրացան ամեն մեկը մի արկղի վրա:

Դուրովի նետած գնդակը ծովացուներից մեկը բռնեց, նետեց մյուսին, և այսպես՝ հերթով: Գնդակը, կամ վառվող ջահը, ցովացուները յերկար ժամանակ ուղիղ պահում ելին իրենց վեր պարզած գնդերին:

Ապա մենք տեսանք բարեկամացած աղվեսին ու աքլորին, կատվին ու մկներին: Տեսանք վարժեցրած աղաթխներին, վորոնք մեկ մեկ գալիս ու նստում ելին պալթոդ հրացանի փողի վրա և նուշխիսկ կրակելիս չեյին թռչում: Հրացանի ամեն մի պալթոնին շատերն ելին վեր թռչում, բայց արի ու տես՝ աղաթխների իսկի վեճն ել չեր:

Անուհետև, գազանների ուրիշ շատ խաղեր տեսնելուց հետո, մենք տեսանք մի չինացու, վոր ահագին ձողը պահում եր ուսին, կամ նուշխիսկ ձակաթին, իսկ մի փոքրիկ տղա, ձողով վեր բարձրանալով, այնպիսի խաղեր եր անում, վոր մենք կարծում ելինք, թե ահա ուր վոր ե՛լ կընկնի, և մեծ պատառն ալանջը կմնա: Բայց փոքրիկ տղան իրեն վերևում այնպես եր զգում, ինչպես մենք գետնի վրա:

Խաղերի ընթացքում, մեջընդմեջ, հասարակութանը զվարճութուն եր պատճառում ծաղրածուն՝ իր տարորինակ արտաքինով, ծիծաղելի շարժումներով ու արարքներով:

Կրկեսի խաղերն սկսվելուց չորս ժամ հետո մենք հեռացանք՝ տանելով մեզ հետ խորը տպավորութուններ:

137. Մարգարը քաղաքում

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդեն առավոտից Մարգարը քաղաք գնալու պատրաստութուն եր տեսնում: Հայրը բան պիտի տաներ քաղաք ծախելու և խոստացել եր նրան ել հետը տանել:

— Մայրիկ ջան, շուտ արա, շորերս լվա, ուշ ե, չես ել ես ե տրեխիս կարկատանը վերջացնում եմ, — խնդրեց Մարգարը:

— Ախի, Մարո, ոջախը վառի, շուր դիր, — ձայն տվեց մայրիկը:

Մարոն, սևիկ աչերով ու կարմիր թշերով՝ Մարգարի փոքրիկ քույրիկը, կուլան ուսն առավ և ուղղվեց դեպի աղբուրը:

— Շուտ չեկ, Մարո ջան,— ձայն տվեց նրա չետից
Մարգարը:

— Իե խոստացիր, վոր ինձ համար քաղաքից բան կբե-
րես, շուտ գամ:

— Կբերեմ, Մարո ջան, քեզ համար քաղաքից ծամոն
կբերեմ, հուլունք կբերեմ:

— Մի լավ տետրակ ել կբերես:

— Մի լավ տետրակ ել կբերեմ: Դե, վազիր:

Ու Մարոն ուրախ ժպտալով դեմքին վազեց դեպի աղբյուր:
Մինչ այդ՝ սալը ճռնչալով բակը մտավ: Ահա զոր հայրիկը, սալը տարել եր հարևան գյուղի դարձնի մոտ
նորոգելու:

— Անխիդը մանեթ ու կես առավ ու ելի իմ ուղածի
պես չի շինել:

Ահա զոր մտավ տուն, դուրս բերեց չորս ջվալ ցորեն, մեկ
ջվալ լոբի, մեկ ջվալ գարի ու դասավորեց սալի մեջ:

— Սալբի,— ձայնեց Ահա զոր կնոջը,— ես կարագն ել բեր,
գելի մորթին ել, ձվերն ել, դդուժներն ել, մի հինգ-վեց ել
ճուտ բռնի:

— Մայրիկ, իմ յերկու աքլորածտերն ել բռնի,— խնդրեց
գոմից դարձող Մարգարը.— դրանց փողով ինձ համար կարմիր
վզնոց եմ առնելու:

ՃԱՆԱՊԱՐՀԸ

Յերեկոյան դեմ, յերբ ճամպա չելան քաղաք գնալու, յեղա-
նակը լավ եր, բայց հետզհետե յերկինքը ծածկվեց սև-սև ամ-
պերով, և սկսեց բարակ անձրև մաղել:

Սալը, ծանրութեան տակ անքալով ու ճռնչալով, առաջ
եր ընթանում մեծ ծանապարհով: Գոմեշները կուշտ ու անհոգ,
ժուլորեն վորոճալով կամաց-կամաց առաջ ելին գնում:

Մարգարը, փաթաթված հին կապերտի մեջ, քնած եր:
Մանրահատիկ արձրեր թխթխկացնում եր ու նրան որոր
առում:

Առավոտյան դեմ, յերբ յերևացին քաղաքի ճրագները, Ահա-
զը ձայն տվեց:

— Մարգար ջան, վեր կաց, հասնում ենք:

Մարգարն շտապով դեն գցեց կապերտն ու առաջ անցավ:

— Քաղաքը վրն ա, հայրիկ:

— Այ, ես ճրագները,— մատը դեպի առաջ պարզելով
ասաց հայրը:— Են ճրագները քաղաքի բուշեքի ճրագներն են:

— Վոնց թե քուշեքի ճրագները,— զարմացավ տղան,—
քուշեքու՞մն ել ճրագ կվառեն:

— Այ, կգնանք՝ կտեսնես:

Մարգարն ապաժ ու զարմացած նայում ե քաղաքի
ճրագներին և մտածում, թե ինչո՞ւ չեն փողոցներում ճրագ
վառում, և ինչպե՞ս ե, վոր յերեսներն եղ ճրագները քարով չեն
տալի կոտրում:

Հանկարծ լսվեց յերկաթուղու սուլոցը:

Մարգարը հորը կաշելով հարցրեց:

— Բա ես ի՞նչ ծկտոց ե, հայրիկ, ես ել քաղաքի գեշն ե...

— Ի՞նչ գել, ես բոլին գել կլինի: Վագոնն ե, վագոնը,
ճչում ե՝ վագում, ճչում ե՝ վագում:

— Վոնց թե ճչում ե՝ վագում. եղ հո քաղաքի յերեսները
սիրտը կճաքացնի:

Անձրեղ դադարել եր: Յուրտ եր: Մարգարը կրկին փա-
թաթվեց կապերտի մեջ, նստեց հոր մոտ, նայում եր հետըզ-
հետե մոտեցող ճրագներին ու խորհում:

ՔԱՂԱՔՈՒՄ

Հասան քաղաքի կամրջին:

Պղտոր, վարարած գետը փնչացնելով առաջ եր գնում:

Այստեղ շատ ու շատ սալեր կային, վորոնք դանդաղ բարձ-
րանում ելին գառիվերով:

Լույսն արդեն բացվել եր:

Ահա զոր իջել եր սալից և գնում եր գոմեշների առաջից:

Մարգարը նստել եր հոր տեղը և մին գոմեշներին քշում, մին նայում եր հսկա շինութուններին:

— Հայրիկ, ես տներումս ո՞վ ե պարում.— հարցրեց զարմացած Մարգարը:

— Ես արդի գավոդ ե:

Իջան մի մեծ հրապարակ:

Եստեղ սալերը կանգ առան: հրապարակը դատարկ եր գեռ. միայն միքանի հոգի մեծ-մեծ ավերներով սրբում եին ու աղբը կուլտ-կուլտ անում:

Հետզհետե բաղաբը զարթնեց, և փողոցներն ու հրապարակը լցվեցին մարդկանցով:

Մարգարն ապուշ կտրած նայում եր շուկայի իրարանցմանը:

— Հայրիկ ջան, եսքան մարդ վճռեղ ե քնում:

— Ամեն մարդ իր տանը, Մարգար ջան,— պատասխանեց հայրը ծիծաղելով:

Շուտով Մարգարենց սալին ել գնորդներ մոտեցան:

— Ես ճտերը քանի՞ չես ասում, բիձա:

— Զուխտը մի մանեթ:

— Բա սա ինչ ե, սա ծախու չի,— հարցրեց գնորդը, առնելով Մարգարի ձեռից աքլորաճտերը:

— Ծախու չե, ամա սրանք մյուսներից թանգ են,— վրաբերեց Մարգարը:— Սրանք իմ աքլորներն են, կուտ շատ եմ տվել:

Բարիչեցին: Մարգարը ճուտիկները տվեց գնորդին:

Յերբ բոլոր ապրանքները ծախեցին, Ղևոնդը, մտնելով սալի չետեղ, փողերը համրեց, կապեց թաշկինակի մեջ ու գրպանը դրեց:

Մարգարն ել շուտ-շուտ գրպանից հանում եր իր փողերը, համրում և կրկին գրպանը դնում:

— Կոռպերատիվում ապրանքն եժան են ծախում, գնանք եստեղից առնենք:

Ու Մարգարի հետ բարձրացան մեծ փողոցով և սրան-նրան հարցնելով, չեկան բանկոտպի մեծ խանութը:

ԲԱՆԿՈՒՊՈՒՄ

Ներսն ահագին ժողովուրդ կար: Պիտի հերթի սպասելին: Մարգարը հոր փեշից բռնած, դիտում եր խանութի կյանքը:

Վերջապես հերթը Ղևոնդին հասավ:

— Ի՞նչ ես ուզում, բիձա ջան,— հարցրեց վաճառողը:

— Մի են կարմիր չիթը տուր տեսնեմ:

— Դե, ի՞նչ ե հարկավոր, ասա՛ գրեմ:

— Գրի՛, ութ գազ սրանից...

— Գազով չենք ծախում, բիձա ջան, մետրով ենք ծախում:

— Բա չես ի՞նչ գիտեմ պետքն ինչ ա:

— Պետք չի, հայրիկ, մետր ասա. մետրը արշին ու կես ե,— ասաց Մարգարը:

— Բա դու ի՞նչ գիտես, թե արշին ու կես ե:

— Մեր վարժապետն ե ասել:

Ու Ղևոնդը գրել տվեց Սալբու ու Մարուի համար դեյրացու, իրա համար շալվարացու և արխալուղացու, Մարգարի համար բլուզացու և ելի շատ բաներ:

Յեկան խանութի մյուս բաժանմունքը:

— Ի՞նչ եք ուզում, ընկեր:

— Գրի՛ տասը գրվանքա շաքար...

— Գրվանքով չենք ծախում, ընկեր, կիլոյով ենք ծախում:

— Դե գրի տասը տիլո...

— Տիլո չի, հայրիկ, կիլո՛, կիլո՛, մի կիլոն չերկու գրվանքա ու կես ա,— ելի բացատրեց Մարգարը:

Եստեղից ել առան շաքար, թեյ, չերկու բաժակ, մի սանր, իսկ մի ուրիշ բաժանմունքից՝ մի գերանդի, մի չերկաթե չեղան, չերկու բահ, մեխ, մի դուչ ու ելի ուրիշ բաներ:

Մարգարն ել իր աքլորաճտերի փողով գնեց Մարուին խոստացածը՝ ծամոն, հուլունք, տետրակ և կարմիր ժապավեն, իսկ իրա համար՝ մատիտ, թանաք, գրիչ, վզնոց:

Գնած իրերը յերկու ջվալի մեջ դասավորելով՝ շալակեցին ու դուրս յեկան։

Փողոցում Մարգարի պես մի յերեխա, արկղն առաջին բռնած, ձայն եր տալիս.

— Բուլկի, բուլկի։

— Ես Բնչ ա, հայրիկ։

— Ռսի հաց։

— Մինն առնես, հայրիկ ջան։

Ղևոնդը մի հատ գնեց։ Մարգարը կեսը կերավ, կեսն եր պահեց Մարույի համար։

Ճանապարհին մտան մի ճաշարան, ճաշեցին, քաղաքը մի լավ ման յեկան, յեղան յերկաթուղու կայարանում և յերեկոյան դեմ վերադարձան սալի մոտ։

Զվալները տեղավորեցին ու պատրաստվեցին ճամպա ընկնելու։

ՆՈՐԻՑ ԴԵՊԻ ԳՅՈՒՂ

Մի յերկու ժամից հետո սալը կրկին ընթանում եր մեծ ճանապարհով։

Գոմեշները կուշտ ու անհոգ, ծուլորեն վարձալուով, կամաց կամաց առաջ ելին գնում։

Լուսինը դուրս յեկավ և ճանապարհը դարձարեց բարդի- ների հսկա ստվերներով։

Ղևոնդի տրամադրութունը տեղն եր, փափախը չես դրած քշում եր գոմեշները ու յերգում մի ուրախ յերգ...

Հեռվից դեռ յերևում ելին քաղաքի ճրագները և լավում յերկաթուղու սուլոցը, բաց աչք բաներն այլևս Մարգարին չեկին զարմացնում։

Մարգարը ման գալուց ու շատ բան տեսնելուց հոգնել եր։

Նա փաթաթվեց կապերտի մեջ, պառկեց ու մտածում եր, թե ինչպես կարմիր վզնոցն ուսին մարգանքի կերթա, և թե ինչքան կուրախանա Մարոն, յերբ տեսնի կարմիր ժապավենը...

ՀԱՐՑԵՐ

— Ձեր գլուղից քաղաք Բնչ են տանում։

— Ի՞նչ են բերում քաղաքից ձեր գլուղը։

— Ձեր գլուղում կոոպերատիվ կա։

— Վճրտեղից ե ստանում կոոպերատիվը ապրանքները։

138. Ելեկտրական լամպը

Պարնիգեղցի Պողոսը քառասուն տարեկան եր՝ դեռ քաղաք չեր տեսել։ Մի անգամ, ինչպես եր պատահել, աղվեսի մի մորթի յեր ձեռ գցել։ Ուզում եր ծախել, գլուղում առնող չկար։ Հարևանները խորհուրդ տվին քաղաք տանի։

— Քաղաքում լավ գին կտան,—ասին,—վերցրու և գնա։ Մի բան վոր հեռու չի. եստեղից Յերևան յերկու որվա ճամպա չե. համ կծախես լավ գնով, համ ել տանդ համար եժան բան-ման կառնես։

Այսպես՝ աղվեսի մորթին պատճառ չեղավ, վոր Պողոսը գնա քաղաք։ Յերկու որում, իսկապես, հասավ Յերևան։ Մորթին ծախեց շուկայում և աչն ե՝ ուզում եր վերադառնալ,— փողոցում հանդիպեց մի հայրենակցի։ Բարևեցին, խոսեցին դեսից-դենից և, վերջը, հայրենակիցը, վոր կառապան եր քաղաքում, հրավիրեց նրան իր տուն։

— Մութն ընկնում ե,—ասաց,—արի, գիշերը կքնես, առավոտը կերթաս։

Պողոսը համաձայնեց։

Գնացին տուն։ Մինչև հասնելը մութն ընկավ, աչնապես վոր յերբ տուն մտան, ելեկտրական լամպը վառվում եր և սամավարը խլիլիլում սեղանի վրա։ Կառապանի կինն իսկույն սեղանը սարքեց, հաց, թեյ բերեց, և նստեցին ընթրիքի։

Մինչև սեղան պատրաստելը՝ Պողոսը նայում եր ելեկտրա- կան լամպին։ Նայում եր բերանը բաց, զարմացած և ամենևին ուշ չեր դարձնում հացի սեղանին։


— Հանց կեր, խնամի Պողոս, — ասավ կառապանը, — ի՞նչ կա, վոր նայում ես եղպես:

— Ես ձեր լամպին եմ նայում, ախպեր, մի մատ շուշա ու եսքան լուս ե տալիս:

— Բա լեկտրական լամպը վո՞նց գիտես, — պարծեցավ կառապանը:

— Ես ի՞նչպես ե վոր: սրա մեջ ուրիշ նավթ եք ածհում, թե պատրուքն ե լավը:

— Ձե, — ասաց կառապանի կինը, — վոչ նավթ ենք ածում, վոչ էլ պատրուք ունի. իրան-իրան վառվում ե ելի:



— Վո՞նց թե, — զարմացավ Պողոսը, առանց նավթի ու պատրուքի...

— Հա, իհարկե, առանց նավթի ու պատրուքի: Բա լեկտրական լամպը վո՞նց գիտես, — նորից պարծեցավ կառապանը:

— Հրաշք բան ե, ախպեր, — քրթմնշաց Պողոսը նորից լամպին նայելով: Ու նայեց յերկար, նայեց զարմացած և, վերջը, հետաքրքրվեց, թե վորտեղից են առնում արդյոք այդ հրաշք լամպերը:

— Խանութներից, — պատասխանեց կառապանը:

— Խանութներից... Թանգ ե՞, եժան:

— Եժան. մի մանեթ...

— Մի մանեթ... «Ես լավ ե, մտածեց Պողոսը, մի հատ ել չես առնեմ, հետո տանեմ, ել վոչ նավթի փող կտանք, վոչ պատրուքի»:

Նգպես ել արավ: Յերբ առավոտը դուրս չեկավ հայրե-

նակցի տանից, խանութներից մեկում գնեց ելեկտրական մի լամպ ու ճամպա ընկավ դեպի Պարնիգեղ:

«Ես լավ ելավ, — մտածում եր ճանապարհին. ծախսերից վթեթեանանք, կինս ել կուրախանա»:

Յերբ հասավ տուն, հարեանները հավաքվեցին նրա գլխին՝ իմանալու, թե աղվեսի մորթին քանիսով ե ծախել, քաղաքում թանգություն ե, եժանություն, ու կամ Պողոսը ի՞նչ ե բերել:

Պատասխանելով զանազան հարցերի, Պողոսը, վերջապես, խուրջինից հանեց ելեկտրական լամպը:

— Այ, ինչ եմ բերել, — ասաց, լամպը գլխից բարձր բռնելով, վոր բոլորը տեսնեն:

— Նդ ի՞նչ բան ե, — հարցրին գյուղացիք, — եդ տանձի նման շուշեն:

— Լեկտրական ե, — բացատրեց Պողոսը:

Գյուղացիները բան չհասկացան, թե «լեկտրական» ի՞նչ ե: Այդ ժամանակ Պողոսը բացատրեց, վոր «լեկտրական» լամպ ե և առանց նավթի, պատրուքի իրան-իրան վառվում ե:

— Ձե մի պոզեր, — ծիծաղեցին գյուղացիք:

— Հիմի վոր վառվի, կտեսնեք՝ պոզեր ե, թե լամպ, — պարծեցավ Պողոսը և կնոջը հրամայեց, վոր մի թել բերի:

Յեվ չերբ կինը թել բերեց, նա լամպը թելով կապեց ու կախեց ոճորքից՝ ճիշտ այնպես, ինչպես քաղաքում կառապանի տանն եր կախված:

... Այ, հիմա կտեսնեք, թե ի՞նչ ե, — ասաց նա գործը վերջացնելուց հետո ցած իջնելով:

Գյուղացիները մոտեցան լամպին, նայեցին, հոտ քաշեցին (նավթի հոտ չեր գալիս) և սպասեցին վառվելուն:

— Բա ես ինչի՞ չի վառվում, — ասաց մեկը:

— Նա իրա ժամանակը գիտի, — պատասխանեց Պողոսը, — չերբ վոր ժամանակը գալիս ե — իրան-իրան վառվում ե:

— Այ հրաշք... բա ժամանակը չերբ ե...

— Գնացե՛ք եքսկուրսիայով մոտակա ելեկտրոկայանը և ուսումնասիրեցե՛ք այն:

139. Ստեփանը

Շատ շուտ վեր կացավ Ստեփանը. նեղ քառակուսի պատուհանից հազիվ ներս եր ընկել արևը նրա վրա: Արևի շողից խրճիթը սիրունացել էլ, ուրախ տեսք ընդունել:

Ստեփանը 12 տարեկան է, բայց այսօր նա հանկարծ իրան մեծի տեղ դրեց: Լըջորեն նայեց շուրջը, հազաց, գնաց վազվելու:

Հոր գոտին կապեց, կացինը գոտու մեջ խրեց ու դուրս չեկավ:

Շեմքում կավ մորը, քիչ ֆնաց կովկիթից կաթը թափի,

— Ի՞նչ ես վազում,— գոռաց մայրը,— հւր:

Ստեփանը լուռ անցավ կողքից, գնաց բանջարանոցը:

«Առանց տանտիրոջ՝ տունը տուն չե՛, — մտածում է նա. —

հայրս մեռավ թե չե, տունը կարծես քայքայվել սկսեց»...

«Կմեծանաս,— ասում եր հայրը Ստեփանին,— կաշխատես,

կապրեք».— մեծանալ ու գնալ աշխատելու մի վերատի վրա

գտնվող սղոցարանում: Ստեփանը սղոցարանում մի անգամ

էլ եր չեղել:

Ստեփանը մոտեցավ իրենց բանջարանոցի ցանկապատին,

վորը բոլորովին հնացել եր, կացնով աշխատեց... Վերադարձավ

խրճիթը, հագավ վերնագգեստը, կարտուղը գլուխը դրեց ու

դուրս չեկավ:

Նա գնաց դեպի սղոցարան: Թե ինչ պետք է աներ

այնտեղ՝ չգիտեր և չէր էլ կարող իմանալ: Գնում եր, վորով-

հետև զգում եր, վոր մեծ է, իսկ մեծերը պետք է աշխատեն:

Շատ վաղ հասավ սղոցարան. բանվորները մեկ-մեկ

հավաքվում էին, նստոտում գերանների վրա և ծխում:

Ստեփանը կանգնել եր հեռու, տախտակների կույտի

— Ճրագվառոցին: Հենց վոր ճրագները վառվում են, սա

վառվում է:

Մինչև ճրագվառոցը թեև դեռ բավական ժամանակ կար,

բայց հարևանները չհեռացան: Նրանց վրա ավելացան նորերը,

և բոլորը միասին՝ լամպի շուրջը խմբված, սպասեցին մինչև

ճրագվառոցը:

Սպասեցին այնքան, մինչև վոր գլուղի բոլոր տներում

մեկը մյուսի լեռնից վառվեցին նավթի լամպերը, ճրագները:

Բայց «լեկտրականը» դեռ չէր վառվում:

— Բա ես վոնց ե, ժամանակը չեկավ:

— Դեռ չե: Յերևանում ուշ է մթնում,— պատասխանեց

Պողոսը. — միքիչ էլ սպասեցե՛ք, հիմի կվառվի...

Անցավ մի ժամ, գլուղը բոլորովին մթնեց, նրա հետ և

Պողոսի տունը: Խավարում չֆնալու համար կինն ուզեց նավթի

լամպը վառել: Պողոսը չթողեց:

— Զուր նավթ մի փչացնիլ,— ասաց. — հիմի վորտեղ վոր

ե՛ կվառվի...

Սպասեցին էլի մի ժամ, լերկու ժամ, ելեկտրականը չվառ-

վեց:

Հարևանները կամաց-կամաց սկսեցին տրտնջալով ցրվել:

— Մենք էլ կարծում ելինք, թե բան է:

— Ձեր մեջ վառված ճրագն էլ կհանգչի, ուր ֆնաց թե

հանգածը վառվի,— պատասխանեց Պողոսը և մտածեց, վոր հա-

րևաններն, անշուշտ, աչքով տվին լամպին, լեթե վոչ ինչու

չպիտի վառվեր:

— Հն հա, աչքո տվին,— ասում եր նա կնոջը— անպատ-

ճառ աչքով տվին...

ՀԱՐՑԵՐ

— Դուք ինչե՛ք կարծում. ինչու չէր վառվում ելեկտրական լամպը:

— Առհասարակ «աչքով տալ» մի բանի կարելի՞ չէ:

մոտ: Տախտակներէից խեթի անուշ հոտ եր գալիս: Հանկարծ ծղրտաց սուրիչը. բանվորները շարժվեցին, անցան իրենց տեղերը: Ստեփանը մտավ աղյուսատուն, կանգնեց յերկրորդ շարքի առաջ ու նայում եր՝ վարպետն ինչպես է բան գցում մեքենան:

— Դու ինչո՞ւ չես այստեղ. — հարցրեց վարպետը:

— Ինչո՞ւ — աշխատելու:

— Ո՞վ է քեզ այստեղ կանգնեցրել:

— Վոչվոք, չես ինքս եմ յեկել: Միայն ինձ ասա, թե ինչ պետք է անել, չես կանեմ:

— Տես թե վոնց ես, Է — ժպտաց բանվորը. — ո՞վ է քեզ ուղարկել աշխատելու:

— Յես ինքս:

— Տես Է:

— Վոնց անեմ. փող հո հարկավոր ե՛ւ աշխատավոր չկա, չես պետք է աշխատեմ, ինչ արած: Բանվորը մտածեց.

— Ի՞նչ պիտի անես. կարծում ես՝ հենց եղպես հանկարծ աշխատանք կտան: Հեշտ չի, ախպեր ջան:

Ստեփանը չհասկացավ: Ի՞նչը հեշտ չի:

— Յես ամուր եմ: Կդիմանամ:

— Դե լավ, ասաց բանվորը, — առայժմ ինձ հետ աշխատիր, հետո կտեսնենք:

Բանվորը բարձրահասակ, մեծ մորուքով մարդ էր: Մինչև հեղափոխութիւնը նա քաղաքներում եր յեղել՝ զանազան գործարաններում, սղոցարաններում: Հեղափոխութիւնից հետո բժիշկներն արգելեցին նրան քաղաքում ապրել, նա չեւ իր յերկիրն եր վերադարձել, մանավանդ վոր այդտեղ սղոցարան կար: Նա Ստեփանին ել եր ճանաչում, նրա հորն ու մորն ել:

Գիտեր, վոր հայրը հինգ տարի չէ, ինչ մեռել է, և տանը մի կտոր հացի կարոտ են, Ստեփանի մոր շունչը կտրվում եր ուժից վեր աշխատելուց:

Ճաշին բանվորը միքիչ յերկար կանգնեցրեց մեքենան:

— Գնանք, — ասաց նա Ստեփանի ձեռքը բռնելով:

— Ո՞ւր:

— Գրասենյակ:

Նրանք սղոցարանից դուրս յեկան: Գրասենյակում Գասպարը դիմում գրեց, տվեց Ստեփանին՝ ստորագրել: Հետո նրա հետ գնաց կոմիտեն խոժոռագեմ վարիչի մոտ:

— Յես դրան վճռեալ տեղավորեմ. — ուսերը վեր եր բաշում վարիչը:

— Ինձ մոտ, աշկերտ:

— Ախր չեմ կարող:

— Կարելի չէ, վոնց թե չի կարելի:

Վարիչը նայեց Գասպարին, հետո Ստեփանին:

— Ասում եք՝ աղքատ ե՛:

— Յեթե կարիք չունենար, ել ինչո՞ւ չեմ տնկվել այստեղ, հո իմ բարեկամը չի:

— Դե լավ, Միայն ձեր խաթեր եմ անում, դուք լավ բանվոր եք և լավ ել աշկերտ կպատրաստեք: Այ, ես թուղթը տվեք գրասենյակ:

Շաբաթ որ եր, սուրիչից հետո փող ելին բաժանում. Ստեփանին ել մի որվա աշխատավարձ տվին. մի մեծ թերթի վրա ստորագրեց ու հանդարտ քայլերով Գասպարի հետ տուն գնաց: Տանը մայրը հայհոյեց նրան.

— Ո՞ւր ելիր կորել ամբողջ որը:

— Գործի ելի:

— Ի՞նչ գործի, անպիտան:

Պատասխանի փոխարեն Ստեփանը հանեց փողերն ու դրեց սեղանի վրա:

— Վերցրո՞ւ, սղոցարանից եմ բերել:

Մայրը վերցրեց փողը, զարմացած նայեց Ստեփանին:

— Ի՞նչ ես նայում, շարժվիր, բան տուր ուտեմ: — Մտահոգ դեմքով իր հոր նման նստեց, նայեց մորը: Նա ուզում եր, վոր մայրն իրեն հարգի մեծի պես:

— Հոգիս դուրս չեկավ սղոցարանում:
Հետո ել չդիմացավ մեծավարի պահելուն, վեր թռավ
փաթաթվեց մորը. մայրը համբուրեց նրա խճճված ու քրտնած
մազերը:

— Ապրես, վորդի... Շնորհակալ եմ:

— Ստեփանը շատ ուրախ եր ու չեր հասկանում, թե
ինչո՞ւ լին մոր շրթունքները լացից ծռվում:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Ուսումնասիրեցեք ձեր մոտի սղոցարանը:
- Իմացե՛ք՝ ի՞նչ փայտից են մեծ մասամբ տներ շինում:
- Կաղնեցե՛ք զանազան տեսակի ծառերի դիմացկունություն ու
արժողության աղյուսակը ձեր դիտողությունների ու հավաքած տեղե-
կությունների հիման վրա:

140. Ազատվեցին

Տոն որ եր, պիոներները կանոնավոր շարքերով միացան
ընդհանուր լերթին. նվագախումբը գնում եր առաջից:

Ամեն անգամ, չերբ լսվում եր պիոներների նվագը, փոք-
րիկ Համոն տեղը հանգիստ կանգնել չեր կարողանում: Պիոներ-
ների յետևից ինքն ել եր, ծխախոտի տուփերով լիքը արկղը
վիզը գցած, քայլում:

Յերբ նվագը դադարում եր, հիշում եր, վոր պետք ե վա-
ճառի ու նվագ ձայնով կանչում եր.

— Պապըռո՛ղ, պապըռո՛ղ...

Համոն շատ եր ուզում պիոներ դառնալ, բայց ի՞նչպես:

Յերկար հետևելով պիոներներին, նա իմացավ, վոր նրանց
գլխավոր խորհուրդը գտնվում եր Աբովյան փողոցի վրա:

Ծխախոտի արկղը ձեռքին չեթե գնար, պիոներները նրան
պիտի սպեկուլյանս ասեյին: Սպեկուլյանտ բառը նրան անչափ
վիրավորում եր: Նա գիտեր, վոր իր խաղելինն սպեկուլյանտ

ե, և վոր իր աշխատանքն այդ խաղելինի գրպանն ե գնում:
Ինքն ի՞նչ սպեկուլյանտ եր, վոր չերբեք կուշտ փորով հաց
չեր ուտում:

Վորպեսզի չվիրավորեն, նա իր արկղը պահ տվեց ընկե-
րո՞ջ՝ նախորոք համարելով.

— Տես՝ քսան տուփ ե հա՛...

— Լավ, լավ, գնա՛...

Համոն վախվիսելով մտավ բյուրոն և մոտեցավ նախագահին:

— Ի՞նչ ես ուզում:

— Ուզում եմ պիոներ գրվեմ:

— Հայր-մայր ունե՞ս:

— Չե, վորբ եմ:

— Ո՞ւմ մոտ ես ապրում:

— Սարգիս Վանեցյանի:

— Նա ինչո՞վ ե զբաղվում:

— Սպեկուլյանտ ե:

— Սպեկուլյանտ, — հարցրեց նախագահը. — Իսկ դու ինչո՞ւ
ցես նրա մոտ ապրում:

— Նա ինձ փողոցից վերցրեց:

— Ծառայո՞ւմ ես տանը:

— Տանն ել, ամեն տեղ ել. ամբողջ ո՞րը պապըռո՛ղ եմ ծա-
խում:

— Նրա համար:

— Այո, մենակ չես չեմ. հինգ հոգի չենք, ամբողջ ո՞րը
ծախում ենք, գիշերը գոմում ենք քնում. վոչ մի որ ել կուշտ
հաց չենք ուտում. ամեն որ ել մեզ ծեծում ե... — վրա տվեց
Համոն, ուրախանալով, վոր մեկն իր կյանքով հետաքրքրվում ե:
Նախագահը բարկացած սեղմեց շրթունքները և հոնքերը
կիտեց:

Համոն վախեցած լռեց:

— Իսկ դու և բ՞ ընկերները կուզեյի՞ք մանկատանն ապ-
րել:

Համոյի դեմքը փալկեց:

— Այն, թող վորբանոցում ամբողջ ուրը բանեցնեն, բայց գիր սովորեցնեն, ու պիտներ լինենք:

Նախագահն ինչ-վոր բան եր մտածում:

— Լավ, յես կխոսեմ մանկատների վարչի հետ: Կարծեմ մի վորբանոցում տեղ կա: Վաղը ժամը մեկին արի, պատասխանը իմացիր: Իսկ այդ սպեկուլյանտի հասցեն տուր:

— Ռուբենի փողոց № 79, Սարգիս Վանեցյան. ամենքը ճանաչում են, շատ հարուստ է:

— Վարդգես, — կանչեց նախագահը, — այս հասցեյով գնա, իմացիր, թե քանի վորբ են ապրում այդ սպեկուլյանտի մոտ, և ինչպես է նա շահագործում դրանց աշխատանքը: Պատասխանն այսօր անհրաժեշտ է:

Յերբ Համոն ընկերներին պատմեց, բոլորի դեմքն ել փայլեց:

Պետական մանկատուն ընկնելը նրանց համար յերջանկութունն էր. այնտեղ չեյին ծեծում. դպրոց եյին ուղարկում, ամենքը պիտներական մարզանքներին մասնակցում եյին, մաքուր հագնվում, կերակրվում...

— Տղերք, ա՛յ կճաքի ծուռ Սաքոն. — ասաց մեկը:

«Ծուռ Սաքո» նրանք իրենց տիրոջն եյին ասում, ծուռ վզի պատճառով:

— Թող արաքի, — վրա բերեց մյուսը, — վոր կառավարութունն իմանա, թե վոնց է մեզ ծեծում, Ձեկա կտանի:

— Եսօր փախչեմք. — հարցրեց մեկը:

— Ձե, ջան՛ւմ — ասաց Համոն, — սպասենք, վաղը պատասխանն իմանամ: Նոր:

Մյուս ուրը ժամը մեկին Համոն ներս մտավ բյուրոն. սիրտը թրթռում էր. ընկերներն սպասում եյին դուրսը:

— Գնանք ինձ հետ մանկատների վարչի մոտ, — ասաց նախագահը:

Համոն նախագահի հետ գնաց Լուսժողկոմատ, մանկատների վարչի մոտ:

— Հա, — ասաց վարչը, — այսօր ձեզանից յերեքը կարող են մտնել մանկատուն, իսկ յերկուսը հետո...

— Ձե, եղպես չենք կարող, — շնջաց Համոն վախվխելով:

— Ինչո՛ւ:

— Միքանի ուր սպասենք, վոր միասին գնանք:

Վարչը նայեց նրան:

— Ապրիս, տղա, վոր մտածում ես ընկերներիդ մասին. լավ, թող քո ասածը լինի. հինգդ ել վաղը յեկեք, հենց վաղն ել մանկատուն կմտնեք...

— Իսկ խաղեյինը մեզ յետ չի՞ տանի:

— Թող մի քիթը ցուց տա՛...

Մյուս ուրը հինգն ել վաղ առավոտյան, առանց ծխախոտի արկղները վերցնելու, կամացուկ անհետացան գոմից ու դեպի Լուսժողկոմատ վազեցին:

Դեռ շուտ էր. նրանք բակում նստեցին սպասելու:

— Ախի, Անգին, — կանչեց խաղեյինը, են շան լակոտները քնած են դեռ, գնա զարթեցրո՛ւ, շուտ գնան առևտրի:

Անգինը վերադարձավ, ասաց, վոր գոմում վոչվոք չկա: Խաղեյինը զարմացավ, կատաղած ինքն ել գոմը գնաց. լուցկի վառեց, տեսավ՝ խոտի վրա վոչվոք չկար:

— Ա՛յ, սպասիր, յես եսօր դրանց կաշին մի լավ քերթեմ...

Բայց ել քերթել չեր կարող — ձեռքը չեր հասնի: Այդ ուրը հնգին ել մանկատուն ընդունեցին, լողացրին, մաքուր շորեր տվին, կերակրեցին...

Խեղճ յերեխաներն ուրախութունից խելքները կորցրել եյին:

— Ինչ լավ է, — շնջում եյին իրար ահանջի:

Հնգին ել դպրոց ընդունեցին:

Մի ամիս անց, յերբ պիտներների հետ շարքերով անցնում եյին «Կոմունարների ալգու» մոտով, նրանք տեսան «ծուռ Սաքոյին»:

Այժմ նա այլևս վտանգավոր չէր: Յերեխաները ժպտալով
խրար նայեցին:

141. Կոշիկ սրբող Թոմասը

Վաղ առավոտ է. ահագին քաղաքի կեսը քնած է դեռ:
Քաջ Թոմասը վոտի վրա չե վաղուց ու շվշվացնելով գնում է
գործին ուսից կախած իր տուփը, վորի մեջ խոզանակներ են
ու կոշիկի ներկեր:

Փոստի շենքի դեմը, գլխավոր մուտքից վոչ հեռու, անձ-
րեից պաշտպանված մի անկյունն է նրա աշխատանոցը. աշ-
տեղ նստած է նա ամբողջ որն իր տուփի ու խոզանակների
առջև: Ամառվա շոգին, ձմեռվա ցրտին միշտ հնչում է նրա
քնքուշ ձայնը.

«Համեցեք՝ մաքրեմ ձեր կոշիկները. աղամանդի պես փաշ-
լեն, հայելու պես տեսնեք մեջը ձեր պատկերը... Թանգ չե,
քաղաքացի, միայն հինգ կոպեկ»...

Ասում է ու աջակես քաղցր ժպտում, աջակես կատակով,
վոր անցորդն ակամա կանգ է առնում:

Մութն ընկնում է թե չե, Թոմասը ձեռաց հավաքում է
իր տուփը ու գնում է տուն:

Քաղաքի ծայրին, մի խուլ փողոցի խորքումն է նրանց
ցածրիկ հին տունը:

Թոմասը դատարկում է գրպանի սև փողերը մոր գոգնոցի
մեջ, արագ ընթրում ու շտապում է դուրս:

Ուղիղ ժամը ութին սկսվում են յերեկոյան դպրոցի դա-
սերը: Այս յերրորդ ձմեռն է, վոր Թոմասը գիշերները կանո-
նավոր դպրոց է գնում: Յերեկվա աշն ժամերին, յերբ հաճա-
խորդներ չեն լինում, Թոմասն իր տուփի առջև՝ միշտ մի փոք-
րիկ գիրք ունի ձեռքին:

Այդ փոքրիկ գրքերն ասում են նրան, թե բանի-քանի
մեծ մարդիկ իր նման են յեղել իրենց կյանքի սկզբին. քանի-

քանի մեծ մարդիկ հետզհետե առաջ են գնացել ու բարձրա-
ցել են միայն իրենց աշխատանքով ու համառ կամքով:

Յեւ Թոմասը վճռել է, վոր ինքն ել պետք է դառնա ան-
պատճառ մի մեծ մարդ. ինչ տեսակ բաներ պիտի հնարի
մարդկանց համար, ինչպես պետք է պահի մայրիկին ու բույ-
րիկներին...

142. Աշխատանքի Պաշտպանութունը

Թաթուկենց Վանին քառասուն վերստ վոտքով կտրեց՝
Դաշտային աշխատանքները վերջացնելուց հետո գլուղից բա-
ղաք յեկավ հորեղբոր մոտ:

Հորեղբայրն իր վողջ կյանքը քաղաքումն էր անցկացրել:
Թագավորի որով աղաների մոտ էր ծառայում իբրև խոհարար,
իսկ հիմա, նոր իշխանության որով մտել էր մի մասնավոր
ճաշարան՝ նույն գործով:

— Խոհարար լինելը լավ բան է. — մտածում էր Վանին. —
հորեղբորս կիսնդրեմ, վոր ինձ ել խոհարար ընդունել տա՝
Գյուղում ապրելն ել սրտովս չի:

Ամբողջ որը ճաշարանն էր փնտռում. ահա գտավ, բայց
ներս մտնել չէր համարձակվում:

Դռնից ներս նայեց: Վրաց չվախենաւ. սեղանների շուրջն
ահագին բազմութուն, դախլի յետեն ել ինքը՝ ճաշարանատերը:
Ճիկ արավ Վանին մեկ, յերկու անգամ, իսկ յերրորդ ան-
գամին նրան նկատեցին:

— Հա, պուճուր տղա, ինչ ես ուզում, — ձայն տվեց նրան
տերը:

«Ինչ ուզում ե՛լ լինի» — վճռեց Վանին ու դռնից մինչև
դախլը՝ հատակի վրա ցեխով դրոշմեց իր թաթերի հետքերը:

— Այ գրողը տանի քեզ... Տես, ինչքան ցեխ ներս բե-
րիր. — հարձակվեց տերը նրա վրա:

— Հորեղբորս եմ ուզում, քեռի: Իմ հորեղբայրը՝ Արտուշը՝

խոհարար ե ձեզ մոտ.—ասաց Վանին և գլխարկը վերցրեց:
— Հորեղբայրդ, խոհարար ե՞ր ասացիր,—կանգ առավ ճաշարանատերը:

— Այո, այո,—գլխով նշան արավ Վանին:

— Արտուշին խոհանոցից կանչեցեր.—ձայն տվեց տերը:
Հորեղբոր գալը հինգ րոպե քաշեց:

Ահա և նա: Սպիտակ գոգնոցը կապած, թասակը գլխին:

— Քո ազգականն ես սա.—հերսոտած հարցրեց ճաշարանատերը Արտուշին:

— Այո...—հանցավորի պես պատասխանեց նա:

— Դե շուտ այստեղից ունդ արա: Մեկ տես, թե հայելու պես մաքուր հատակը վրնց ե նախշոտել.—տերը մատով ցույց տվեց Վանիի հետքերը:

— Մի նեղանա... գլուղացի չե... չերբեք քաղաքում չի չեղել:

— Լավ, լավ, դուրս տար:

— Արի, արի գնանք.—ասաց հորեղբայրը և քաշեց Վանիի թևից:

Հորեղբայրը չերկար ժամանակ նախատում եր Վանիին: Վերջը ձանձրացավ, հանդարտվեց:

— Հիմա ասա, ինչո՞ւ չես գլուղից չեկել. աշխատել չես ուղղում:

— Յես կաշխատեմ, հորեղբայր, միայն մի գործ աջողացրու ինձ համար, հետո ինքդ կտեսնես, վոր չես ծուլլ չեմ:

Հորեղբայրը մտածմունքի մեջ ընկավ և լուրջ դեմք առնելով ասաց.

— Շատ լավ, ճաշարանատիրոջ հետ կխոսեմ: Թե վերցրեց, լավ, թե վոչ՝ գլուղ կերթաս: Յես վոչ տեղ ունեմ քեզ պահելու և վոչ ել մի բան՝ կերակրելու համար:

Ճաշարանատերը Վանիին վերցրեց, բայց զգուշացրեց.

— Աշխատանքի Պաշտպանութունը շրջում ե այստեղ. բան ե՞ վոր չեկավ, միայն մեկ պատասխան կտա—գլուղից հորեղբորս մոտ հյուր եմ չեկել: Իսկ չեթե թեկուղ մի բառ կսխալվի,

կամ ուրիշ բան կասի, հիմիկվանից թող փաստ-փուսեն հավաքի: Վանին այս խոսքերը լավ հիշեց:

Աշխատանքի Պաշտպանութունից այնպես եր վախենում, ինչպես մարդագեղից: Վանին աշխատում եր առավոտյան ժամը 7-ից մինչև գիշերվա 12-ը: Փայտ եր ձեղքում ու կրում, սալ-լակով կաղամբի, կարտոֆիլի և ուրիշ բաների համար շուկա չեր գնում և այլ աշխատանքներ անում:

Վանիի ձեռքերը, վոտքերն ու մեջքը ցավում ելին, բայց ելի աշխատում եր. չաշխատի՝ տեղից կզրկվի:

Հորեղբայրն ել մի կողմից եր հորդորում.

— Աշխատիր,—ասում եր,—չեթե վոչ քո պատճառով ճաշարանատիրոջ առաջ սեներես կլինեմ:

Մի անգամ Վանին սալակով կաղամբի ու սոխի չեր գնացել. մեկ ել հանկարծ՝ առ հա—սալակը խրվեց ջրով ու ցեխով լիքը փոսի մեջ. տեղիցը շարժելու հնար չկա:

Հանկարծ մի ինչ-վոր չերիտասարդ մարդ մոտեցավ:

— Սպասիր, փոքրիկ, չես կոգնեմ քեզ.—ասաց նա:

Յեվ նրանք չերկուսը միասին սալակը դուրս քաշեցին փոսից:

— Դու ո՞վ ես.—հարցրեց Վանին իր անսպասելի բարեբարին:

— Այստեղացի չեմ,—պատասխանեց նա:—Իսկ դո՞ւ:

— Յես գլուղացի չեմ...

— Յերևի մեկի մոտ ծառայում ես:

— Այո, ճաշարանում, այստեղ՝ մոտերքը:

— Յերևի վատ որ ես քաշում տիրոջ մոտ:

— Ո՛հ, ենպես ե գոռում աշխատել...

Ի՞նչպես մտար նրա մոտ, Աշխատանքի Բաժանմունքի Վոդմից, թե վոչ:

Վանին ցնցվեց ու կամացուկ շշնջաց.

— Վո՛չ, մինչև անգամ հայտնվելն արգելեց: Յեթե, ասում եր, կգան և կհարցնեն, ասա՝ հորեղբորս մոտ հյուր եմ չեկել: Անծանոթը հեռացավ, իսկ Վանին սալակն առաջ քաշեց:

Ամբողջ մի ժամ ճաշարանատները հայհուդում եր վանիին, վոր նա ուշացրել է մթերքը: Վանին փորձեց արդարանալ, բայց տերը լսել անգամ չուզեց: Մյուս որը՝ յերեկոյան մի բան պատահեց, վոր վանին յերբեք չէր սպասում:

Ճաշարանը լիքն էր մարդկանցով: Հանկարծ խոհանոցի դուռն արագ բացվեց, ու ներս մտավ ճաշարանատները:

— Շուտ արա, պահվիր, Աշխատանքի Պաշտպանությունը, յեկավ.— գոռաց նա վանիի վրա:

Հորեղբայրը վախից վեր գցեց ափսեն, իսկ վանին գլուխը կորցրել էր, չգիտեր՝ ուր ծլկվի:

Դուռը կրկին բացվեց, ու ներս մտավ այն յերիտասարդ մարդը, վոր վանիին ոգնել էր սալակը դուրս քաշելու:

Նա արագ հայացքով զննեց վողջ խոհանոցը և կանգ առավ սարսափած վանիի վրա:

— Այս տղան ինչ աշխատանք է կատարում ձեզ մոտ:

— Վնչ մի: Մեզ մոտ հյուր է, գլուղից է: Ա՛յ, նրա մոտ... խոհարարի մոտ է յեկել:

— Ճիշտ չէ: Յես այդ տղային ճանաչում եմ:

— Այ քեզ փորձանք, ամեն ինչ կորավ.— մտածեց խոհարարը՝ վանիի հորեղբայրը:

Յերկու շաբաթից հետո Աշխատանքի Պաշտպանության Բաժանմունքը ճաշարանատիրոջը տեժ տուգանքի յենթարկեց: Ստիպեց վանիին աշխատած ժամանակամիջոցի համար փող վճարել:

Այժմ վանին միայն ութ ժամ է աշխատում, ազատ ժամանակ շատ ունի: Անգրագիտության վերացման խմբակում է սովորում. այնտեղից էլ բանֆակ է ընդունվելու:

«Այ թե ինչ բան է Աշխատանքի Պաշտպանությունը», մտածում էր վանին. «իմ կյանքը հիմնովին փոխեց: Իսկ յես» հիմարս, նրանից վախենում եմ:

— Ուսումնասիրեցեք ձեր գլուղի բատրակների կյանքը, նկարագրեցեք այն:

— Յերեխաների շահագործումը, նրանց շատ աշխատեցնելը կամ նրանց հետ կռպիտ ու վատ վերաբերվելը նկատելու դեպքում հաշանեցեք Աշխատանքի Պաշտպանության տեսուչներին կամ թե սոցխական ոգնության տեսուչներին:

143. Յերեխաներն ինչպես էյին աշխատում կապիտալիստների համար շատ տարիներ առաջ

1. ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Յերեխաները 3—5 տարեկանից արդեն սկսում էին աշխատել:

Հինգ տարեկան յերեխաներ գործարանում շատ-շատ կային:

Համարյա ամեն տեղ յերեխաներն էլ նույն չափ էին աշխատում, վորչափ և մեծերը, յերբեմն որական 15—18 ժամ:

Վատ սնունդը, հագուստը և յերկարատև աշխատանքը քալքայում էին յերեխաների առողջությունը: Ծաշի համար ժամանակը քիչ էր: Ուսում էին ցամաք հաց, այն էլ շտապով: Դրանից ստամոքսները փշանում էր:

Անհարմար աշխատանքից վողնաշարները ծովում էին:

Փչացած ողը լցվում էր նրանց թոքերը: Յերեխաները հիվանդանում էին, մեռնում թոքախտով:

Վտանգավոր աշխատանքները յերեխաներին հաշմանգամ էին դարձնում: Յերեխաներն ապուշներ էին դառնում. տասնևութ տարեկան պատանին չէր իմանում, թե 2×2 վորքան կլինի:

2. ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Չորս տարեկանից սկսած հազարավոր յերեխաներ մի կռպել աշխատավարձով զնում էին աշխատելու վող միայն ցերեկները, այլև գիշերները:

Ամբողջ էի ժամ ճաշարանատները հայհուդում եր վանիին, վոր նա ուշացրել է մթերքը: Վանին փորձեց արդարանալ, բայց տները լսել անգամ չուզեց: Մյուս որը՝ լերեկոյան մի բան պատահեց, վոր Վանին լերեքեք չեք սպասում:

Ճաշարանը լիքն էր մարդկանցով: Հանկարծ խոհանոցի դուռն արագ բացվեց, ու ներս մտավ ճաշարանատները:

— Շուտ արա, պահվիր, Աշխատանքի Պաշտպանութունը, լեկավ.— գոռաց նա Վանիի վրա:

Հորեղբայրը վախից վեր գցեց ափսեն, իսկ Վանին գլուխը կորցրել էր, չգիտեր՝ ուր ծլկվի:

Դուռը կրկին բացվեց, ու ներս մտավ այն լերիտասարդ մարդը, վոր Վանիին ոգնել էր սալակը դուրս քաշելու:

Նա արագ հայացքով ղնեց վողջ խոհանոցը և կանգ առավ սարսափած Վանիի վրա:

— Այս տղան ինչ աշխատանք է կատարում ձեզ մոտ:

— Վոչ մի: Մեզ մոտ հյուր է, գլուղից է: Ա՛յ, նրա մոտ... խոհարարի մոտ է լեկել:

— Ընչո՞ւմ չէ: Յես այդ տղային ճանաչում եմ:

— Այ քեզ փորձանք, ամեն ինչ կորավ.— մտածեց խոհարարը՝ Վանիի հորեղբայրը:

Յերկու շաբաթից հետո Աշխատանքի Պաշտպանության Բաժանմունքը ճաշարանատիրոջը տեժ տուգանքի լենթարկեց: Ստիպեց Վանիին աշխատած ժամանակամիջոցի համար փող վճարել:

Այժմ Վանին միայն ութ ժամ է աշխատում, ազատ ժամանակ շատ ունի: Անգրագիտության վերացման խմբակում է սովորում. այնտեղից էլ բանֆակ է ընդունվելու:

«Այ թե ինչ բան է Աշխատանքի Պաշտպանութունը» մտածում էր Վանին. «իմ կյանքը հիմնովին փոխեց: Իսկ լես» հիմարս, նրանից վախենում եմ»:

— Ուսումնասիրեցեք ձեր գլուղի բատրակների կյանքը, նկարագրեցեք այն:

— Յերեխաների շահագործումը, նրանց շատ աշխատեցնելը կամ նրանց հետ կռվիտ ու վատ վերաբերվելը նկատելու դեպքում հայտնեցեք Աշխատանքի Պաշտպանության տեսուչներին կամ թե սոցիալական ոգնութան տեսուչներին:

143. Յերեխաներն ինչպե՞ս եյին աշխատում կապիտալիստների համար շատ տարիներ առաջ

1. ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Յերեխաները 3—5 տարեկանից արդեն սկսում եյին աշխատել:

Հինգ տարեկան յերեխաներ գործարանում շատ-շատ կային:

Համարյա ամեն տեղ յերեխաներն էլ նույն չափ եյին աշխատում, վորչափ և մեծերը, յերբեմն որական 15—18 ժամ:

Վատ սնունդը, հագուստը և յերկարատև աշխատանքը քաջացում եյին յերեխաների առողջութունը: Ծաղի համար ժամանակը քիչ էր: Ուտում եյին ցամաք հաց, այն էլ շտապով: Դրանից ստամոքսները փչանում էր:

Անհարմար աշխատանքից փողնաշարները ծովում եյին:

Փչացած ողբ լցվում էր նրանց թոքերը: Յերեխաները հիվանդանում եյին, մեռնում թոքախտով:

Վտանգավոր աշխատանքները յերեխաներին հաշմանդամ եյին դարձնում: Յերեխաներն ապուշներ եյին դառնում. տաճանում թե տարեկան պատանին չեք իմանում, թե 2×2 վորքան կլինի:

2. ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Չորս տարեկանից սկսած հազարավոր յերեխաներ մի կողմից աշխատավարձով գնում եյին աշխատելու վոչ միայն ցերեկները, այլև գիշերները:

Նրանց դեմքերը գունատ էին: Աչքերը նայում էին տխուր: Մորթիները ծածկված էին վերքերով:

Վերակացուները յերեխաներին անկողիններից մերկ էին դուրս քշում: Շորերը ձեռքներին տանում էին նրանց գործարան, բռնակցների հարվածներով փախցնում էին նրանց քունը:

Աշխատանքի ժամանակ յերեխաների քունը տանում էր: Սաստիկ հոգնածությունից չէին կարողանում տուն գնալ. — մտնում էին բուրդ չորացնելու տեղն ու բրդի տակ պահվելով՝ պառկում էին քնելու: Տանը շատ յերեխաներ հոգնածությունից չէին կարողանում իրենց ընթրիքն ուտել:

3. ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ավելի լավ չէր յերեխաների դրությունը Ռուսաստանի գործարաններում:

Մի պատանի ահա թե ինչ է պատմում իր մասին.

— Գործարանում ինձ ստիպում էին մեջքով բուրդ կրել. ամեն անգամ բարձում էին կես փութ: Ամենափոքր թերության համար խիստ ծեծում էին:

Որ չէր անցնում, վոր մեզ՝ յերեխաներիս չթակեին:

Մենք հերթով էինք աշխատում — ցերեկը 13 ժամ, իսկ հետո գիշերվա հերթին՝ ցերեկվա 8-ից մինչև առավոտվա ժամը 4-ը:

Քնում էինք արկղներում, բրդի մեջ... այստեղ մեզ ծեծում, մտրակահար էին անում... Մի անգամ վարպետն ինձ սաստիկ ջարդեց: Թեից հետո յես ուժասլառ քնեցի...

Հանկարծ վերակացուն արթնացրեց ինձ...

Յես վախեցա և յերկուդ կրելով, վոր կրկին ծեծեն, քնաթաթախ ընկա մեքենայի վրա:

Այձեռքս ընկավ մեքենայի տակ ու դաստակիցս բարձր փշրվեց...

Այդպես էին ապրում բանվորների յերեխաները շատ տարիներ առաջ: Այժմ շատ քիչ տեղեր կան, վորտեղ նրանք

ստիպված լինեն այսպես անողորմաբար աշխատելու: Բայց վոր նրանց դրությունը դեպի լաջն է փոխվել, դրա պատճառը վոչ թե այն է, վոր բուրժուաները բարեսիրտ են դարձել, այլ վոր բանվոր դասակարգը կռվել է իր կյանքի բարելավման համար:

4. ՌԻՐԻՇ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Իսկ վորտեղ վոր բանվորները թույլ են ու կազմակերպված չեն, մենք տեսնում ենք, վոր կապիտալիստներն ավելի լավ չեն, քան հարյուրավոր տարիներ սրանից առաջ:

Ահա թե ինչպես են վարվում Գվադելուպա կղզու (Ամերիկայի մոտ) նեգրերի հետ: Այնտեղ զարգացած են շաքարեղեգնի, սուրճի, բամբակի, կակաոյի, ծխախոտի, վանիլի տրնկարանները: Բայց ամենից շատ շաքարի տնկարաններ կան, ուր մեծ մասամբ աշխատում են տեղական նեգրերը:

Այստեղ մարմնական պատիժը լաջն չափով գործադրվում է: Անասելի շահագործման են յենթարկվում վոչ միայն տրամարդիկ, այլև կանաչը ու յերեխաները:

Աղքատությունը բանվորներին ստիպում է աշխատանքի ուղարկել իրենց յերեխաներին:

Կյանքի ու աշխատանքի ծանրությունն ստիպում է թե յերեխաներին, թե մեծերին պալքարել տերերի դեմ:

Ահա թե ինչն է պատճառը, վոր բոլոր յերկրներում, կապիտալի դեմ պալքարելու համար, մանկական կոմունիստական խմբեր են կազմակերպվում:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

— Ծանոթացե՛ք յերեխաների աշխատանքի պաշտպանության որենքների հետ:

— Համեմատե՛ք մեր որենքներն այս մասին բուրժուական որենքների հետ:

Բերլինի մի բանվորական թաղամասում չքավոր տան պատուհանի մոտ կանգնած է կարլը: Նրա 14 տարին լրացել է: Նա աչքերը սևեռած՝ նայում է յերկնքին:

Անամպ յերկնքը փռվել էր քաղաքի վրա:

Մի ծանր հառաչանք է դուրս թռչում կարլի կրծքից: Մայրերի վրայով կենտ-կենտ անցորդներ շտապում են: Սարսափելի ցուրտ է:

Տասնյակ տարիներ այդպիսի սուր ու սոսկալի սառնամանիքներ չեն լինել: Վաղուց վառարանը չի վառված: Ածուխն ու փայտը թանգացել են:

Կարլը վերադարձնում էր ճարտար:

Հայրը միջանի տարի առաջ է մահացել, թողնելով մորը յերեք յերեխաներով: Կարլին վիճակվեց փոխարինել հորը: Նա սկսեց որավարձով աշխատել: Նա աշխատում էր շենքերի վրա, վորտեղ բանվորների համար ջուր էր կրում և զանազան ծառայություններ անում: Այս ձևով աշխատանք չկար և կարլն ամիսներով անգործ էր:

Մայրը մեկը մյուսի յետևից իրերը տանում էր շուկա վաճառելու:

Շորերը, սպիտակեղենը ծախվեցին չնչին գնով: Մնացել էր միայն անի, ինչ վոր նրանց հագին էր, և մայրը կարլի հետ ստիպված ուղարկեցին փոքրիկ յերեխաներին, տղային և աղջկան, մանրունք վաճառելու՝ ման ածելով:

«Յերեխաներից ավելի սիրով կգնեն», — մտածում էին նրանք: Յեվ ճիշտ վոր, յերբ յերեխաները գունատ, նիհար դեմքերով առաջարկում էին իրենց ապրանքը, շատ քչերն էին հրաժարվում վերցնել:

Բայց պատահում էր, վոր փող չէր լինում ապրանք առնելու համար: Այն ժամանակ յերեխաներն ստիպված էին հաց խնդրել:

Մշտական սառնամանիքի տակ կանգնելուց յերեխաները մըսեցին, հիվանդացան, անկողին ընկան:

Ստիպված էին վերջին բարձերը շուկա տանել, վորպեսզի ընտանիքը սովից չմեռնի:

Վրա հասավ ծայրահեղ կարիքը. տանը հացի փշրանք չկար. յերեխաները հիվանդ են. վոչ մի գործ: Վերադարձնում են սպասեն:

Անողնական, կարլը կանգնած էր պատուհանի մոտ. ծանր մտքեր էին անցնում գլխով: Հանկարծ մի նոր միտք անցավ նրա ուղեղով:

«Այ, թե մի ձյուն գար, հա...»:

Այն ժամանակ նա փրկված է. գործ կլիներ վոչ թե միայն նրա համար, այլև իր նման հարյուրավոր սոված, անգործությունից տանջվածների համար...

Նրանք կսկսեին սրբել ձյունը և քաղաքից դուրս կրել:

Կարլը նայում էր յերկնքին և գլուխն անուշա կախ գցում:

Յերկնքը պարզ և անամպ է:

Նա գնում է վորևե աշխատանք փնտռելու: Իդիլ:

Գործ չկա թե նրա, թե շատերի համար:

Հոգնած, ջարդված տուն վերադառնալիս՝ կարլը տեսնում է ճոխ խանութներ: Պատուհանների յետևից փայլում է վոսկին, գրավում են մսի, հացի, բանջարեղենների կույտերը...

Այդ բոլորը կբավականանար հազարավոր սովածների:

Իսկ նա: Նա ամբողջ ուր վոչինչ չի կերել. մի կտոր չոր հացով էլ նա ուրախ կլիներ:

Կարլը հառաչանքով նայեց յերկնքին:

Բերլինի վրա կախվեցին մութ ամպերը...

Գամին բռնում է դեռ ելի շատ ամպեր:

Կարլը անհամբեր սպասում է: Յուրաքանչյուր հինգ րոպեից հետո նա բաց է անում պատուհանը, նայում է դուրս, յերկնքին. ձեռքը դուրս է հանում: Բայց ելի վոչինչ, վոչ մի ձյան բյուրեղ:

Հանկարծ լսվեց փոքր յեղբոր ձայնը:

— Ձյուն է գալիս, ձյուն:

Կարլը վազեց դեպի պատուհանը:

Հանկարծ լսվեց փոքր յեղբոր ձայնը:

— Ձյուն է գալիս, ձյուն:

Կարլը վազեց դեպի պատուհանը:

— Ձյուն է գալիս, ձյուն:

Կարլը վազեց դեպի պատուհանը:

Ձյունի փաթիլները թափվում ելին բամբակի քուլաների նման:

Քանի գնում, ավելի խիտ եր թափվում ձյունը... Յերբ Կարլը մի ժամից հետո դուրս չեկավ տանից, շուրջը ամբողջովին ծածկված եր ձյունի խոր սավանով...

Նա շատ ուրախ պառկեց քնելու:

Ձյունը հա թափվում ե, հա թափվում:

Առավոտյան վաղ, շատ վաղ, — դեռ մութն եր, — Կարլը թիակը ձեռքին կանգնած եր փողոցի անկյունում. կապալառուն նրան ամենից առաջ վարձեց գործի համար:

Նա չեռանդով սկսեց աշխատանքը:

Ամբողջ որը ուրախ պտավում ելին ձյունի բլուրեղները:

Ժպտալի դեմքով, ուրախ Կարլը բանեց մինչև ուշ լերեկո, ուրախ լերգելով:

— Ձյուն, ձյուն, ձյուն:

145. Անապատաններ

Մենք շատ տեսանք վիշտ ու ցավեր,

սովն ու ցուրտը շատ քաշեցինք,

ինչպես հուզված ծովի միջում

անտունությունն անց կացրինք:

Մեզնից մեռան շատ-շատերը,

գնացքների տակ ընկան,

բուֆերներն ու անիվները

փշեցին մեր փողը մահվան:

Յուրաքանչյուր արցունք եր չորացնում,

այրում եր ու սիրտը մանում,

բուքը ձնում թաղում եր մեզ

և սուլում եր. «Դու անտուն ես»:

Աշխատավոր ընտանիքում

մենք կգանենք լույս, աշխատանք.

պիտենքներ, մենք ել ձեզ հետ

կգանք կարմիր դրոշի տակ:

146. Վ Ե Ր Բ Ը

Ա.

Այնտեղ եր նա հաճախ՝

հենված փողոցի պատին —

մանուկն այն խեղճ, անձար,

մանուկն այն մուսլ-մթին...

Կարծում եք՝ հեշտ եր մեկնում

իր ձեռքը հեզ անոթին,

լերբ չարչի Համոն գնում,

բացում եր դուռը խանութի:

Լուսից-մութ, մթից-առավոտ

դողում եր ցրտից, քաղցից,

զգում եր զգվանքի կարոտ,

սիրտը պալթում եր մաղձից:

Նստած եր նա հաճախ

լուին, անոթի, անշուր

ու ձեռք եր մեկնում անձար

ամեն մի չարչու:

Բ.

Այսօր անցնում ե լուրջ

փողոցով խիտ շարքերում,

փողոցն այդ, վորպես անուրջ,

անցյալն ե միտը բերում:

Ուռչում ե սիրտը հիմա,

հեգնանք ե դառն ու կծու.

կյանքն առաջ դատարկ եր, հիմար

և այսպես դարձավ լեցուն:

Թվում ե՝ հեռու-հեռու

մի տխուր ձայն լերգում,

բաց... կորչում ե հին ուրուն,

հնչում ե զիլ «մեկ, լերկո»-ն:

Պիտենք ե հիմա արգեն,

անցնում են խմբով այսօր,

և, վորպես շնչող վարդեր,

պճնում են կյանքը այս նոր:

Ձյունի փաթիլները թափվում ելին բամբակի քուլաների նման:

Քանի գնում, ավելի խիտ եր թափվում ձյունը... Յերբ Կարլը մի ժամից հետո դուրս չեկավ տանից, շուրջը ամբողջովին ծածկված եր ձյունի խոր սավանով...

Նա շատ ուրախ պառկեց քնելու:

Ձյունը հա թափվում ե, հա թափվում:

Առավոտյան վաղ, շատ վաղ, — դեռ մութն եր, — Կարլը թիակը ձեռքին կանգնած եր փողոցի անկյունում. կապալառուն նրան ամենից առաջ վարձեց գործի համար:

Նա լեռանդով սկսեց աշխատանքը:

Ամբողջ որը ուրախ պտտվում ելին ձյունի բլուրեղները: Ժպտալի գեմքով, ուրախ Կարլը բանեց մինչև ուշ չերեկո, ուրախ լերգելով:

— Ձյուն, ձյուն, ձյուն:

145. Անապատաններ

Մենք շատ տեսանք վիշտ ու ցավեր,
սովն ու ցուրտը շատ քաշեցինք,
ինչպես հուզված ծովի միջում
անտունությունն անց կացրինք:

Մեզնից մեռան շատ-շատերը,
գնացքների տակ ընկան,
բուֆերներն ու անիվները
փչեցին մեր փողը մահվան:

Յուրաքանչյուր արցունք եր չորացնում,
այրում եր ու սիրտը մտնում,
բուքը ձնում թաղում եր մեզ
և սուլում եր. «Դու անտուն ես»:

Աշխատավոր ընտանիքում
մենք կգտնենք լույս, աշխատանք.
պիտենքներ, մենք ել ձեզ հետ
կգանք կարմիր դրոշի տակ:

146. Վ ո Ր Բ Ը

Ա.

Այնտեղ եր նա հաճախ՝
հենված փողոցի պատին —
մանուկն այն խեղճ, անճար,
մանուկն այն մուսլ-մթին...

Կարծում եք՝ հեշտ եր մեկնում
իր ձեռքը հեզ անոթին,
չերբ չարչի Համոն գնում,
բացում եր դուռը խանութի:

Լուսից-մութ, մթից-առավոտ
դողում եր ցրտից, քաղցից,
զգում եր զգվանքի կարոտ,
սիրտը պալթում եր մաղձից:

Նստած եր նա հաճախ
լուին, անոթի, անշուր
ու ձեռք եր մեկնում անճար
ամեն մի շարչու:

Բ.

Այսօր անցնում ե լուրջ
փողոցով խիտ շարքերում,
փողոցն այդ, վորպես անուրջ,
անցյալն ե միտը բերում:

Ուռչում ե սիրտը հիմա,
հեզանք ե դառն ու կծու.
կյանքն առաջ դատարկ եր, հիմար
և այսպես դարձավ լեցուն:

Թվում ե՝ հեռու-հեռու
մի տխուր ձայն լերգում,
բաց... կորչում ե հին ուրուն,
հնչում ե զիլ «մեկ, չերկու»-ն:

Պիտենք ե հիմա արդեն,
անցնում են խմբով այսօր,
և, վորպես շնչող վարդեր,
պճնում են կյանքը այս նոր:

147. Թավամազ մեղուն

ա.

Անտառի խորքում մի հսկա ծառի փշակում մեղունները շինել էին իրենց փեթակը:

Փեթակի բազմաթիվ փողբրիկ խցիկները, վորոնք մոմից էին ձուլված, բոլորն էլ լիքն էին: Նրանց մեջ կամ վոսկի մեղրն էր պահված, կամ սպիտակ ձվերն էին, կամ թրթուրներն իրենց պատյանների մեջ փաթաթված:

Այդ պատյաններից մեկի միջիցն էր ահա, վոր դուրս սողաց մանուկ մեղուն ու գլուխը հանեց բլջից:

Իսկույն նրա դեմը վազեց դայակ մեղուն:

— Ո՛հ, բարե՛հ, փոքրիկս, գալուստդ բարի. եդ ի՞նչ սիրուն ես, ի՞նչ թավ մազեր ունես, յեկ՝ անուշդ դնենք Թավամազ:

Ասաց ու սկսեց լիզել նրան. մաքրեց, հարդարեց ու առատ կերակրեց մոտի մեղրի պաշարից: Յեվ յերբ Թավամազը կշտացավ, դայակը տարավ նրան փեթակի դուռը:

Աստված իմ, ի՞նչ լույս ե, ի՞նչ պայծառ: Թավամազն իսկույն բացեց թևերը ու թռավ թե չե՛ տեսավ իր շուրջը կանաչ, անվերջ դաշտեր, իսկ վերևը մաքուր, կապույտ յերկինք. և ի՞նչ անուշ բուրու՜մ էին ծառերն ու ծաղիկները:

Մեղուն սլացավ և հրճվա՜նքի պտույտներ եր անում ողբի մեջ:

բ.

— Ե՛՛յ, բարեկամ, ի՞նչ բանի յես այստեղ, — հարցրեց պառավ մեղուն:

— Զվարճանում եմ, — պատասխանեց Թավամազը:

— Զվարճանում ես. թե աստվածդ սիրես, — հեգնեց պառավը. — բոլորս այժմ աշխատում ենք. ի՞նչ քեֆի ժամանակ ե. այդպես առույգ, այդպես առողջ, մազերդ ել այդպես թավ. ծաղկի փոշին իսկույն կկպչի: Թռի յետևիցս. յես քեզ կսովորեցնեմ:

Մեծ մեղուն աջնպես արագ եր թռչում, վոր Թավամազը հազիվ եր կարողանում յետևից հասնի:

Մեծ մեղուն մտավ մի ահագին կապույտ ծաղկի բաժակը, սկսեց ծծել հատակի մեղրը. քսեց յետևի վոտներին ու գնաց ծաղկի դեղին փոշու ամանների մոտ, վերցնում եր դեղին փոշին ու քսում մեղրոտ վոտներին:

Թավամազը նույնն եր անում: Հանկարծ վոր չնայեց իրեն ու պառավ մեղվին, ծիծաղը պահել չկարողացավ: Յերկուսն էլ կարծես դեղին վարտիկներ էին հագել:

— Հը, հավանեցի՞ր վարտիկդ, — ասաց մեծ մեղուն. — դե, գնանք տուն:

Հազիվ էին փեթակը մտել, վոր փեթակի բոլոր դայակներն ու բանվորները վրա թափվեցին:

— Վա՛յ, պահապաններ, ոգնեցե՛ք, վարտիկս կերան, վարտիկս:

— Բան չկա, քաղցած են, — ասաց մեծ մեղուն: — Դե՛, լավ, բավական ե, — դարձավ մյուսներին և առաջնորդեց Թավամազին շտեմարանը և ցույց տվավ, թե ինչպես պետք ե ածի մեղրը մոմի բլջիցների մեջ:

Ու Թավամազը դարձավ մեղր հավաքող: Հոգնեցնող աշխատանք եր, ճիշտ ե, բաց աշխատանք եր. և ի՞նչ լավ ու կարևոր բան եր այդ աշխատանք ասածը:

Այսպես ել մի անգամ, յերբ Թավամազը բեռնավորված՝ դաշտից տուն եր դառնում, տեսավ փեթակի շուրջը մի անսովոր իրարանցում. լսվում եր սաստիկ բզզոց ու մի սարսափելի գոռոց:

Մոտ յեկավ ու դարմացավ, վոր բոլոր մեղունները դուրս էին թափվել ու պտույտներ էին անում փեթակի շուրջը: Այնպես էին կատաղել ու իրար խառնվել, վոր վոչինչ չեր կարելի հասկանալ: Այսքանը պարզ եր, վոր մի թշնամի յեր վրա տվել: Յեվ ի՞նչ թշնամի. ինքն՝ արջը:

Յետևի թաթերի վրա կանգնած, նա մրթմրթալով ման եր գալիս ծառի շուրջը, իսկ առջևի թաթերով աշխատում եր հասնի մեղրի պահեստին:

Հանկարծ քաշեց, պոկեց ծառի կեղևի մի կտորը, վորտեղից դուրս թափվեցին ներսը մնացած մեղուները: Արջը մի թաթով պաշտպանում եր իրան հուսահատ հարձակումից, իսկ մյուս թաթը կոխում եր փեթակի խորքը, ուր մեղրի շտեմարանն եր, հանում եր դուրս և ազահաբար կուլ տալիս անուշ, վոսկեգուլն մեղրը:

Այս վոր տեսավ թավամազը, ել իրեն զսպել չկարողացավ, կատաղած նետվեց արջի վրա ու խալթեց ուղիղ աչքը: Արջը մռնչաց սաստիկ ցավից, թողեց փեթակն ու փախավ:

Բայց խեղճ թավամազը... իր դայրույթից այնպես խորն եր խալթել, վոր խալթոցը մնացել եր արջի աչքի մեջ: Խեղճը հանկարծ թուլացավ, ընկավ գետին իր նման նահատակներէ մոտ և աչքը հավիտենական փակեց:

Բայց մեռնելիս նա չեր զղջում իր արածի վրա. չէ՞ վոր փեթակի ազատության համար եր զոհել իր կյանքը:

Չէ՞ վոր՝ «ամենքը մեկի համար են, մեկն՝ ամենքի»:

148. Գաբո բիճու շերամապահությունը

Յես ու Գաբո բիճեն անցնում եյինք Լոռու ձորով:

— Հէյ, տիրացո՛ւ, — ձայն տվավ նա:

— Հրամմե:

— Հրամանդդ շատ. Յես տեսնում եմ, վոր ես մեր նոր ուսում առածները շատ աշխարքիցը դուրս մարդիկ են. դու սրան ի՞նչ կասես:

— Ինչո՞ւ, Գաբո բիճա:

— Նրա համար, վոր հենց գիտեն՝ ամեն բան իրենք են հասկանում, իրենցից առաջ վոչ մարդիկ են չեղել, վոչ բան հասկացել: Մին ել կտեսնես բռնեցին ու գլխիդ գելի ավետարան կարդացին. հա ես ճանճ պահիր, ես արեշումի ճիճու պահիր, եսպես մածուն շինիր, եսպես ցանիր, եսպես հնձիր... Տո՛, հեր ոխնած, առաջ հարցրո՛ւ, տես եդ բաները դրանք ե՞

միտք արել են թե չե, նրանից հետո՝ թեկուզ ուշունց տուր՝ — Հետո միտք եք արել վոր, Գաբո բիճա:

— Ախպեր, ա՛յ, չես հիմի՝ որինակի համար՝ մեկն ասեմ, դու տես՝ մենք ել հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանում, թե՞ չե: Մի աշունք մեր Դավոն գնաց քաղաք խոզ ծախելու: Մի ճանանչ մարդ արեշումի ճիճվի սերմ եր տվել, թե՛ տարեք ձեր տեղն առաջ բերեք:

Ճամպա պահեցինք, մինչև գարունը բաց չեղավ: Գարունը վոր բաց չեղավ, վոնց վոր խրատ եր տվել՝ ես ճիճվի սերմը բերինք մեր տատի ծոցում դրինք, վոր տաքանան, դուրս գան: Դուրս չեկան՝ ասեղի ծերի չափ մանր սև զատեր: Տիրացո՛ւ:

— Հրամմե:

— Եդ ձեր ուսումնականները թե գիտեն — արեշումի ճիճուն ի՞նչ կուտի:

— Թթան տերև:

— Ապրես, դրուստ ե: Գնացի ձորից մի շալակ թթան տերև բերի, կապեցի մեր տան ամբարի վոտիցն ու ճիճուն վրեն ածի: Ինչքան մարդ չեկան նայելու, վոչվոքի տուն չթողինք, վոր աչքով չտան. ասինք՝ թող մի տեսնենք՝ ինչ ե դուրս գալի: Ա՛յ տղա, եդ անտեր ճիճուները միքանի որ կացան ու կոտորվեցին:

Հիմի թե ասենք նրանից եր, վոր գոմեշի ձագը շատ եր մոտիկ կապած, վոտնատակ եր տալիս, թե նրանից եր, վոր հավերը տուն եյին թափվում, կտցահարում, դե վո՞նց անենք: Հո չեյինք կարող հավերը կոտորել կամ ձագն սպանել:

Թե ասենք անձրևիցն եր, վոր չերդկով ներս եր թափվում, մին ել մարդ միտք ե անում, թե քաղաքումն անձրև չի գալի... Մի խոսքով՝ բանը գլուխ չեկավ: Տեսանք, վոր մեր չերկրումն արեշումի ճիճուն անում չի, բան չի դառնում:

Դե, գարմանալու ի՞նչ կա վոր. եսպես չերկիր կա, հավք չի ապրում, եսպես չերկիր կա, ցորեն չի դուրս գալի. ամեն չի աշխարհ մի տեսակ բնություն ունի, բայց ես մեր նոր ուսումն առածները եսքան ել բան չեն հասկանում:

— Ի՞նչպես եք կարծում, ինչից եր, վոր Գարո բիձու շերամը
կոտորվեց:

— Ճիշտ եր խնամում Գարո բիձեն չերամին:

— Ձեր գլուղում շերամ պահում են:

— Հայաստանում ել վորտեղ են շերամ պահում:

149 Մետաքսե թաշկինակը

Մի աղջիկ խնդրում եր հորը՝ մետաքսե թաշկինակ նվիրի
իրեն. հայրը պատասխանեց նրան.

— Յերբ դու կիմանաս ինչպես ե բուսնում մետաքսե
թաշկինակը, լես քո ցանկությունը կկատարեմ:

— Ի՞նչպես կարող ե թաշկինակը բուսնել, ասավ աղ-
ջիկը. — վորտեղից իմանամ, ասա, հայրիկ, ում հարցնեմ:

— Գնա ալգի, հարցուփորձ արա, հետևիր, դիտիր, և դու
ամեն ինչ կիմանաս:

Աղջիկն ալգի գնաց և հարցրեց.

— Վորտեղ ե բուսնում մետաքսը, ցույց տվեք:

Այգեպանը նրան թիթեռու տակ տարավ ու ասաց.

— Ահա թե ով ե մետաքսը տալիս:

— Յերևի սրա տերևներից են մետաքս շինում, — մտածեց
նա:

Բայց չերբ լավ նայեց, տեսավ, վոր ամբողջ ծառը ծած-
կված ե բրբուրներով, վորոնք ագահությամբ ուտում են տե-
րևները:

— Ահ, նրանք կերան բոլոր մետաքսը, — հառաչեց աղջիկը:

Այգեպանը ժպտաց ու շոյելով աղջկան՝ ասաց:

— Նրանք վոչ թե ուտում են մետաքսը, այլ հենց իրենք
են մետաքս պատրաստում, լեթե դու շուտ-շուտ գաս մեզ
մոտ, կհամոզվես այդ բանում:

Ու աղջիկն սկսեց ամեն ոք այգի հաճախել:

Նա տեսավ՝ ինչպես թրթուրները թիկեր արձակեցին ու
իրենց շուրջը տնակներ հյուսեցին — հարսնյակներ դարձան:
Միքանի ոք անց՝ հարսնյակներին հավաքեցին ու գոլ շրուս
թրջելուց հետո, մետաքսը քանդեցին:

«Բայց վորտեղից են թրթուրները», — մտածում եր աղջիկը:

Այն ժամանակ այգեպանը ցույց տվեց մի անկյունում ա-
ռանձնացրած հարսնյակները, վորոնք մութ գույն ելին ստա-
ցել և թրջվել մի ծալրից. նրանց միջից շուտով սպիտակ թի-
թեռներ դուրս լեկան, վորոնց թևերը դեռ թաց ելին:

Կարճ ժամանակ թռչկոտելուց հետո այդ թիթեռները ձվեր
ածեցին — մանր, խաշխաշի հատիկների նման — ու իրենք մեռան:

— Շերամի սերմն ե այս, — ասաց այգեպանը. — դարնանը
սրանցից թրթուրներ դուրս կգան, ասպա հարսնյակներ կդառ-
նան, հետո... դե, դե ասա, հետո ի՞նչ կլինի:

— Հետո... թիթեռ կդառնա, թիթեռը ձու կածի և հետո
ելի աճնպես կլինի:

— Իսկ մետաքսը, ուր մնաց քո մետաքսը:

— Մետաքսը, — կմկմաց աղջիկը. — մետաքս ստանալու հա-
մար դուք սպանեցիք հարսնյակների մեջ քնած թրթուրներին:

— Յեթե չսպանեցինք, նրանք թիթեռ կդառնային և
կկրծեցին մետաքսը՝ լույս աշխարհ գալու համար:

— Յես հիմա գիտեմ, գիտեմ բոլորը, — կանչեց աղջիկն
ու տուն վազեց՝ այդ բոլորը հայրիկին պատմելու:

Հայրը շատ ուրախացավ և մյուս օրն աղջկա հետ շուկա
գնաց՝ մետաքսե թաշկինակ գնելու համար:

150. Շերամ

— Ախի, Աստղիկ, շերամի սերմ հարեցիր:

— Տո, վորտեղից, Սանդուխտ, կա՞ վոր: Մարդարենց Զա-
վահիրը մի մատնոց տվեց, են ել ենքան լեզու լեմ թափել,
աղաչել, հոգիս դուրս ե լեկել: Դե՞ վոնց:

— Յեա ունեցի միքիչ: Պետրոսն են որը Յերևանից բերեց:


— Չէս դրել հալա:

— Ախշի, բա ի՞նչ, արդեն բացվել է: Շորի մեջ փաթած թած դրել ելի լուսամուտը. արևի շողքն ընկել եր վրան, իրիկունը վերցրի, տեսնեմ՝ մանր-մանր վորդերը չեռում են մեջը:

— Ախշի, դրո՞ւստ: Բա վոր արևը խաշե՞ր:

— Ել չեմ իմանում, գուցե ենքան տաք չի չեղել:

— Յեա ել մատնոցի մեջ կպցրի թևիս տակը, մի որ մնաց, բաց անեմ տեսնեմ ի՞նչ—բացվել է:



Հարևանուհիները բաժանվեցին: Սանդուխտին տանը դիմավորեց իր աղջիկը՝ Սոնան:

— Վորդերին տերև տվել էս, Սոնա:

— Տվել եմ: Յեղիշեյի հետ գնացինք մի մաղով բերեցինք:

Մտան տուն: Յերգիկը բռնել էլին կիսով չափ. և տունը բավականին մութն եր: Թոնրի կողքին փալամներով ծածկած ինչ-վոր մաղեր ու սալակներ կային: Սանդուխտը փալասը դեն գցեց ու բարձրացրեց սալակի վրայի շորը:

Սալակի մեջ թթի կանաչ տերևների վրա սպիտակին ելին տալիս մանր-մանր վորդիկները, վորոնք չեռանգով ուտում էլին ու մաշում տերևները: Յ սալակի ու շ մաղի մեջ եր դրված շերամը: Մայր ու աղջիկ տնտղեցին բոլորը ու նորից ծածկեցին, վորպեսզի վորդերը չմրսեն:

Որեկան չերեք անգամ տերևներ էլին շարում վրաները, և նրանք ազահուլթյամբ խժռում էլին այդ տերևները:

Շուտով տան մեջ պատերի տակով դրեցին միքանի քուրսի, տախտակներ ու սալակների և մաղերի միջից տեղափոխեցին վորդերին նրանց վրա:

Վորդերը հինգ որեկան էլին, չերբ առաջին անգամ քուռ մտան: Քուռն առեց 3 որ: Ապա զարթնեցին ու շարունակեցին ուտել ու զարգանալ:

Դրանից հետո դեռ մոտ 35 որ էլ խնամեցին վորդերին: 2—3 անգամ նոր տախտակներ դրեցին, տեղը լախնացրին: 6 անգամ էլ 2—3 որով քնեցին վորդերը, իսկ արթուն ժամանակները ուտում էլին հա ուտում:

Վորդերը մեծացել էլին ու ամեն մեկը համարյա թե մի ցուցամատի չափ կար: Սպիտակ, առողջ, չաղլիկ—նրանք բռնել էլին ամբողջ տունը, և քուրսիների տախտակների արանքները հազիվ ման գալու տեղ եր մնացել:

Միքանիսը վորդերից քաշվել էլին տախտակների ճեղքերի մեջ ու սկսել կոկոն հյուսել:

Յեղիշեն ամենից շուտ տեսավ դրանք և լուր բերեց մորն ու բրոջը: Նրանք վազեցին ներս: Ուրախութունից կարծես գժվել էլին:

— Շուտ, Սոնա, գնանք ավել բերենք, դնենք կողքերը,—ասում եր Սանդուխտը:

Յերեկոյան կողմ նրանք շալակած բերեցին սպիտակ սարի ավելները: Փուռն-փուռն շարեցին քուրսիների տախտակների ավելները: ախպես, վոր վորդերին հեշտ լինեք ոգտվել աչդ ավելներով և նրանց վոստերի մեջ կոկոն հյուսել: Նրանցից միքանիսն արդեն զգում էլին աչդ փուռնները և վորոնում գլուխները պարզած:

— Տեսան, տեսան,—կանչեց Յեղիշեն:

— Նրանք չեն տեսնում, հոտ են անում,—ասաց Սանդուխտը,—նրանք կույր են:

— Յա,—զարմացավ Յեղիշեն:

— Հրեն բարձրացավ վրան,—ասաց Սոնան.—հրեն թելը դուրս չեկավ բերնից, հրեն սկսեց հյուսել:

Հենց այդ ժամանակ ներս մտավ Աստղիկը:

— Վայ, ախչի, եղ ի՞նչ լավ են քո վորդերը, — ասաց նա հիացմունքով. — Իմոնքը մանր, բարակ, հալա չեն ել սկսել հյուսել:

— Սրանց սերմը լավն էր. — ասաց Սանդուխտը:

— Դեռ իմոնքս լավ են, — շարունակեց Աստղիկը. — Զարգարենց Շուշանինը բոլորը սեպացավ-կոտորվեց:

— Սերմը հիվանդ է յեղել: Քոնոնքին ել միքիչ կերնավել արա, թող քաղցած չմնան, լավ կլինեն:

Միքանի որից հետո վորդերն արդեն քաշվել էլին ավել-ների մեջ ու կոկոններ հյուսել:

Միայն հատուկենա վորդերը դեռ նոր վորոնում էլին իրենց հյուսելու տեղը:

Սանդուխտը նայում էր ուրախ սրտով ու պատրաստվում էր հավաքել, չորացնել արևի առաջ, ապա տաք ջրի մեջ խաշել ու թելը քաշել, վորից հետո պիտի թել մաներ ու այդ թելից զանազան գեղեցիկ գործվածքներ պատրաստեր:

ՀԱՐՑԵՐ

— Ձեր գլուղում կամ շրջանում շերամապահությամբ զբաղվում են:

— Ի՞նչ են պատրաստում մետաքսից ձեր գլուղում:

— Ո՞ւր են ուղարկում չոգտագործված մետաքսը:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

— Յեթե հնարավոր է, ձեր դպրոցումն ել շերամ պահեցեք:

— Իմացե՛ք ի՞նչ կարելի չե պատրաստել մետաքսից:



151. Ով աշխատի — նա կուտի

ՏԻՉԼՈ. — (Մտնելով բեմ
բեռնավորված
զամբյուղով):
Ո՛Ֆ, հոգնեցի,
մատաղ եմ ձեզ:
Սարի գլխից
բեռով եսպես,
տղազալով
յեկա հասա.
մենք ել կասենք,
թե կյանք է սա. —
առավոտից
դեռ չծեղած
փափուկ տեղդ
թող ու վեր կաց.
Թուր դաշտը
ու սարը
զամ են հեռու
անտառը,

Թուր ծաղկից
են ծաղիկ,
եստեղ տիտիկ,
ենտեղ՝ տիկ,
քիթդ կոխի
առնեն տեղ,
մեղր հավաքի —
բեր եստեղ:
Տեսնում եք, դեհ —
կյանք չի, կյանք.
չորս ամսական,
սենց տանջանք.
սոված մեռա.
առավոտից
քիչ թող կերա
անուշ խոտից
ու նեկտարով
ծաղկի միջից
նոր թրջեցի
կոկորդս քիչ:

Ե՛հ, ինչ վոր ե,
 փեթակ գնամ,
 ևս զատարկեմ
 ու հետ դառնամ:
ՏԻԶՈ.— Տիզլո՛ւ, Տիզլո՛ւ,
 միբիչ կամաց.
 Ինչ եմ լսում,
 ա՛յ փշացած.
 Խալխի առաջ
 փեթակի մոտ,
 փնթփնթում ես,
 ա՛յ անամոթ.
 սիպտակել են
 մագերս, տես.
 փառքով, պատվով
 մեղու լեմ լեւ.—
 եսքան տարի
 մեկն ինձ չասեց՝
 Տիզո՛ տատի,
 սենց կամ ընենց.
 հիմի պիտի
 խայտառակես.
 Թե լսել են,
 Տիզլո՛ւ, վա՛յ բեզ.
 եստեղ կանգնած,
 բեռը շալկին
 վատաբանել
 աշխատանքին,
 աշխատանքից
 ել անուշ բան:
 Ա՛յ փշացած
 լիրբ, անպիտան,
 գնա՛, կորի՛

աչքիցս, թե՛
 փեթակովս եմ
 յերդվում փետե,—
 ես ճիպտոր
 ճառիդ համար
 կկոտրատեմ.
 Ղլխիդ հիմար:
 (Տիզլուն գնում է):
ՏԻԶՈ.— (Մենակ):
 Ե՛հ, ջահել ե,
 կսովորի.
 ո՞վ չի յեղել
 սրա որին.
 լեւ ել ջահել
 վախտս սենց ելի:
 դեռ սրանից ել
 քիչ խենթ ելի:
 Ծեղեց թե չե—
 մերս կողքիս
 բոթում եր, թե՛
 վեր կաց, ա՛յ Տիզ:
 Շմկոտալեն
 վեր ելի կենում,
 քիչ ել դես-դեն
 փրվում, ձգվում,
 նոր պարկերս
 շալակս առած,
 թռչում դաշտը
 կանաչ ծաղկած,
 եստեղ, եստեղ
 քիչ տգողում,
 պարկի տակը
 քիչ թոզ լցնում,

մեղրամանն ել
 անուշ ջրով,
 տուն ելի գալի
 թռչկոտելով,
 հոգնածի պես
 տնքտնքալով,
 մտնում փեթակ
 գոռոզ քայլով.
 գնում ամբար
 դատարկ պարկով
 ու լեւ գալիս
 առքով փառքով:
 Մի որ եսպես
 կիսադատարկ,
 յերեք հոգով,
 հաստ ու բարակ,
 խաղով-յերգով
 տուն ելինք գալիս,
 մին խաղ ասում,
 մին ծափ տալիս,
 բաց մեր ձորին
 չմտեցած,
 զամբլուղներս
 դրեցինք ցած.
 Թմբի տակին
 նստեցինք մենք,
 ինչ ե՛ մեր մեջ
 խորհուրդ անենք,—
 թե լոնց կլինի՝
 քիչ աշխատենք
 ու մինչ կեսոր
 անուշ քնենք:
 Դու մի ասի—

Տիզ-տիզ տատը
 իմանա սա.
 ու մեր դատը
 հենց եզ որը
 ճիպտներով
 կատարեցին
 մեր— ջոջերով:
 Տիզ տատը մեզ
 ծեծեց, հետո
 կանչեց մոտը
 եզ յերեկո,
 քարոզ կարդաց—
 ու եզ որից
 մեզնից մեկը
 փախչի գործից:
 Հետո վոր մենք
 քիչ մեծացանք,
 չարն ու բարին
 լավ հասկացանք,
 խելքի չեկանք
 ու յերեքով
 բանում ելինք
 խաղով յերգով:
 (Գնում է):
ՏԻԶՈ.— (Դուրս գալով փե-
 րակից, գայրացած):
 Դե հա՛, դե հա՛,
 Տիզո՛ տատի.
 քարոզ բեր
 գլխիս թափի,
 հա՛յ անամոթ,
 հա՛յ անպիտան,
 հա՛յ դու անդործ,

հայ փնթփնթան.
 մի արի տես՝
 լես եմ անգործ,
 թե ես բռն ե
 անում շատ գործ:
 Արեւումը,
 հրեն, վեր ընկած
 տաքացնում ա
 փորը տուգած:
 Չորս ամսական
 մի մեղու լեմ,
 հիսուն աման
 մեղր ունեմ.
 ես անպիտան
 բրդոտ բողբ,
 մի թիզ ճարպով
 պատած փորը—
 որը հինգն ե
 բաց անում,
 ուտում ե և
 չի բանում:
 Դե գո՛ւք ասեք՝
 լես բանեմ,
 մեղր հավաքեմ,
 տուն տանեմ,
 որս սոված
 անցկացնեմ—
 ու լիբբ բողբին
 ուտացնեմ:
 Եսպես որենք
 կլինի—
 լես աշխատեմ,
 բռն ուտի:

Թե ես բանին
 վերջ չտանք,
 կյանքը կլինի
 մեզ տանջանք
 Հիմի գործ կա.
 Իրիկնով
 պիտի կանչեմ
 լես ժողով.
 ցեղն ի՞նչ կասի—
 մի տեսնենք—
 եսպես բանին
 անորենք:

(Գնում ե),
 ԲՈՌ.— (Փեղած, բերանը

սրբելով):
 Ի՞նչ քաղցր եր
 մեղրը, էֆ.
 ո՞վ եր տեսել
 եսպես քեֆ,
 մեղուները
 աշխատում են,
 թողն ու մեղրը
 հավաքում են,
 տուն են բերում,
 ամբարում
 ու ինձ՝ Բողբս
 կերակրում:
 Յես ել տունը՝
 ես փետից,
 պաշտպանում եմ
 գողերից.
 համա ի՞նչ գող
 ու ի՞նչ բան.

գողը լես եմ, (կամաց)
 լես՝ պաշտպան (հպարտ):
 Ել եսպես կյանք
 ունի ո՞վ—
 կարասները
 լի մեղրով,
 ամբարները
 թողով չի,
 տարին կոր
 կեր, խմի:

ՏԶԿՈ. (Զայրացած մեկնում
 ե առաջին մեղվի հետ.
 նրան տեսնելով՝ Բողբ
 քաղցնում ե):
 են թալանչին,
 են գողը,
 սատկի նրա
 բերողը.
 լերեք աման
 մի որը
 Բողբ լցնի
 իր փորը.
 տո՛ քիչ ել չեն,
 շատ են, շատ.
 սրանց համար
 չկա դատ:
 Ախպեր, եսպես
 չի լինի.
 Տգկոն մեղրը
 հավաքի,
 Բողբ ուտի,
 տրաքի

ու մեր վրա
 ծիծաղի:
 Ա. ՄԵՂՈՒ.— Լսիր, Տգկո.

մտքումս
 մի բան ունեմ.
 ուզում ես՝
 կանչենք ժողովի
 մեր ցեղը,
 կուզես ամբողջ
 մեր գեղը.
 ինչ վոր պետք ե,
 մենք կասենք,
 մեր դարդերին
 ճար կանենք:

ՏԶԿՈ.— Եղ լավ ասիր,
 ա՛յ ապրես.
 Ի՞նչ եմ ասել—
 խելոք ես.
 Թե եղպես ե,
 շուտ գնանք,
 գործը պրծնենք,
 հետո գանք:
 (Գնում եմ):

ԲՈՌ.— Բանս բուրդ ա,
 ո՞ֆ, աման.
 ինձ հո կանեն
 փոստահան.
 բողբուս մի
 հավաքվենք,
 մենք ել մի բան
 մտածենք.
 Է, մեծ բան չի,

հիմար են.
քիչ կխոսեն,
կթարկեն.
առաջ ել ելին
շատ խոսում.
ինչ պիտ անեն
ժողովում.
քիչ կողզան,

տղազան.
դրանց գործն ե՛լ
թող տղան,
բայց ինձանից
վախենան.—
իմ անունն
Բոռ Բոռյան:

152. Շունն ու խոզը

Շունը խոզին ասաց մի որ.
— Տո հաստափոր,

տո պնդերես, պնդակաշի.
կախ գլուխդ մի վեր քաշի,
մի տես, մի տես, այ անաբուռ,
եսքան ել թուրք, եսքան ել մուր:
Հպարտություն, պատիվ, ամոթ
չկա՞ քեզ մոտ:

Ամեն մի որ մեր ես բախում
ու՛մ հա, ու՛մ չե, քեզ են թախում.
եւ փայտ չկա՝ գլխիդ ջարդեն.
կող ու կշտից ընկար արդեն:
— Խը՛ռ...խը՛ռ... կող-կուշտ...
Արդեն... անշուշտ...

Խոզը խոռաց. — Հաչան-Փչան
հին ընկեր ջան,
այ բաց բերան,
այ թաց բերան,
ասածներդ ավելորդ են...

Թող ինձ թքեն, ծեծեն, ջարդեն.
Լավ ե ընկնեմ կող ու կշտից,
քան հեռանամ լիքը տաշտից:

153. Սար գնալը

Ահա գարնան հետ և շարան-շարան
դաշտավայրերից դեպի դով սարեր
ձգվեց սալլերի, ուղտերի քարվան—
փախչում են շոգից թե՛ թուրք, թե՛ հայեր:



Վորը տանում ե ալաշխի քեչան,
կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան,
վորն ել՝ զարդարված գիր ու փնջերով՝
որորվում, անցնում լեռան լանջերով:

Բայց նառն ինքնազոհ քալում ե հանդարտ,
բոժոժ ու զանգեր վզին ու կրծքին,
և որորելով կապերաներն ու զարդ,
գեղեցիկ հարս ե նա տանում մեջքին:
Թնդում են ձորում զանգի հնչյուններ,
ձիերի խրխինջ, պալտերի դոփյուն,

մեկ-մեկի կցած անվերջ քարվաններ՝
բաշում ե նառը, անեղ մոռնում:

Մերթ բարձրանալով կանգնում ե հպարտ,
մերթ փրփուր թափում կատաղած բերնով,
մերթ չերկար շուրթը կախելով բարդ-բարդ,
նա պարծենում ե գեղեցիկ բեռով:

Լեռների տոնն ե. մարդ և անասուն
ուրախ չերգերով դիմում են սարեր,
մոռնալով ձմռան քաշած վայնասուն,
ծաղիկ փնջելով անցնում են ձորեր:

Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
գարնան արևից փայլում են զենքեր,
և թարմ, կենսաբույր թավիշ կանաչով
բացվում են, ժպտում սարվորի գեմքեր:

Մայում են, բայում գառն ու մաքին,
թնդում կովերի, հորթերի բառաչ,
խակ տրնգալով գոմեշը ձագին
կանչում ե գանգաղ՝ վազելով առաջ:

Վազում են հոգնած շները հոտի
և լեզուն հանած թանչին են տալիս,
լսվում ե հանկարծ ձաֆնը լակոտի,
վոր քոչից ընկած՝ կալանչ ե գալիս:

ՀԱՐՅԵՐ

— Յերբ և ինչ՞ես չեն սար գնում:

— Ի՞նչ են անում սարվորները սարում:

— Նկարագրեցեք սարվորների կյանքը:

154. Քոչը

Ծագում ե մանուկ արևը գարնան
կովկաս լեռների ձյունի պատենշից,
զարթնում են մեկ-մեկ սարերն աննման
ձմռան անվրդով քնի մշուշից:

Ահա Լավարի վիթխարի ուսին
բազմում ե արփին թարմացած ուժով,
սարեր ու ձորեր իրար չերեսին
նայում են, ժպտում ամպի մշուշով...

Վերջին ձյուններն ել արդեն հալ ընկան.
արտասովեց իսկույն լեռների հսկան.
ամեն մի ձորից աղբյուր ե հոսում,
ամեն մի թփից բլուրբուլ ե խոսում:

և՛ դալար հովիտ, և՛ ժաշուի կրծքեր,
արձագանգ տալով, գարուն են հնչում.
ձմռան փարախից հովվական չերգեր
գեփյուռի թևով սարերն են թռչում:

Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
բացվում ե, ժպտում կոկոմից զվարթ,
փարթամ գեղության վողին Գուգարքի
շնչում ե գարնան բույրով անաղարտ:

Ամպերն ել իրար համբույրներ տալով,
չվում են կաթառ Լավարը գրկում,
առաջին անգամ խիստ վորոտալով,
Գուգարք աշխարհին վողջույն են չերգում:

155. Կենդանիների հոտոտելիքը

Յերբ մարդ ցանկանում է ճանաչել վորևե անարկա, նա տեսնում է, լսում նրա ձայնը, յերբեմն հոտոտում է կամ ճաշակում:

Առարկան ճանաչելու համար մարդուն ամենից ավելի անհրաժեշտ է շոշափելիքը:

Իսկ կենդանիների ու գազանների համար ամենից կարևորը հոտոտելն է: Ձին, գայլը, շունը, կովը և այլն, քանի դեռ առարկան չեն հոտոտել, ճանաչել չեն կարողանում:

Յերբ ձին վորևե բանից վախենում է, նա փնջացնում է, մաքրում է իր քիթը, վորպեսզի լավ հոտոտի. և քանի դեռ չի հոտոտել, նա վախ է զգում:

Շունը տիրոջ լետեից գնալիս հաճախ տիրոջը չի ճանաչում և սկսում է հաշել, իսկ յերբ հոտոտում է, ճանաչում է, վոր իր տերն է:

Յեզները տեսնում են, թե ինչպես են ծեծում յեզներին, լսում են նրանց բառաչը սպանդանոցում, աչնուամենաչիվ չեն հասկանում, թե ինչ է կատարվում: Բայց բավական է, վոր կովը կամ յեզը ընկնեն աչնալիս մի տեղ, ուր յեզան արջուն կա. հոտոտեն թե չե, կհասկանան, կսկսեն բառաչել, վոտքերը դոփել, ու նրանց տեղից շարժել չի լինի:

Մի ծեր մարդու կին հիվանդանում է. ծերն ինքն է գնում կովը կթելու. կովը փնջացնում է, հասկանում է, վոր տանտիկինը չի, ու կաթ չի տալիս: Տանտիկինը մարդուն խորհուրդ է տալիս հագնել իր (տանտիկնոջ) մուշտակը և լաշակն ել գլխին գցել: Այդ ժամանակ կովն սկսում է կաթ տալ. բայց հանկարծ ծերուկի փեշերը բացվում են, կովը հոտոտում է և նորից կաթը կտրում:

Վազկան շները յերբ հետապնդում են գազանին, յերբեք հետքերով չեն գնում, այլ մոտ քսան քալ կողքից: Յերբ խամ վորսորդը ցանկանում է շանը գցել գազանի հետքերի վրա և շան քիթը հրելով կալցնում է հետքերին, շունը միշտ փախս է

տալիս: Հետքն աչնքան սուր հոտ է արձակում նրա համար, վոր նա վոչինչ չի կարողանում պարզել՝ արդյոք գազանն առաջ է վազել, թե դեպի յետ է գնացել: Նա քիչ հեռու չե վազում ու աչն ժամանակ միայն զգում, թե վոր կողմից է սաստիկ հոտ գալիս:

Նա նույնն է անում, ինչ վոր մենք ենք անում աչն ժամանակ, յերբ բարձր խոսում են հենց մեր ախանջին. մենք քիչ հեռանում ենք ու նոր միայն վորոշում, թե ինչ են ասում:

156. Շների մասին

1.

— Ձարմանալի կենդանիներ են շները, — ասաց Հայկն ընկերներին, — ինչե՛ր ասես՝ չեն պատմում նրանց մասին:

— Հետաքրքիր է, Հայկ, պատմիր, պատմիր լսենք, — խընդրեցին մյուսները:

— Շատ լավ, — ասաց Հայկն ու սկսեց.

— Լսեցեք, պատմեմ: Մի տանտեր միքանի որ իրար վրա նկատում է, վոր սեղանի վրա դրած մսի կտորն անհետանում է. Նա հետևում է, համոզվում, վոր իր շունը կամ կատուն պետք է արած լինեն:

Մի որ ել դրսից լուսամուտի վարագույրի արանքով թագուն նայում ու դիտում է: Կես ժամ չեր անցել, ասում է տերը, շունը տեղից վեր կացավ, մոտեցավ լուսամուտին, դռներին և ախանջ դրեց. յերբ համոզվեց, վոր ձայն չկա, մոտեցավ կատվին ու դնչով խփելով՝ սեղանին նայեց: Այսպես միքանի անգամ կրկնեց: Կատուն հասկացավ շան միտքը, թռավ սեղանի վրա ու տապակած միսն առած՝ ներքև ցատկեց:

Շունն իսկույն վրա հասավ, միսը խկեց նրանից և սկսեց ուտել:

Տերն իմաց է տալիս ծառային, վոր դուռը բաց անի: Յերբ շունը դռան ձայնը լսում է, իսկույն մսի կտորը բերանից

զցում եւ և հաջելով՝ կատվի վրա յե հարձակվում: Տերը շան խելոքությունը հավանելով՝ նրան ներում եւ:

Մի մայր ել ջրի յե գնում: Տանը բացի շունը վռչվոք չի լինում: Քիչ հետո շունը տեսնում եւ, վոր մի ոձ սողալով ներս ե գալիս և սողում ե դեպի յերեխայի որորոցը: Նա իսկույն հարձակվում ե ոձի վրա և նրան միքանի կտոր անում: Շան հաջոցից յերեխան տեղից եր ե թռչում և որորոցից ներքե ընկնելով՝ լալիս, լալիս՝ քնում ե:

Շունը մանկան մոտ նստած հսկում ե: Յերբ մայրը ներս ե մտնում ու տեսնում ե յերեխային որորոցից վալը ընկած, շան բերանն ել արշուճոտած, վախեցած գոռում ե—«վորդիս, վորդիս», բայց տեսնում ե սպանված ոձը, և նոր հասկանում ե շան քաջագործությունը:

— Շների մասին յես շատ եմ կարգացել,— մեջ մտալ Սիրուշը: — Որինակ՝ մի վարժեցրած վորսի շուն ամեն առավոտ շուկայից հաց, միս, ծխախոտ և այլ բաներ եր բերում: Մի որ ել հացթուխը փորձելու համար շանը թոնրից նոր հանած տաք հաց ե տալիս: Շունը բարկացած հաջում ե նրա վրա, փողն առնելով հեռանում ե: Մի անգամ ել այդ շան տարած կապոցը ճանապարհին բացվում ե, միջի միսը, գինու շիշը ցած են ընկնում:

Շունը վորչափ աշխատում ե, չի կարողանում տանել ստիպված՝ մոտը կանգնած պահում ե. տերը զարմանում ե, թե ինչու շունն այսչափ ուշացավ. դուրս ե գալիս և ինչ ե տեսնում: Իր շան չորս կողմը միքանի շներ հավաքված՝ ուզում են նրանից միսը խլել, իսկ սա կատաղի կերպով պաշտպանում ե և չի թողնում իրեն մոտենալու:

— Շները շատ լավ, հետաքրքիր և զարմանալի պատմություններ ունեն, — ասաց Հայկը, — բայց իմ կարծիքով ամենահետաքրքրականը Բերնարի մեծ-մեծ շներն են. սրանք բուք ու բորանից մարդկանց կյանքն են ազատում:

— Պատմիր, եդ ել պատմիր, — ամեն կողմից կրկնեցին մանուկները:

— Բերնարի ապաստարանը, — սկսեց Հայկը, — գտնվում ե Շվեյցարիայի լեռներից մեկի վրա: Այնտեղ մինչև անգամ ամառվա տաք որերին հանկարծ ձյուն, կարկուտ ե գալիս, բուք ու բորան ե լինում ու ճանապարհորդներին տակոյն ա-նելով՝ խեղդում ե: Ապաստարանում պահում են այդ խելացի մեծ շներին ու նրանց միջոցով ազատում մոլորվածներին:

Այ, թե ինչ ե պատմում մի փոքրիկ ճանապարհորդ:

— Յես հորեղբորս հետ գնացի Բերնար: Ժանապարհին տեսանք այդ ուժեղ, գեղեցիկ, մեծ-մեծ շներից միքանիսին: Նրանց վզերից կախած ելին զանազան ուտելիքներ ու խմիչքներ:

Նրանք ժայռերի, ձորերի և ձյունների մեջ ման ելին գալիս, վոր մոլորված ճանապարհորդներին կամ ձյունի տակ մնացողներին ազատեն և ապաստարան առաջնորդեն:

Մենք ապաստարանում ելինք, յերբ մեկ ել մի շուն ներս ընկավ և հաջալով հասկացրեց, վոր ոգնության կարիք կա: Մենք դուրս յեկանք ու գնացինք նրա յետևից: Խելացի կենդանին առաջ ընկած՝ հաջալով գնում եր ու մեկ-մեկ մեզ եր նայում, վոր տեսնի, թե իրեն հետևում ենք, թե վոչ:

Բավական տեղ անցնելուց հետո նա կանգնեց մի բլրի մոտ ու թաթերով ձյունը յետ արեց: Մենք նրան ոգնեցինք: Ձյունը մի կողմ արինք և յերկու մարդ տակից դուրս բերինք: Խմիչքներ տալով, մարմինները շփելով, ուտեցնելով՝ մի կերպ նրանց ուշքի բերինք ու վերադարձանք ապաստարան:

Դեռ չելինք հանգստացել, վոր մի այլ շուն հաջելով ներս ընկավ, նրա յետևից ել մի կին: Սա արտասովոր պատմում եր, վոր իր տաս տարեկան վորդին ձորից ներքե գլորվեց ձյունների մեջ և ել չերկաց: Բայց յերկու ժամ չեր անցել, վոր ապաստարանի սպասավորներից մեկը շան հետ միասին ներս մտավ ու կորած վորդուն հանձնեց իր մորը:

Այս շների մասին մեզ շատ բաներ պատմեցին: Նրանցից մեկը՝ Բարբին, նույնիսկ քառասուն մարդ եր ազատել և դրա համար շքանշան ստացել:

ՅԱՆԿ

ՊՐԱԿ Ա.

Եջ.

1. Նորից միասին, նորից աշխատանքի	3
2. Ամառ	4
3. Պապի քուրքը	4
4. Սար գնալը	8
5. Հրապարակում	10
6. Ուռնու հյուրերը	11
7. Պիտներնիքը ճամբարում	11
8. Ճամբար	14
9. Չորակի միջով	14
10. Պիտներական քաղերգ	15
11. Դպրոցականների հունձը	15
12. Աշուն	17
13. Աշուն	17
14. Աշուն	18
15. Դաշտ	18
16. Տերևաթափ	18
17. Ձմեռվա զեմ	19
18. Գյուղացին և ծառը	20
19. Խոտ հարելու մեքենան	20
20. Բամբակի քաղհանը	22
21. Աշունն արտերի մոտով	24
22. Յերեք մշակութուն	25
23. Տրակտոր	26
24. Կարտոֆիլը	28
25. Բոստան	31
26. Աչի	32
27. Գինի պատրաստելը	32
28. Ծառատունկերի փաթաթելն ու աչիներին թաղելը	33
29. Հովվի դարձը սարից	36
30. Կոստանի արտը	36
31. Բամբակի հավաքը	39
32. Քաղցրն ու թթուն	40
33. Քյուրդ Ջասըմի պատմությունը	42
34. Ծերուկ Տիլլաբալը և լերկգլխանի թռչունը	46
35. Բանվորների պայքարը ու ժամվա համար	48
36. Բանվորուհու որորը	49

Եջ

37. Պատանի մեքենավարը	50
38. Ժամացույց	52
39. Ինտերնացիոնալ	53
40. Կոմունիստական Ինտերնացիոնալ	54
41. Պրոլետարիատի միջազգային համերաշխությունը	55
42. Ինչ է Մոսկովը	56
43. Չինաստանում	57
44. Չին մանուկը	57
45. Չմեռ	58
46. Չմեռ	58
47. Կարև ամուսնությանը	59
48. Տնայնագործությունը գյուղում	62
49. Ինչպես ելին ապրում նախամարդիկ առանց վարուցանքսի	65
50. Խաչոյի տունը	66
51. Ինչպես եր գյուղացու տունը	68
52. Կոխը	69
53. Գելը	70
54. Յերկաթուղու մուտքը մեր ձորերը	73
55. Գյուղը	75
56. Մեր գյուղխորհուրդը	76
57. Ռադիոն Ծառուտ գյուղում	78
58. «Մաճկալ» թերթի թղթակիցը	80
59. Կոմիտեն	82
60. Դպրոցական տունը	84
61. Դպրոցական թանգարանը	85
62. Տերտերի խաբեղալուծությունը	87
63. Ինչ է կոոպերացիան	89
64. Ո՛վ է պատանի պիտները	90
65. Պիտներական չերգ	91
66. Մեր ընտանիքը	92
67. Սղոյան	92
68. Նեսոյի քարաբաղնիսը	94
69. Ժողովրդական առողջապահության գործը մեզանում	96

70. Դալլաք Գրեգորը	96
71. Գյուղի հեքիմը	99
72. Լենինի մանկությունը	101
73. Վալդիսա Ուլլանովը Ինչպես դարձավ վլադիմիր Իլյին Լենին	103
74. Իլյինն ու պատանեկությունը	105
75. Լենինի մահը	106
76. Վ. Ի. Լենինի թաղումը	106
77. Կենդանի արձան Լենինին	108
78. Հունվարի 9-ը	111
79. Հանդարտ, ընկերներ	113

ՊՐԱԿ Բ.

89. Բամբակագործ գործարանում	3
90. Տեքստիլ գործարանը	4
91. Թղթե տոպրակի պատմությունը	5
92. Ինչ պատմեց կաշին	8
93. Աղահանքում	9
94. Շախում	11
95. Ինչ պետք է իմանալ գործարան եքսկուրսիա գնալիս	11
96. Նորագույնի Սիմոնը	13
97. Գարուն	15
98. Գարուն	15
99. Արագիլ	16
100. Պիտներական գարուն	16
101. Ծառատունկի ուրը	17
102. Սարգարաբատի ջրանցքը	20
103. Շիրակի ջրանցքը	23
104. Հաջողվեց	26
105. Սեանա լիճը	28
106. Առուն	29
107. Մանուկն ու ջուրը	30
108. Համերգ	31
109. Ջրի առաջ թումբ կապելը	33
110. Սեյալը	34
111. Յերկանի հիդրո-էլեկտրակայանում	36
112. Լուսինը	40
113. Ելեկտրիֆիկացիա	40

80. Կարմիր-բանակայինի քայլերգ	113
81. Ինչպես նախամարդը հրահան գտավ	114
82. Առաջին գործիքը	115
83. Գրքի տպագրությունը	117
84. Սղոցարանում	120
85. Չուգունի և լերկաթի գործարանում	121
86. Դարբիններ	125
87. Յերալյաներ	126
88. Բամբակի յուղի գործարանում	127

114. Աներեույթ թշնամի	42
115. Խնձորենու պատվաստումը	44
116. Աշխատանքներն աչում	46
117. Բատրակ Սեթոն	52
118. Սիմոնի արտը	54
119. Ինչպես մեր գյուղում կոլտնտեսություն հիմնվեց	56
120. Մեր հարեանի վորդին	61
121. Սերմնացան	63
122. Գութանի լերգը	64
123. Մալխաչան լերգը	64
124. Մալխի մեկը Արևմուտքում	65
125. Մեր մալխ մեկը	65
126. Յերեխաներն ազատեցին	66
127. Կարմիր կակաչը	69
128. Գեղեցիկ ուրը	71
129. Առաջագրություն գյուղը հետազոտելու համար	75
130. Եքսկուրսիայի ժամանակ կայարանում ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել	79
131. Պոստային աղամիրներ	79
132. Թռչունները գարնանը	82
133. Կունկն ու սագը	83
134. Անբախտ ճնճղուկները	84
135. Պետիկը քաղաքում	86
136. Կրկեսում	89
137. Մարգարը քաղաքում	91
138. Ելեկտրական լամպը	97

139. Ստեփանը	101	147. Թավամազ մեղուն	1
140. Ազատվեցին	104	148. Գարո բիձու շերամապա- հուծիկները	1
141. Կոշիկ սրբող Թոմասը	108	149. Մետաքսե թաշկինակը	1
142. Աշխատանքի Պաշտպանու- թյունը	109	150. Շերամ	1
143. Յերեխաններն ինչպես ելին աշխատում կապիտալիստ- ների համար շատ տարի- ներ առաջ	113	151. Ով աշխատի—նա կուտի	1
144. Զյուն, ձյուն	116	152. Շունն ու խոզը	1
145. Անապատառներն	118	153. Սար գնալը	1
146. Վորբը	119	154. Քոչը	1
		155. Կենդանիների հոտոտելիքը	1
		156. Շների մասին	1



ՀՀ Ազգային գրադարան



NL0241780

9028